

Գրիգոր Տաթևացի Մեկնությունն Սողոմոնի Առակների

Եռամեծ փիլիսոփայ եւ քաջ դիտապետ Յովհան Ռոտունեցու աշակերտ Գրիգոր Տաթևացու համառօտ ծաղկաքաղը Սողոմոնի Առակների գրքից եւ մեծ Ներսէսի¹ լուսաւոր խօսքերից: Օգնիր Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ:

Հարց. Ինչո՞ւ էր Սողոմոնը եւ միւս մարգարէները եւ Տէրը Աւետարանում առակներով խօսում:

Պատասխան. Երեք պատճառով: Նախ, որ առակը պիտանի է խօսքին եւ վկայ հաստատութեան: Երկրորդ, որովհետեւ առակը յայտնի է սիրելիներին, իսկ օտարներից ու անարժաններից՝ ծածկուած, ըստ այնմ որ. «լսելով կլսեն եւ չեն իմանայ եւ այլն» (Ես 6.9): Երրորդ, որովհետեւ ինչպէս երեւացող բաներին նայելով աներեւոյթներն ենք ճանաչում, այնպէս էլ երեւացող օրենքն ու խօսքը լսելով, մտքի մէջ աներեւոյթներն ենք ճանաչում:

Քանզի խօսքը երեք կերպ է լինում, այսինքն, սովորական խօսք, առակաւոր խօսք, իմաստութեան խօսք: Արդ հասարակը ամէն մարդու խօսքն է, առակաւորը՝ նրանը, ով աշակերտեց եւ իմաստութեան խօսքը՝ իմաստուններինը:

Հարց. Ի՞նչ է առակը եւ ի՞նչ է օրինակը:

Պատասխան. Առակը խօսքով է, իսկ օրինակը՝ իրօք: Դարձեալ, առակը գործին է վերաբերում, ինչպէս տեսակներ ստեղծելուն եւ պարունակելուն, իսկ օրինակը՝ ձեւին, ինչպէս քանակին ու որակին այն բաների, որոնք համեմատուում են:

Հարց. Ինչո՞ւ Սողոմոնները եւ առակները չափածոյ են:

Պատասխան. Սաղմոսը երգ է, դրա համար էլ չափածոյ է, իսկ Առակները խրատ են մանկանց, որի համար էլ չափածոյ են եւ հեշտալուր: Պէտք է գիտենալ, որ գրուածքները չորս տեսակի են բաժանուում. կայ, որ խօսքը երկար է, իսկ միտքը՝ չափածոյ, ինչպէս Մովսէսինը, որ թանձրամիտ ժողովրդին էր խօսում: Կայ, որ խօսքը չափածոյ է եւ միտքը երկար, ինչպէս Յոբինը, Սաղմոսները եւ Երգ Երգոցը: Կայ, որ խօսքը եւ միտքը չափածոյ են, ինչպէս Առակները եւ Սիրաքը, քանզի խրատական են: Կայ, որ խօսքը եւ միտքը երկար են, ինչպէս Եսային եւ այլ մարգարէները: Պէտք է իմանալ նաեւ, որ Սողոմոնի երեք գրքերը խրատ են մարդու երեք հասակի համար. Առակները՝ պատանիներին, ժողովողը՝ երիտասարդներին, իսկ Երգ Երգոցը՝ ծերունիներին: Դարձեալ, Առակները սովորեցնում են մեզ բարոյական առաքինութիւնները, ժողովողը՝ ստացականները եւ երգ Երգոցը՝ աստուածայինները Դարձեալ, Առակները արտաքին սրահն է, միւսը՝ Սրբութիւնը եւ Երգ Երգոցը՝ Սրբութիւն Սրբոցը: Եվ դարձեալ, Առակներով գալիս ենք հաւատի իմաստութեանը, աշխարհի ունայնութիւններով՝ երկնաւոր յոյսին, եւ Երգ Երգոցով՝ Աստծու անախտ սիրոյն: Քանզի եթէ ոտնակոխ անենք մարմնի կամքը եւ հեռանանք աշխարհից, կկարողանանք սուրբ սրտով սիրել Աստծուն:

Հարց. Ի՞նչ է իմաստութիւնը, որ ասում է. ճանաչել իմաստութիւնը (Առ 1.1):

Պատասխան. Իմաստութեան անունը բազում տեսակներով է բացատրուում եւ այն, ինչ սրանցից է, մտքի քննութեան ներգործութիւնն է, եւ ոչ զգայարանների: Նախ, ասում է նրանց իմաստութիւնը, ովքեր էականի բնութիւնը քննեցին, այսինքն երկնքի եւ երկրի, ինչպէս յունաց իմաստունները: Երկրորդ, ասում է զանազան արուեստների իմաստութեան իմաստութիւնը, ըստ այնմ թէ. «Ո՞վ տուեց կանանց նկարակերտութեան իմաստութիւնը» (Յոբ 38.36): Երրորդ, ասում է բնական բանականութեան իմաստութիւնը, ովքեր խօսքերից տեղեկանալով ընտրում են ստոյգը ստից: Չորրորդ, կատարեալ եւ անհամեմատ իմաստութիւնը՝ աստուածային լույսով հպուելու հոգեւոր եւ իմանալի կեանքին, մերկանալ մարմնական կեանքից եւ ունենալ սէր առ նա: Այս իմացումը Տէրը հաւատ է անուանում եւ Յովհաննէս աւետարանիչը՝ լոյս, իսկ սա՝ իմաստութիւն:

Հարց. Ի՞նչ է հանճարը:

Պատասխան. Հանճարը կարծիք է կապուած ուղիղ խորհրդի հետ: Եւ ստուգաբանում է. հանճար, այսինքն անհնար է չլինելը, այլ ամէն դէպքում լինելու է: Եւ հանճար է ասում, քանի որ ապագայի մէջ է նրա աւարտը, ինչպէս մահը, քանի որ անճար է եւ ակամայ է պատահում: Իսկ հասակով եւ իմաստութեամբ անհանճարները արհամարում են մահուան եւ հանդերձեալ օրուայ խրատը, քանի որ այդ օրը դեռ չի վրայ հասել: Իսկ ովքեր ունեն ուղիղ խորհուրդ, գիտեն, որ կայ Աստուած եւ երկնաւոր կեանք, եւ յետմահու յարութիւն եւ հատուցում բարի ու չար գործերի: Իսկ կարծիք է ասում, քանի որ չի երեւում զգայարաններով, ինչպէս արեգակի լոյսը եւ միւթերի ձեւերը եւ գոյերի տեսակները:

Հարց. Ի՞նչ է նշանակում խօսքի դարձուածքները ընկալելը (Առ 1.3):

Պատասխան. Խօսքի դարձուածքները պատասխանին է վերաբերում, այսինքն ինչ որ պէտք է աշակերտին. միայն լսել խրատողին եւ դիւրահաւան լինել, ինչպէս Եւան օձի խրատին, սակայն պէտք է դարձեալ հարցնել եւ քննելով ստոյգն իմանալ, ինչպէս կոյս Մարիամ Աստուածածինը: Քանզի հրեշտակի խօսքերից խռովեց. քանի որ այր մարդ չեմ ճանաչում, ասաց (Ղուկ 1.34): Իսկ հրեշտակից ընդունելով խօսքի դարձուածքը, թէ Աստծու գործ է եւ Նրա կամքով, հաւանեց՝ բազում օրինակներով տեսնելով ավելի առաջ եղած գերբնական գործերը: Նոյնպէս եւ դու, ով մանուկ, երբ խրատողը քարոզի քեզ թէ. մի՛ խճողիր որովայնդ, մի՛ պճնուիր զգեստներով, մի՛ ցանկացիր օտար գեղեցկութեան. այնժամ մտքիդ մէջ տարակոյս մի՛ պահիր, թէ ինչո՞ւ չուտեմ եւ չզարդարուեմ եւ չցանկանամ, երբ բնութիւնս պահանջում է՝ դրանով արհամարհելով խրատողի խօսքը: Այլ ի՞նչ անել. հարցրու՛ նրանից պատճառը, թէ ինչո՞ւ ես հրամայում այդ, եւ նա կարող է խօսքի դարձուածքով ճշմարիտ արդարութիւնը քեզ ուղղել: Այսինքն, թէ երբ սակաւ ուտես, միտքդ սուրբ կմնայ, եւ զգեստի փոխարէն լուսեղէնն է քեզ պատրաստուած, եւ ախտաւոր ցանկութեան փոխարէն Քրիստոս է բնակուում քո մէջ: Եւ կհամաձայնես, թէ սա գերագոյն է, քան միւսը, եւ արդարութիւնը կուղղես դէպի քեզ:

Հարց. Ի՞նչ է նշանակում արտաքին իմաստուններից մէկի խօսքը թէ. միայն իմաստասէրի հոգին է անմահ:

Պատասխան. Այսինքն, առանց վարժանքի եւ կրթութեան առաքինութիւն հնարաւոր չէ ստանալ, որով հոգին ապրում է յաւիտեան:

Հարց. Ինչո՞ւ է ասում «ով հանձարեղ է, առաջնորդութիւն ստանայ» (Առ 1.5):

Պատասխան. Չորս պատճառով: Նախ, որովհետեւ ասուած խօսքերը կարող են գործով ցոյց տալ եւ բարի օրինակ լինել: Երկրորդ, որպէսզի ուրիշներին հաւանութեան բերեն իրենց հանձարով՝ ողորջելով կամ սաստով: Երրորդ, որպէսզի պատշաճ դատաստան անեն: Չորրորդ, որպէսզի հասկանան առակները եւ խորին խօսքերը, իմաստունների ճառերը եւ նրանց առակները, ինչպէս ասում է հետագայում: Եւ պէտք է իմանալ, որ Սողոմոնը տասը տեսակի օգուտ յայտնեց խրատողների ուսման մէջ: Նախ, որ ասում է. ճանաչել իմաստութիւնը եւ խրատը: Երկրորդ, իմանալ հանձարը: Երրորդ, սովորել խօսքի դարձուածքները: Չորրորդ, հասկանալ ճշմարիտ արդարութիւնը: Հինգերորդ, ուղղել իրաւունքը գործով: Վեցերորդ, խորագէտ լինել, այսինքն, հեռաւոր բաները իմանալ: Եօթներորդ, միտք եւ հանձար ստանալու համար: Ութերորդ, իմաստունն աւելի իմաստուն լինի: Իններորդ, հանձարով առաջնորդ լինի: Տասներորդ, թափանցել առակների եւ իմաստունների խորին ճառերի մէջ:

Ահա այս բոլոր օգուտները վարդապետից է լինում աշակերտներին:

Երկիւղի մասին հարցում. Ինչո՞վ են տարբերվում ծառայական եւ որդիական երկիւղը:

Պատասխան. Ծառայական երկիւղը պատժին է նայում՝ մեղքի պատճառով: Իսկ որդիական երկիւղը՝ երեսի պատկառանքին: Դարձեալ, որդիական երկիւղը նայում է մեղքի սկզբնաւորութեանը, իսկ ծառայականը՝ վերջաւորութեանը, տանջանքի պատճառով: Դարձեալ, ծառայական երկիւղը համեմատուում է հաւատի հետ, վարձկանականը՝ յոյսի հետ, եւ որդիականը՝ սիրոյ հետ: Եւ սրանք բոլորը բարի երկիւղ են կոչուում: Այլ է վատթար եւ չար երկիւղը, որ պաշարուած է սնուտի բաներով, եւ վախենում է այնտեղ, ուր երկիւղ չկայ: Այն է, որ ասում է. «վախեցայ եւ թաքցրի քանքարը» (Մատթ 25.25): Այդպիսի վատթար երկիւղը կապուած է յուսահատութեան եւ թուլութեան հետ, ինչպէս որ բարի երկիւղը՝ արիութեան եւ յոյսի: Քանզի յոյսը եւ արիութիւնը ցասման բարիքներն են, իսկ յուսահատութիւնն ու թուլութիւնը՝ նրա վատթարութիւնը³:

Հարց. Ի՞նչ է նշանակում. «լսիր, որդեակ, հօրդ խրատը եւ մի մերժիր մօրդ պատուիրանը» (Առ 1.8):

Պատասխան. Մեր Հայրը Աստուածն է, որ ծնեց մեզ կենդանի յոյսի համար, եւ խրատում է մեզ բազում դաստիարակների միջոցով, որ կան Եկեղեցում, այսինքն Սուրբ Գրքերով եւ վարդապետներով: Իսկ մեր Մայրը նոյն ինքը Եկեղեցին է, ըստ առաքեալի. «ազատ Վերին Երուսաղեմը, որ մեր բոլորի Մայրն է» (Գաղ 4.26): Իսկ սա օրէնք է դնում հայրապետների ձեռքով կրտսեր որդիներին: Գլխի շնորհաց պսակը (Առ. 1.9) Քրիստոսի հետ թագակից լինելն է, ըստ այն խօսքի, թէ. «ծառայ չենք, այլ որդի, Աստծու ժառանգ եւ Քրիստոսի ժառանգակից» (Հռ 8.17): Այս բանը մեզ շնորհում է երկնաւոր Հայրը ըստ Եսայու. ընդունեցէք վայելչութեան թագը Տիրոջ ձեռքից (Ես 62.3): Իսկ մանեակ ոսկին, որ լանջագեղ կամարն է, անապական կենաց յոյսն է՝ մեր սրտում հաստատուած, որ տուեց մեր մայրը Սուրբ Եկեղեցին, քանզի անապական է ոսկու բնոյթը:

Հարց. Ի՞նչ է նշանակում. «իմաստութիւնը զովաբանուում է ճանապարհների վրայ» (Առ 1.20):

Պատասխան. Սա նախ պէտք է հասկանալ առ Քրիստոս իմաստութեան վերաբերեալ, ըստ այնմ. «Քրիստոս Աստծու զօրութիւնն ու իմաստութիւնն է» (Ա Կոր 1.24), որ ելաւ Հօրից, դէպի մեզ

ճանապարհորդեց իր մարդեղութեամբ, եւ հրապարակներում յայտնապէս քարոզեց աստուծայաշութեան ծանօթութիւնը: Դարձեալ, իմաստութիւն է նախ, ճանաչել Աստծուն, թէ կայ Աստուած: Երկրորդ, թէ տալիս է հանգիստ՝ բարիներին եւ տանջանքներ՝ չարերին: Երրորդ, նոյն բանը միշտ խոկալ եւ երկնչել պատժի պատճառով եւ հանգստեան համար սիրելի Աստծուն: Չորրորդ, իմանալ, որ Աստծուց տրուած օրէնքները օգնական են մեր բնութեանը, եւ հրաժարելիներից փախչել եւ յանձնառելիները կատարել: Իսկ նրանք, որ իրենց մէջ ունեն այս իմաստութիւնը, գովաբանում են Աստծուց, հրեշտակներից եւ մարդկանցից: Աստծուց գովաբանում են ինչպէս Յոբը, հրեշտակներից՝ ինչպէս Դանիէլը, մարդկանցից՝ ինչպէս բոլոր սուրբերը: Իսկ ճանապարհը այս կեանքի ընթացքն է ծնունդից մինչեւ մահուան կէտը: Դարձեալ, ճանապարհ կարելի է պարզ կերպով հասկանալ, որպէս նա, որ ողորմում է, ողորմութիւն կգտնի, հեզ լինի, որպէսզի ժառանգի երկիրը (Սաղմ 36.11), եւ այլն:

Հարց. Ի՞նչ է նշանակում. «ինչպէս մրրիկ կգայ ձեր վախճանը» (Առ 1.27)

Պատասխան. Օրհասական մահուան մասին է խօսքը ըստ նրա եօթը հատկութիւնների: Նախ, քանի որ մրրիկը յանկարծակի է, նոյնպէս եւ մահուան օրը չգիտենք: Երկրորդ, ի վերուստ է հարուածում. նոյնպէս եւ Աստծուց է մահուան հրամանը: Երրորդ, ուժգին է մրրիկը, նոյնպէս եւ ցամաքի է տարածւած մահը: Չորրորդ, պատուելով է շրջում, նոյնպէս եւ մահուանից ոչ ոք չի կարող փախչել: Հինգերորդ, թանձրանում է մրրիկը, նոյնպէս եւ խաւարեցնում մահը եւ մութը: Վեցերորդ, կործանող է մրրիկը, նոյնպէս եւ մահը սուգում է մարմինը գերեզմանի մէջ: Եօթերորդ, շարտում է մրրիկը, նոյնպէս եւ մահը հոգին ակամայ նետում է դէպի հանդերձեալ կեանքը:

Հարց. Ի՞նչու է առակների մէջ ասում. «ձեր սատակման օրը գուցէ կանչեք ինձ, բայց ես ձեզ չեմ լսելու» (Առ 1.28): Իսկ Տէրը տնտեսի առակում ասում է. ազատեց պարտքից (Ղուկ 16.8), եւ այրու աղաչանքից դրդուած տալիս է նկանակը (Մատթ 15.28), եւ մարգարէն ասում է. «կկանչես ինձ նեղութեան օրը եւ ես կփրկեմ քեզ» (Սաղմ 80.8):

Պատասխան. Միմեանց հակառակ չեն միեւնոյն Հոգուց խօսուած առակը, Աւետարանն ու մարգարէն: Նախ, այսպէս էին հասկանում, որ առակը երեք կերպ է ներկայացնում չարերի պատիժը: Առաջին, մարմնաւոր դատաւորներից կրած նեղութիւններ: Երկրորդ, կործանում մահուան մրրիկի մէջ: Երրորդ, սատակում անվախճան հրոյ մէջ, որ ասում է. «գնացէ՛ք, անիծեալներ, դէպի յաւիտենական հուրը» (Մատթ 25.41) եւ իրաւամբ կփակուի այնտեղ դուռը, ինչպէս յիմար կոյսերի առաջ (Մատթ 25.10): Երկրորդ, ասում ենք, թէ սպառնական է այս խօսքը, ինչպէս ասաց՝ ծիծաղել կորստեան վրայ (Առ 1.26), եւ այստեղ, թէ՛ չեմ լսի ձեզ: Տէրը ասում էր նաեւ, թէ Սողոմացիներին աւելի հեշտ կլինի, քան այն քաղաքին, որ այժմ ձեզ չեն լսի (Մատթ 11.24): Երրորդ, ասում ենք, որ չլսելը մարմնաւոր մահուան մասին է ասում, ինչպէս որ Աքարը մեղայ ասելով, չազատուեց (Յեսու 7.20): Իսկ Տէրը զղջացողին ներում է մեղքերը մինչեւ վերջին շունչը, ինչպէս աւազակին (Ղուկ 23.43): Չորրորդ, Սողոմոնը ըստ հին օրենքի է ասում, իսկ Տէրը՝ ըստ նոր շնորհի: Հինգերորդ, Սողոմոնը արդարութեան կշիռն է ակնարկում, իսկ Տէրը՝ Աստծու ողորմութեան կշիռը: Վեցերորդ, տարբեր է ամբարիշտների եւ չարագործների մահը, որ առակն է ասում, եւ հաւատացեալ ու մեղաւոր մարդկանցը, որոնց ներում է, երբ զղջում են ըստ դաւանութեան: Յայտնի է, որ Տէրը երեք նկանակ տուեց որպէս դաւանութիւն սուրբ Երրորդութեան (Ղուկ 11.5): Եօթերորդ, ըստ զղջման տեսակի, քանի որ մէկը կեանքում ունի կամաւոր մեղքեր եւ ակամայ զղջում՝ մահուան ժամանակ. իրաւամբ սրան չի լսի Տէրը: Մէկ ուրիշը ունի ակամայ մեղքեր եւ կամաւոր զղջում, իրաւամբ կների սրան Տէրը, ինչպէս անիրաւ տնտեսին: Եւ ոչ միայն այս, այլեւ կատարեալ զղջումը փրկում է մահուանից, ինչպէս յայտնի է Եզեկիայի պատմութիւնից (Ես 38.5) եւ Նինուեացիներից (Յովնան 3.10): Ութերորդ, կրկնակի է Աստծու պատուհասը, այսինքն խրատ եւ վրէժ: Խրատը որդիների եւ սիրելիների համար է, քանզի Տէրը ում սիրում է՝ խրատում է եւ այլն (Եբր 12.6, Բ Օր 8.5), իսկ վրէժը՝ օտարների եւ ատելիների: Եւ խրատը հանգչում է ներման եւ ողորմութեան մէջ, որի համար լսում է Աստուած եւ փրկում, իսկ վրէժը՝ բարկութեան եւ սրտմտութեան, որի պատճառով չի լսում Աստուած. քանզի հենց այս է նշանակում՝ «որք կաղաղակէք բայց ես չեմ լսելու» (Առ 1.28): Իններորդ, խրատը երկու մաս ունի, այսինքն սպառնալիքը եւ իրագործումը: Սպառնալիքը խօսքով է, որ Իսրայելի մարգարէներն էին բերում, իսկ իրագործումը՝ կեանքում, որ նրանց գերողներն էին կատարում: Եւ դարձեալ, սպառնալիքը այս կեանքում է, երբ Աստուած լսում է, իսկ իրագործումը՝ հանդերձեալում է, երբ չի լսում, քանզի անցել է ժամանակը եւ անօգուտ է աղաղակելը: Մանաւանդ, որ այս բանը առաւել յայտնի է զղջումից, քանի որ երեք դէպքում է, որ կայ զղջում: Նախ, երբ մէկը ապաշխարում է իր մեղքերի համար, երկրորդ, երբ մօտենում է իր վախճանին, եւ երրորդ, վախճանից յետոյ են զղջալու մեղքերի համար, ասում է Սողոմոնը (Առ 2.19): Արդ, առաջին զղջումը կատարեալ է եւ կամաւոր, իսկ վերջինը՝ անկատար եւ ակամայ, դրա համար էլ ներում չեն գտնում այդպիսիները: Իսկ միջինը, որ մահամերձ վիճակում է արւում, լինում է եւ՝

կամաւոր, եւ՝ ակամայ՝ մահուան տանջանքների պատճառով: Եւ այն, որ կամաւոր է, ներելի է, իսկ որ ակամայ է՝ ոչ: Իսկ տնտեսի մասին (Ղուկ 16.6) պէտք է իմանալ, որ ձէթի կէսը շնորհեց, իսկ ցորենինը՝ հինգ մասից մէկը: Պատճառն այն է, որ մտքի մեղքը ավելի հեշտ է քաւել, որ աւելի դիրասահ է, քան մարմնաւորը, որ հինգ զգայութիւններով է գործուում: Նաեւ մկրտութիւնից յետոյ յանցանք գործելը հեշտութեամբ է ներուում, քան Քրիստոսի մարմնին հաղորդուելիս: Եւ իմացիր մեղքերի գործի մասին, որ կարողականութեամբ մեր մէջ է, եւ նրա յիշատակը՝ Աստծու արդարութեան մէջ, իսկ պատիժը՝ գեհեմի տանջանքներում: Իսկ մեղքը քաւուում է սրտի զղջումով եւ բերանի խոստովանութեամբ (Հռ 10.9) եւ գործերի հատուցմամբ: Արդ, մեր զղջումը քաւուում է մեղքերի յիշատակը, քանի որ մեր զղջալով Աստուած թողութիւն է տալիս մեղքերին, խոստովանելը հեռացնում է մեղքի կարողականութիւնը մեր միջից, եւ ապաշխարանքը վերացնում է դժոխքի տանջանքները: Ուստի տնտեսի պարտքը շնորհելը պէտք է մասնակի պատիժը հասկանալ, եւ ոչ միայն մեղքերի կարողականութիւնը եւ յիշումը հեռացնելը: Այսքան այս մասին:

Հարց. Ի՞նչու է ամէն տեղ ասում որդեակ եւ ոչ որդի:

Պատասխան. Չորս պատճառով: Նախ, որովհետեւ գորով ունի խրատը լսողների հանդէպ: Երկրորդ, ցոյց է տալիս, որ մանուկ են հասակով եւ իմաստութեամբ: Երրորդ, սիրուց է այս կոչումը, ինչպէս եւ զաւակ անունը: Չորրորդ, նկատի ունի շնորհով որդիներին, որոնք խրատի եւ Հոգու որդիներ են, որոնց թէ՛ Աստծո պատգամներն է խօսում, թէ՛ ինքն է խրատում:

Հարց. Ի՞նչ է նշանակում. «որդեակ, եթէ իմ պատգամներն ու պատուիրանները ընդունես, պահիր դրանք հոգուդ մէջ» (Առ 2.1):

Պատասխան. Հէնց այն, ինչ որ նաեւ Տէրն է ասում. «թէ՛ ողորմութիւն անես, թէ՛ աղօթք կամ պահք, մարդկանց ցոյց տալու համար մի արա, այլ քո Հօրը ծածկապէս, եւ նա կհատուցի քեզ յայտնապէս» (Մատթ 6:4): Նոյնպէս եւ սա կամենում է աշակերտներին մարդահաճութիւնից հեռացնել:

Հարց. Ի՞նչ է նշանակում. «վա՛յ նրանց, ովքեր ուղիղ ճանապարհը թողած, կզնան խաւարի ճանապարհով» (Առ 2.13):

Պատասխան. Վա՛յ բառը այն բաների մասին ենք ասում, որոնց ձգտելով չենք հասնում, շրջուում եւ ապաշաւում ենք կրած վնասի վրայ: Նմանապէս սա խօսքը աջ կողմի իրերից դարձնում է ձախ կողմիներէ վրայ: Եւ քանի որ չեն լսում, ապաշաւում է նրանց կորուստը, ինչպէս ասենք, տեսնող մէկը կոյրին տեսնելով քարանձաւի վտանգների միջով ընթանալիս, ծայն է տալիս նրան յետ դառնալ, իսկ նա չլսելով կորչում է. եւ նա ոչ թէ ակամայ կորաւ, այլ կամաւ, քանի որ կարծում էր, թէ իր ճանապարհը ուղիղ էր եւ կանչողին չէր հաւատում: Նոյնպէս եւ չարերը, որոնք խաւար կեանքով են ապրում, կարծելով թէ այս է միայն բարի, եւ այլ կեանքի չեն հաւատում: Դրա համար էլ քարոզողին չեն լսում, եւ չեն դառնում մեղքերից: Բայց պէտք է գիտենալ, որ ամէն խրատական խօսք երկու կերպով է որոշուում, այսինքն, լսողներին եւ արհամարողներին: Այս բանը եւ Տէրը նշանակեց, ասելով. մի մարդ երկու որդի ունէր. մէկը լսեց, եւ միւսը չլսեց (Մատթ 21.28): Եւ դարձեալ. եթէ մէկը լսի իմ խօսքերը եւ կատարի, նման է իմաստունի, իսկ նա, որ չի լսում, նման է յիմարի (Մատթ 7.24): Նոյնպէս եւ սա խրատում է մերթ ընդ մերթ ասելով. որդեակ մի՛ զնա չարերի ճանապարհով եւ թող չխաբեն քեզ, եւ իմաստուն եղիր եւ այլն: Եւ երբեմն էլ խօսքը ուղղում է խրատները արհամարողներին ասելով. «թիր են նրանց ճանապարհները եւ կամակոր են նրանց շաւիղները եւ այլն» (Առ 2.15):

Հարց. Ի՞նչ է նշանակում. «ով երիտասարդ ժամանակ թողել է ուսումը եւ մոռացել Աստծու ուխտը» (Առ 2.17):

Պատասխան. Մանկական հասակը մեղքի փուլ չի պարունակում. ընդունում է ամէն խրատ եւ անմոռաց պահում: Իսկ երբ չի վարժուում խրատներով, հասակն աճելուն զուգընթաց, աճում են նաեւ ախտերը: Այդ ժամանակ անձնիշխան կամքով հետամուտ է լինում ախտին եւ այլեւս չի հաւանում աստուածային ուխտին եւ պատուիրաններին: Սա հրէաների ուխտի մասին է ասում, որն ասում է. բոլոր պատուիրանները պահելով կօրհնուի դաշտում քո արջառը եւ քո ոչխարը (Բ Օր 7.13): Իսկ մեզ Տէրը Աւետարաններով օրհնեց, որ ասում է. «իմ Հայրը ինձ ուխտեց արքայութիւն եւ ես ձեզ եմ խոստանում, որպէսզի բազմէք տասներկու գահերի վրայ» (Ղուկ 22.29): Իսկ այս ուխտը անմոռաց կպահեն նրանք, ովքեր մանկութիւնից Սուրբ Գրքերին են հետեւում, ըստ այն խօսքի, որ գրում է առաքեալը աշակերտին, թէ. «մանկուց գիտես Սուրբ Գրքերը, որոնք կարող են իմաստուն դարձնել քեզ» (Բ Տիմ 3.15):

Հարց. Ի՞նչ է նշանակում. «չեն ապրելու իրենց կեանքի տարիները» (Առ 2.19):

Պատասխան. Մեղաւորների համար է ասում, որ չեն հասնի անմահ կեանքին, այլ կկոծեն երկրի վրայ ըստ Աւետարանին, երբ տեսնեն Քրիստոսին փառքով երկնքից եկած եւ արդարները ընդառաց զնացած (Մատթ 24.30): Եւ տարին թողութեան եւ ազատութեան տարին է: Նոյնպէս է եւ այն օրը

արդարների համար: Եւ դարձեալ, երբ տարին լրանում է, այնժամ իւրաքանչիւր բոյս տալիս է իր պտուղը, որը Ղաւիթը տարուայ պսակ է անուանում (Սաղմ 64.12): Նոյնպէս եւ այն օրը կեանքի շրջապտույտի լրումն է, եւ ամէն մարդ ըստ իր գործերի կպսակուի:

Հարց. Ինչո՞ւ է ասում. «թող ողորմութիւնն ու հաւատքը քեզանից չպակասեն» (Առ 3.3):

Պատասխան. Ողորմութիւնը ցաւակցութիւն է բնութենակիցների հանդէպ: Եւ եթէ հաւատում ենք դրան, փոխարէնը ստանում ենք Տիրոջից: Ղարձեալ, հաւատք ասելով աղօթքը նկատի ունի, ըստ այն խօսքի. «ինչ որ խնդրէք աղօթքի մէջ հաւատով կստանաք» (Մատթ 21.22): Ղարձեալ, այս երկու բաներով է առաքինանում մարդը, քանզի ողորմութեամբ վարժուում ենք ընկերոջ հանդէպ սիրուն, իսկ հաւատքով՝ Աստծո հանդէպ սիրուն:

Հարց. Ի՞նչ է նշանակում. «պատուիր Տիրոջը քո արդար վաստակից եւ քո արդար բերքից պտուղ հատկացրու նրան» (Առ 3.9):

Պատասխան. Հերթով առաջ է բերում գործնական արդարութիւնը: Նախ, ասաց հասարակաց ողորմութեան մասին, թէ թող ողորմութիւնը քեզանից չպակասի (Առ 3.3): Այժմ խօսում է Աստծու ընծաների մասին, որն է տասանորդը եւ պտուղների երախայրիները, ինչպէս ասում էր Յակոբը, եթէ ինձ կերակուր եւ զգեստ տաս, Տէր, կտամ քեզ տասանորդ ամէն ինչից (Ծննդ 28.20): Եւ յետոյ Աստուած Մովսէսի միջոցով օրէնք սահմանեց ժողովրդին՝ տասանորդը տալ (Բ Օր 14.22): Եւ երբ ծուլացան, Մաղաքիա մարգարէի միջոցով ասում է. «միթէ՞ մարդ Աստծուն կխաբի, եւ ինչո՞վ կխաբի, չէ՞ որ իմ տասանորդները ձեզ մօտ են, եւ դա ձեր տներում յափշտակութիւն կլինի, եւ երկինքը անձրեւ չի տայ ձեր վրայ (Մաղ 3.89):

Եւ տես, որ ասում է արդար վաստակից, քանզի անիրաւութեամբ եւ յափշտակութեամբ վաստակածը չի ընդունում, քանի որ վրէժխնդիր է զրկուածի համար: Եւ ասում է, թէ չեմ ընդունում ձեր ձեռքերից խունկը, քանզի ձեր ձեռքերը լի են արեամբ (Ես 1.13): Եւ Ղարձեալ, եթէ անիրաւը ինձ պատարագ մատուցի, այնպէս է, որպէս թէ մէկը շուն մորթի (Ես 66.3): Եւ թէ որտեղ են պատում Տիրոջը, այսինքն, տաճարում եւ տալիս են քահանային, քանզի ով ձեզ է ընդունում, ինձ է ընդունում, ասում է Տէրը (Մատթ 10.40): Եւ աւելացնում է, որ Աստծուն տրուածի փոխարէն ոչ միայն ապագայում, այլեւ այս կեանքում են ընդունում, քանզի ասում է. «կլցուեն քո շտեմարանները ցորենի լիութեամբ եւ քո հնձանները առաւել կբխեն» (Առ 3.10), ինչպէս սարեփթացի կնոջը, քանզի աւելի պատուեց Աստծու այր Եղիայի քաղցը, քան որդիների կեանքը, որի շնորհիվ նրա շտեմարանները լցուեցին ալիւրով եւ իւղով (Գ Թագ 17.16):

Հարց. Ի՞նչ է նշանակում. «երանի այն մարդուն, որ իմաստութիւն կգտնի, եւ այն մահկանացուին, որ հանձար կստանայ» (Առ 3.13):

Պատասխան. Իմաստութիւն է Աստուած, որին մտքի իմացմամբ կարելի է հաւատալ, եւ ոչ թէ զգայարաններով հասնել: Իմաստութիւն է եւ Քրիստոս, ըստ առաքեալի. Հօր Աստծու զօրութիւն եւ իմաստութիւն (Ա Կոր 1.24), քանի որ նրանով հաստատուեցին ամէն բաները, որ երեւում են եւ որ չեն երեւում (Կող 1.16): Իմաստութիւն է նաեւ Սուրբ Հոգին՝ իմանալի Աստուած լինելով, իմաստութիւն եւ մխիթարիչ եւ ուսուցիչ մեզ համար, ըստ այն խօսքի որ. «նա կտվորեցնի եւ կյիշեցնի ձեզ այն ամէնը, ինչ որ ասացի ձեզ» (Յովհ 16.13): Իմաստութիւն է նաեւ երկնաւոր կեանքի հաւատը եւ յոյսը, ըստ առաքեալի. «վերինը խորիել, ուր Քրիստոս է նստում Աստծու աջ կողմում» (Կող 3.2): Իմաստութիւն է նաեւ բարի գործերի մասին խոկալը եւ խոստացուած բաների ընտրութիւնը յուսով: Իմաստութիւն է նաեւ տարրերի եւ ընդհանրական գիտելիքների քննութիւնը, որին հելլենացիները հետեւեցին. երանելի են, ասում է, ովքեր թողնում են անցաւոր կեանքը եւ սրանք գտնում: Եւ առաւել մեծ պատուի են արժանանում, որ մահկանացու մարդը անմահութեան արուեստն է գտնում եւ սա էլ իմաստութիւն է, քանզի այս կեանքում յուսով է անմահ եւ հանդերձեալում՝ անմահութեան կեանքով, ինչպէս ասում է առաքեալը. «ինչպէս Ադամով բոլորը մեռնում են, նոյնպէս եւ Քրիստոսով բոլորը կենդանանում են, իւրաքանչիւրն իր հերթին» (Ա Կոր 15.22): Եւ սահմանում է այստեղ. տասը եղանակով է գովաբանում իմաստութիւնը, ինչպէս այստեղ է քննողներին:

Հարց. Ի՞նչ է ուզում ասել. Աստուած իմաստութեամբ դրեց երկրի հիմքը, եւ իմացականութեամբ հաստատեց երկինքը, եւ իր հանձարով անդունդներ բացեց (Առ 3.19):

Պատասխան. Քրիստոս է Աստծու զօրութիւնը եւ իմաստութիւնը ըստ առաքեալի (Ա Կոր 1.24). նրանով, ասում է, ստեղծեց այն ամէնը, ինչ որ երեւում է եւ ինչ որ չի երեւում (Կող 1.16), եւ ըստ Յովհաննէսի. «ամէն ինչ նրանով եղաւ» (Յովհ 1.3): Իսկ երկրի հիմքերը պէտք է ոչ թէ ինչևոր առարկա հասկանալ ըստ ոմանց, այլ Աստծու նախախնամութեան զօրութիւնը, ըստ առաքեալի. «որ բռնում է ամէն բան իր խօսքի զօրութեամբ» (Եբր 1.3): Եւ Աստուած ասում էր Յոբին. «ինչի՞ վրայ է հաստատուել դրա

ողակը» (Յոբ 38.6): Իսկ խորհուրդ անուանում է Սուրբ Հոգուն, ըստ Եսայու. «խորհրդի եւ գորութեան Հոգին պատրաստեց երկինքը՝ իմանալի էակների բնակութեան համար» (Ես 10.2): Իսկ անդունդ՝ ջրերի բազմութիւնն անուանում, որ երկրի վրա էր, ըստ այն խօսքի. «անդունդի վրայ խաւար կար» (Ծննդ 1.2), այսինքն օդը ջրի վրայ: Իսկ բացելը այն է, որ երկրորդ օրը ջրերը բաժանուեցին ջրերից (Ծննդ 1.6), կէսը հաստատութեան վրայ, եւ կէսը հաստատութեան ներքեւում հավաքուեցին եւ եղան ծովեր, եւ ցամաքեց երկրի երեսը (Ծննդ 1.7):

Հարց. Ի՞նչ է նշանակում. «մի յապաղիր կարօտեալին բարութիւն անել, երբ քո ձեռքը կարող է օգնել նրան: Չասես թէ՛ «գնա՛ կգաս, վաղը կտամ», քանի որ չգիտես թէ վաղը ինչ է բերելու քեզ» (Առ 3.27):

Պատասխան. Ով աղքատին մի բան է խոստանում եւ չի տալիս, չորս բանով է մեղանշում. առաջին, քանի որ ասաց եւ ստեց, եւ եղաւ որդի ստութեան իր հայր սատանայի (Յովի 8.44): Երկրորդ, քանզի Աստծու սեղան կողոպտող եղաւ, քանզի երբ խոստացաւ, Աստծուն տուեց այդ, եւ չտալով Աստծուն գրկեց: Երրորդ, քանզի աղքատը չարչարում է յուսով, ըստ այն խօսքի, որ յետաձգուած յոյսը տանջում է հոգին: Չորրորդ, քանի որ իր վարձի հատուցումից զրկուեց, այսինքն Աստծու ողորմութիւնից եւ արքայութիւնից ըստ հետեւեալի. «ողորմածներինն է իմ արքայութիւնը եւ թէ ողորմածները ողորմութիւն կգտնեն» (Մատթ 5.7), քանի որ կամ դեւը զղջալ է տալիս ըստ այն խօսքի. զալիս է դեւը եւ հանում բարի սերմը մտքից (Մատթ 13.19), կամ չարամիտ մարդկանցից է խափանուում, եւ կամ աշխարհի հոգսերը արգելում են. այս նկատի ունի առաքեալը ասելով. «արեգակը ձեր բարկութեան վրա թող մայր չմտնի» (Եփ 4.26), որպէսզի չլինի, թէ գիշերը տրտմութեան մրրիկը շատանայ ձեր խորհուրդներում:

Հարց. Ի՞նչ է նշանակում. «քանի որ նրանք ամբարշտութեան հաց են ուտում եւ հարբում են անօրէնութեան գինով» (Առ 4.17):

Պատասխան. Քանզի զրկանքներից կամ յափշտակութիւններից են ուտում եւ ըմպում այսպիսիները: Դարձեալ, քանզի ինչպէս բարիները ոչ միայն հացով են ապրում, այլեւ Աստծու ամէն խօսքով (Մատթ 4.4), նմանապէս չարերի կերակուրը ամբարշտութիւնն ու մեղքն է: Իսկ անօրէնութեան գինի է ասում այն, որ կան ոմանք, որ մեղքի մէջ են ընկած մարմնով, սակայն զգաստանում եւ պարսաւում են իրենց, քանի որ բանականի մասը առողջ է նրանցում եւ ցամաքում ու ցանկութեամբ են խոտորուած: Իսկ ովքեր չեն զղջում իրենց մեղքերի համար, այլ որպէս բարի մի գործ են գործում, նրանց բանականութիւնը սխալուած է եւ հանգել է մտքի լոյսը: Այնպիսիք հարբած են մեղքերով, ինչպէս որ այլուր ասում է. «մեղքով բռնուած ոգիները, մտքից եւս պակասում են»: Եւ Եսային ասում է. «վա՛յ ձեզ, որ հարբած էք, բայց ոչ գինուց» (Ես 28.1):

Հարց. Ի՞նչ է նշանակում ասելը. «Ամենայն զգուշութեամբ պահիր եւ պահպանիր քո սիրտը, որովհետեւ նրանից է բխում կեանքի աղբիւրը» (Առ 4.23):

Պատասխան. Սիրտ ասելով հոգին նկատի ունի, իսկ սրտի խռովութիւնը երկու պատճառից է լինում. նախ, սիրտը այլալուում է սատանայի արկածներից եւ զանազան խորհուրդներից ներքուստ, եւ ապա արտաքին զգայարաններից գայթակղուում է սիրտը: Զգայարաններից է գայթակղուում, ինչպէս Դաւիթը, որը տեսաւ Բերսաբէին եւ ցանկացաւ եւ պոռնկութիւն գործեց, որ նախօրոք մտքում չուներ (Բ Թագ 11.2): Իսկ սատանայի արկածները լինում են խորհուրդների մէջ, ինչպէս Յուդայինը, քանզի ազահութեան ախտը նախ ընկաւ մտքի մէջ եւ ապա զգայարանների միջոցով մատնեց: Այս երկու ախտերից պահիր քո սիրտը, քանի որ սրանցից են կեանքի ելքը, յայտնի է նաեւ, թէ սրտի մոլորութիւնից է կեանքի սպառումը: Քանի որ մեղքը մահ է, ինչպէս ասում է Յակոբոսը. «ցանկութիւնը յղանալով մեղք է ծնում, եւ մեղքը հասունանալով մահ է ծնում» (Յակ 1.15): Իսկ սատանայի չար խորհուրդներից ազատում ենք՝ Տիրոջ օրէնքների մասին խորհելով եւ յարածամ աղօթելով ըստ այն խօսքի. «այդ տեսակը ուրիշ բանով չի ելնի, եթէ ոչ պահքով եւ ծոմապահութեամբ» (Մարկ 9.28): Իսկ արտաքին կրքերից ազատում ենք, երբ ուղղում ենք իւրաքանչիւր զգայարան թիրութիւններից, ինչպէս ասում է. «քո աչքերը թող ուղիղ նայեն եւ քո արտեւանունքները արդարութեամբ ակնարկեն» (Առ 4.25):

Հարց. Ի՞նչ է նշանակում. «մի շեղուիր ո՛չ աջ, ո՛չ ձախ» (Առ 4.27):

Պատասխան. Աջ խոտորումն է ամէն տեսակ բարեգործութիւն մարդկանց ցուցադրելու համար անելը, ինչպէս նրանք, ովքեր հրապարակների անկիւններում աղօթքի են կանգնում եւ ողորմութիւն անելով փող են հնչեցնում: Եւ դրանց նման է Ռոզիայի խունկը (Բ Մն 26.19), Սաւուդի պատարագը (Ա Թագ 15.21) եւ Յեփթայի գոհը (Դատ 11.35): Իսկ դէպի ձախ խոտորումն է շնութիւնը, սպանութիւնը, գողութիւնը եւ այլն, որ յայտնապէս մեղք են: Այլ դու Պողոսից ընդունիր արդարութեան զէնքը, որի մասին ասում է. «արդարութեան զէնքերով, որ աջից են եւ ձախից, փառքով եւ անարգութեամբ, գովութեամբ եւ

պարսաւանքով» (Բ Կոր 6.7): Եւ արդարութեան այդ գէնքերով կյաթախարես թշնամուն, որ երկու կողմից պատերազմում է քո դէմ: Բայց պէտք է գիտենալ, որ ինչպէս աջ խոտորումը, որ բարի գործերն են մարդկանց ցուցադրելու համար, տհաճ է Աստծուն, այնպէս էլ հակառակի՝ ձախ խոտորման մէջ կան հաճելի բաներ, որ Աստծու փառքի համար է լինում, ինչպէս Բահադի մարգարէների սպանումը Եղիայի կողմից (Գ Թագ 18.40) եւ Ովսէի պոռնկանալը (Ովսէի 1.2), իսկ ընդհանրապէս, որեւէ բարիք, որ Աստծու փառքի համար չէ, չար է:

Հարց. Ի՞նչ է Աստծու փառքը:

Պատասխան. Այսինքն Աստծուն հաճելի կամ Աստծու փառքի համար, կամ որպէսզի Աստուած փառաւորուի:

Հարց. Ի՞նչ պատճառով են զգաստանում մեղքերից:

Պատասխան. Նախ, ծերութեան պատճառով, երբ սպառուում է ցանկութեան ախտը եւ մարդու մէջ ծանրանում է սագտանքը: Երկրորդ, մարմնի տկարութիւնը, երբ նվազում է պարարտութիւնը: Երրորդ, աղքատութիւնը, երբ կերակուրների եւ ըմպելիքների պակասութիւն է առաջանում, որի համար ասում է. «յետոյ կզոջաս երբ կմաշուեն քո մարմնի անդամները» (Առ 5.11): Կայ եւ մեղքերից հեռանալու մի չորրորդ պատճառ, երբ մարդը իր բանական մասով հաղորդակցւում է աստուածային սիրուն եւ նրա շնորհներով լուսաւորում: Այն ժամանակ մարմնական ցանկութիւնների հեշտութիւնը չի կարող յաղթել նրան, այլ ամէն ինչում ինքն է հաղթում:

Հարց. Ի՞նչ է նշանակում. «քո ջուրը խմիր քո ամանից» (Առ 5.15):

Պատասխան. Բազում պատճառներով է, որ կնոջը ջրի աման է անուանում: Առաջին, որովհետեւ ինչպէս ծարաւածը ջրով, այնպէս էլ տղամարդը կնոջով է զովանում բորբոք ցանկութիւնից: Երկրորդ, որովհետեւ ընդունում է տղամարդու ցանկութիւնը եւ իր մէջ բեղմնաւորելով պտղաբերում է զաւակների սիրոյ բաղցրութիւնը ըստ Յոբի. «կաթի պէս կթեցիր ինձ եւ պանրի պէս թանձրացրիր» (Յոբ 10.10): Երրորդ, որովհետեւ ինչպէս ամանը իր մէջ պահուածը անհրաժեշտ ժամանակին տալիս է օգտակարը, նոյնպէս եւ կինը իր մէջ կրում է մանկանը եւ անհրաժեշտ ժամանակին տալիս է հենարան ծերութեան եւ աղքատութեան ժամանակ: Չորրորդ, որովհետեւ ինչպէս ամանը իր մէջ հաւաքում է զցուածը, նոյնպէս եւ կինը հաւաքում է տղամարդու ունեցուածքը եւ փարթամութիւնը, ինչպէս ասում է. «Եթէ նրա սիրով քայլես, մեծարժեք կլինես» (Առ 5.19):

Հարց. Ինչո՞ւ բազմամուսնութիւնը եւ բազմակնութիւնը խոտելի է ոչ միայն Սուրբ Գրքում, այլեւ բնական բարոյականութեան կանոններով, ինչպէս որ Յովսէփը հրաժարուեց Պետափրէսի կնոջից (Ծննդ 39.12) եւ Ռուբէնը անարգուեց, քանի որ իր հօր անկողինը ելաւ (Ծննդ 35.22):

Պատասխան. Նախ, քանի որ սիրոյ կապը, որով երկուսը մի մարմին եղան (Ծննդ 2.24), քանդում է իր ամուսնուց եւ կապում ուրիշի հետ, ինչպէս եւ ամուսինը այլ կնոջ հետ: Եւ միմեանց հանդէպ չունեն յօժարական սէր, այլ ստիպողական, դրա համար էլ Տէրը ոչ որեւէ այլ ախտի պատճառով (թէ լեզուանի լինի կամ գող) հրամայում է արծակել, այլ միայն պոռնկութեան դէպքում (Մատթ 5.32), քանի որ ինքն իրեն արծակեց իր ամուսնուց: Երկրորդ, քանի որ որդիները չեն ճանաչում իրենց հօրը: Երրորդ, որովհետեւ նաեւ հայրը չունի գութ որդիների վրայ, քանի որ կասկած ունի հարազատ լինելու մասին: Չորրորդ, որովհետեւ նա, որ հօր ստոյգ ժառանգն է, զրկւում է եւ օտարը ժառանգ է դառնում: Հինգերորդ, որովհետեւ ելան աստուածային կանոններից, որը մի ամուսին եւ մի կին զուգաւորեց եւ ոչ բազմամուսնութիւն օրինադրեց, ինչպէս մեր նախնիները Ադամն ու Եւան. մանաւանդ օրենքից էլ գիտենք, որ ասում է. «մի շնացիր» (Բ Օր 5.17), իսկ նրանք Աստծո դէմ էին մարտնչում:

Հարց. Ինչո՞ւ է պոռնկութիւնը խոտելի Սուրբ Գրքում, չէ՞ որ լրումն է աստուածային օրենքի, որն ասում է. «աճեցէք եւ բազմացէք» (Ծննդ 1.28):

Պատասխան. Նախ, պէտք է իմանալ, որ Աստուած հեշտանքի ցանկութիւնը տղամարդու եւ կնոջ սիրոյ նիւթ դարձրեց երկու պատճառով. նախ, որպէսզի այդ ցանկութեան պատճառով տղամարդը խոնարհուի դէպի կինը, քանզի եթէ այդպէս չլինէր, այդպիսի գարշ տեղ եւ այդպիսի գործի չէր գնայ: Երկրորդ, որպէսզի կինը տանի երկունքի ծանրութիւնը եւ մանկասնութեան դժուարութիւնը: Ուրեմն, եթէ ցանկութեան պատճառով մանկածնութիւն է լինում կամ մանկածնութեան համար ցանկութիւն է կատարւում, ինչ եւ իցէ, աշխարհի վրա աճելն ու բազմանալն է շարունակւում: Իսկ պոռնկութիւնը դէմ է աստուածային օրէնքին. նախ, որովհետեւ ծնունդն են խափանում այլեւայլ ախտերի հոսումից: Երկրորդ, որովհետեւ իրենց հանձնում են գարշ աղտեղութեան՝ հեշտանքի ցանկութեամբ, եւ դրա մէջ բորբոքում: Երրորդ, որովհետեւ անմեղ երիտասարդներին բորբոք ցանկութեամբ ձգում են սատանայի թակարդը, որը յաւիտենական մահն է: Չորրորդ, որովհետեւ նրան էլ են զրկում մանկարարութեան սպասաւորութիւնից՝ վայր հոսեցնելով նրա սերմը: Հինգերորդ, որովհետեւ նաեւ նրա ունեցուածքը եւ

վաստակը դէպի իրենց են քաշում եւ նա, մոլորութեամբ հարբած, անտարբեր է մնում իր ունեցուածքի կորստի հանդէպ, դրա համար էլ յիրաւի զգուշացնում է. «մի նայիր չար կնոջը» (Առ 5.3), իսկ առաքեալն ասում է. «մի խաբուեք, ո՛չ շնացողները, ո՛չ պոռնիկները Աստծու արքայութիւնը չեն ժառանգելու» (Ա Կոր 6.9): Այս ըստ մարմնի: Իսկ հոգեւոր տեսութեամբ պատուական ամուսնութիւններն են, որ ունեն ամբողջական հաւատ առ Աստուած: Իսկ ովքեր ինչևիճ հերձուածներ ունեն եւ թերութիւն հաւատի մէջ, ծածուկ կամ բացայայտ, այնպիսիք շնացող են եւ պոռնիկ որոնցից հրաժարուել հրամայեց առակով: Իսկ մարգարէն ասում էր. «շնանում էր Երուսաղեմը եւ պոռնկանում էր Սամարիան»:

Հարց. Ի՞նչ է նշանակում. «Եթէ բարեկամիդ համար երաշխաւոր լինես, դու քեզ կմատնես քո թշնամուն» (Առ 6.1)

Պատասխան. Հեշտ է բացատրութիւնը. ասում է խօսքով շտապող մի լինիր՝ երաշխաւոր դառնալու, որպէսզի նրա պարտքը դու չվճարես: Այլ նախ նրա համաձայնութիւնը առ, եւ երբ երաշխաւոր կանգնեցիր, շտապեցրու նրան գործում: Իսկ հոգեւոր իմաստով երաշխաւոր են ժողովուրդների առաջնորդները, լինեն հոգեւոր առաջնորդներ, թէ մարմնաւոր իշխաններ: Ասում է. մի լինիր երաշխաւոր եւ միջնորդ նրանց եւ Աստծու միջեւ, ապա թէ ոչ, նրանց կորստեան դէպքում նրանց արիւնը քեզանից եմ պահանջելու, ասում է Աստուած մարգարէի միջոցով (Եզե 3.18): Տէրը նոյնպէս արգելում է իշխանաւոր լինել ասելով. «մի նստիր առաջին բարձին» (Ղուկ 14.8), եւ մարգարէն. «եթէ մեծութիւնը առւով գայ, թող քո սիրտը չյոժարի» (Սաղմ 41.11): Իսկ Պօղոսը ասում է. «ով որ հարստութիւն է փնտրում, փորձութեան մէջ է ընկնում» (Ա Տիմ 6.9): Այս պատճառով Մովսէսն էլ էր հրաժարում. «Աղաչում եմ քեզ, Տէր, մի ուրիշ կարող մարդու ընտրիր» (Ելք 4.12): Իսկ եթէ մէկը առաջնորդ է դառնում, նրան էլ է խրատում. «Աչքերիդ քուն մի տուր եւ թարթիչներիդ՝ նինջ» (Առ 6.4), այսինքն դու միշտ ուսուցանելու յետամուտ եղիր եւ նրանց բարի գործերի յորդորիր, որի մասին Պօղոսն էլ ասում է. «Դու խօսքը քարոզիր» (Բ Տիմ 4.2) եւ թէ. «զգույշ եղէք հօտի համար, որի վրա Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց ձեզ» (Գործք 20.28): Եւ թէ. «երեք տարի գիշերնցերեկ առանց դադարի իւրաքանչիւրիդ մէկնմէկ ուսուցանեցի» (Գործք 20.31):

Հարց. Ի՞նչ է նշանակում. «Անիրաւ վկան բորբոքում է ստութիւնը եւ գրգռութիւն է զցում եղբայրների միջեւ» (Առ 6.19):

Պատասխան. Քրիստոսից լսեցինք, որ ստութեան հայրը եւ աղբիւրը սատանան է (Յովի 8.44), այդ պատճառով էլ արգելեց դատարկաբանութիւնը, (Մատթ 12.36) որպէսզի ստի մէջ չայտնուենք: Եւ օրենքի մէջ ասում է. «սուտ մի վկայիր» (Բ Օր 5.20): Իսկ եթէ դատաւոր լինի, որ ծռում է դատաստանը եւ թէ այլ ոք, նրա բաժինը ստութեան հօր հետ է, այսինքն յաւիտեանական հուրը, ասում է Տէրը (Յայտ 21.8): Դարձեալ, հերձուածողների դասերը Քրիստոսի տնօրինութեան սուտ վկաներ եղան եւ հակառակութիւն զցեցին քրիստոնէանների մէջ, եւ ընդունելու են ստութեան հօր բաժինը:

Հարց. Ի՞նչ է պոռնկական կերպարանքը (Առ 7.10):

Պատասխան. Առաջին. ծաղրական երեսը: Երկրորդ, զունագեղ այտերը: Երրորդ, պաճուճազարդ հանդերձը: Չորրորդ, քաղցրապատիր, շողոքորթ եւ աղտեղի խօսքը: Հինգերորդ, անամօթ լրբութիւնը, ինչպէս ասում է. «լրբենի երեսով» (Առ 7.13):

Հարց. Ի՞նչ է ուզում ասել. «Ես սիրում եմ նրանց, ովքեր սիրում են ինձ, եւ ով փնտրում է ինձ, շնորհ կգտնի» (Առ 8.17), իսկ այլուր կաթողիկէ թղթերում ասում է. «ոչ թէ մենք սիրեցինք Աստծուն, այլ նա նախ սիրեց մեզ» (Ա Յովի 4.10):

Պատասխան. Միմեանց հակառակ չեն այս խօսքերը, քանի որ այնտեղ ընդհանուր բարերարութեան մասին է ասում, որ իր բարութիւնից ելնելով ստեղծագործեց ամէն բան եւ «կամենում է, որ բոլորը փրկուեն եւ ճշմարտութեան գիտութեանը հասնեն», (Ա Տիմ 2.4) օրէնքների, մարգարէների եւ քարոզիչների միջոցով, եւ որը բոլորի համար մեռաւ եւ յարութիւն առաւ: Իսկ այստեղ փրկուածներից իւրաքանչիւրին ասում է. հօժար խօսքով եւ կամքով, քանզի չի ուզում մարդուն ինքնիշխանութիւնից զրկել եւ բռնի դնել ճիշտ ուղու վրա, այլ նախ մեր մէջ է փնտրում սէրը եւ ապա ինքն է սիրում: Դրա համար էլ ասում է. «Աբրահամը հաւատաց Աստծուն եւ դա նրան արդարութիւն համարուեց (ՇՆՆճ 15.6) եւ նախ ժողովուրդը աղաղակեց Տիրոջը եւ յետոյ Աստուած փրկեց նրան: Եւ Տէրն ասաց. նախ խնդրեցէք եւ ապա ստացէք, հայցեցէք եւ կգտնէք, բախեցէք եւ կբացուի ձեզ (Մատթ 7.7), եւ թէ մնացէք իմ մէջ սիրով եւ նոյն սիրով եւ ձեր մէջ (Յովի 15.9): Դարձեալ, մի խօսքը մեզանից կամաւոր բարեգործութիւն է պահանջում, ըստ այնմ. «եթէ մէկը իմ պատուիրանները պահի, ես եւ իմ Հայրը նրա մօտ կգանք եւ նրա մօտ կօթեանենք» (Յովի 14.23): Իսկ միւս խօսքը Աստծու օգնութիւնն է յայտնում, ըստ այնմ. ոչ ոք ինձ մօտ չի գայ, եթէ իմ Հայրը նրան չծագի» (Յովի 6.49): Եւ այս երկուսից է լինում փրկութիւնը, քանզի եթէ որեւէ մէկը պակաս է, անկատար է փրկութիւնը: Եւ այս բանի օրինակը տեսնում ենք Պետրոս առաքեալի եւ մատնիչ Յուդայի օրինակում. Պետրոսը միայն յօժարութիւն ունէր առանց Աստծու շնորհի, որի համար

Տէրը թուլացրեց իր օգնութիւնը, որպէսզի մարդկային տկարութիւնը հանդիմանուի: Իսկ Յուդան ունէր Տիրոջ խնամքը եւ չունէր կամաւոր հաւանութիւն: Դրա պատճառով երկուսն էլ հանցանք գործեցին, եւ Պետրոսը ուժգին զղջմամբ եւ Քրիստոսի շնորհքով կանգնեց գլորումից յետոյ:

Հարց. Ինչո՞ւ է ասում. «Իմն են հարստութիւնն ու փառքը. լաւ է ինձ ունենալ, քան ոսկի եւ անգին քարեր» (Առ 8.18):

Պատասխան. Երկու տեսակի հարստութիւն պէտք է հասկանալ, նախ, մարմնական հարստութիւնը, որի մասին Դաւիթն ասում է. «ահա մեղաւորները եւ սակայն բարգաւաճում են նրանք, կան եւ ունեն հարստութիւնն աշխարհի» (Սաղմ 72.12): Իսկ Պողոսն ասում է. «Այս աշխարհի հարուստներին պատուիրիք, որ չհպարտանան ու չապաւինեն սնոտի հարստութեանը, այլ բարի գործերով հարստանան» (Ա Տիմ 6.17), քանզի թշուառական է այդպիսի հարուստը, նախ, որովհետեւ ասում է. «վա՛յ ձեզ հարուստներ, որովհետեւ ձեր մխիթարութիւնը ստացել էք այս կեանքում» (Ղուկ 6.24): Երկրորդ, քանի որ ասում է. «հարուստը դժուարութեամբ կմտնի արքայութիւնը» (Մատթ 19.23):

Երկրորդ տեսակը հոգեւոր հարստութիւնն է, ովքեր Աստծով են հարստանում՝ բարի գործերով ըստ առաքեալի. (Ա Տիմ 6.18): Իսկ այս հարստութիւնը նախընտրելի է բազում տեսակէտներից, քանզի նախ, ոսկին, թանկարժէք քարերը եւ այլն արեւի շողերից են ստանում բազմաճաճանչ փայլերը, իսկ «արդարները, ասում է Տէրը, արքայութեան մէջ կփայլեն ինչպէս արեգակը» (Մատթ 13.43), ուրեմն առաւել է այն, որը ինքն իրենից է փայլում, քան որ ուրիշից է ստանում լոյսը: Երկրորդ, քանի որ սա անցաւոր հարստութիւն է, ինչպէս ասում է Յակոբոսը հարուստներին. «լացէ՛ք եւ ողբացէ՛ք, որովհետեւ ձեր հարստութիւնը ոչինչ է եւ այլն» (Յակ 5.1), իսկ միւսը մշտնջենաւոր է, ըստ մարգարէի. «նրա արդարութիւնը կմնայ յաւիտեանս յաւիտենից» (Սաղմ 11.3): Երրորդ, քանի որ սա երկրից է եւ երկրին է կապում նրան ստացողների միտքը, իսկ այն՝ երկինք է խոյացնում վերինը խորհելով, ուր Քրիստոս է նստում Աստծու աջ կողմում (Կող 3.1), ըստ այն խօսքի. «ուր ձեր զանձերն են, այնտեղ եւ ձեր սրտերը կլինեն» (Մատթ 6.21): Չորրորդ, որովհետեւ այս հարստութիւնը ապականացու է եւ ժանգելի, ըստ այնմ. «ձեր արծաթն ու ոսկին ժանգոտած են եւ նրանց ժանգը ձեր դէմ որպէս վկայութիւն պիտի լինի» (Յակ 5.3), իսկ այն՝ առանց ապականութեան, ըստ այնմ. «ուր ո՛չ ցեց եւ ո՛չ ժանգ չեն ոչնչացնում» (Մատթ 6.20): Հինգերորդ, քանի որ սա մատչելի է գողերին, որոնք պատերն են ծակում եւ գողանում, իսկ այն զանձը երկնքում է, ըստ առաքեալի. «Մեր քաղաքացիութիւնը երկնքում է» (Փիլ 3.20): Իսկ գող սատանան այնտեղ չի կարող բարձրանալ եւ գողանալ: Վեցերորդ, որովհետեւ սրան կենաց խօսքի համար խեղդող փուշ է անուանում Տէրը սերմերի առակում (Մատթ 13.7) իսկ այն՝ պտղաբեր եւ արգաւանդ հող, որ պտուղ տուեց մէկին՝ երեսուն, վաթսուն եւ հարիւր: Եօթներորդ, Սողոմոնը ասում է. «հարստութիւնը չի օգնի բարկութեան օրը, բայց արդարութիւնը կփրկի մահուանից» (Առ 11.4), ինչպէս յայտնի է այն մարդու առակից, որի արտերը առատ բերք տուեցին եւ նա խորհեց քանդել եւ աւելի մեծերը շինել, եւ ասում է նրան. «ով անմիտ, հենց այս գիշեր հոգիդ քեզանից պահանջելու են եւ այլն» (Ղուկ 12.16): Իսկ արդարութիւնը կփրկի մահուանից, ինչպէս Եզեկիային (Ես 38.1): Ութերորդ, որովհետեւ «բոլոր մեղքերի արմատը արծաթիութիւնն է» (Ա Տիմ 6.10), ասում է առաքեալը եւ իսկապէս, քանի որ նա, ով արծաթ է սիրում, ազահում է, հաւաքում, եւ աղքատների վրայ հպարտանում, բարձրագոյններին նախանձում եւ հաւասարների վրա բարկանում, որոնք դէմ են կանգնում: Հետոյ ծուլանում է բարի գործերում, որոնք չի սիրում, յետոյ շատակեր դառնում, քանի որ բազում հարստութիւն ունի, հետոյ պոռնկանում եւ շնանում, քանի որ փափկացաւ մարմնով, որոնց համար լալով ասում էր նոյն առաքեալը. «Քրիստոսի խաչի թշնամիներ, որոնց աստուածը իրենց որովայնն է եւ այլն» (Փիլ 3.18): Իսկ այլուր ազահին կշապաշտ է անուանում (Եփ5.5), մանաւանդ գողերը, աւազակները, յափշտակողները, պատերազմները եւ սպանութիւնները սրանցից են: Իսկ աստուածային առաքինութիւններից յետոյ, որոնք են հաւատ, յոյս եւ սէր, բոլոր բարիքների սկիզբը արդարութիւնն է, որը բանականութիւնը պահում է խոհեմութեան մէջ, ցասումը՝ արիութեան մէջ եւ ցանկականը՝ ողջախոհութեան մէջ: Իններորդ, սրա համար Դաւիթ մարգարէն ասում է. «մարդը շրջում է ինչպէս մի ուրուական, սակայն իզուր է նա խռովում, դիզում եւ չզիտէ, թէ ում համար է ժողովում» (Սաղմ 38.7), քանի որ «ծաղկի նման շուտով անցնում է» (Սաղմ 36.2), իսկ «արդարի յիշատակը յաւիտեան է»: (Սաղմ 111.6): Իսկ առաքեալը ասում էր. «այսուհետեւ ինձ է սպասում արդարութեան պսակը եւ այլն» (Բ Տիմ 4.8): Տասներորդ, որովհետեւ այս զանձը մարդկանց մէջ երեւելի եւ փառաւոր են դարձնում նրանց, ովքեր միմեանցից են փառք ստանում եւ միւսը չեն խնդրում, իսկ այն զանձը հրեշտակներին է պարակից դարձնում ըստ այնմ. «արդարները արքայութեան մէջ հրեշտակների նման են՝ Հօր սեղանին բազմած եւ Քրիստոսից սպասաւորուած եւ փառաւորուած» (Ղուկ 20.36, 12.37):

Հարց. Ինչո՞ւ է ասում. «Տէրը ինձ ստացաւ իր ճանապարհի սկզբին՝ իր գործերի համար, յաւիտենութիւնից էլ առաջ հաստատեց ինձ» (Առ 8.22):

Պատասխան. Սա այն խորհուրդն է, որը ծածկուած էր Հօր Աստծու կամքով, երբ կամեցաւ գործով յայտնել, քանի որ ստացական մարմնով խօսքեր եւ իմաստութիւն է խօսում՝ իր ճանապարհի սկիզբը դնելով արդարութեան գործում, քանի որ նրա ձեռքերի գործը արդարութիւն եւ իրաւունք են, ասում է մարգարէն (Սաղմ 110.7): Քանի որ ինքը մարդ եղաւ ստացական մարմնով, կատարեց տնօրինութիւնը եւ ցոյց տուեց, որ անմեղ է մարդկային բնութիւնը եւ դատապարտեց թշնամուն, որ պատրու էր մարդուն: Յաւիտենական լեռներ եւ բլուրներ (Առ 8.25) անուանում է հրեշտակներին, որովհետեւ յաւիտենական գոյացութիւններ են, քանի որ նրանց եւ բովանդակ աշխարհի լինելութիւնից առաջ նախաբնաւորուած էր առ Հայր Քրիստոսի մարմնատեսակ տնօրինութիւնը, որ իր ժամանակին պէտք է կատարուէր: Եւ յայտնի է մարգարէների կանխասացութիւններում եւ Ինքը Տէրը ասում է. «Հայր, փառաւորի ինձ քեզ մօտ եղող այն փառքով, որ ունէի քեզ մօտ՝ նախքան աշխարհի լինելը» (Յովի 17.5): Իսկ Պետրոսը ասում է. «Աստծու զօրութեամբ պահուած էիք հաւատով՝ փրկութեան համար, որ պատրաստ է յայտնուելու վերջին ժամանակներում» (Ա Պետ 1.5): Պօղոսն էլ ասում է կորնթացիներին գրուած առաջին թղթում. «Խօսում ենք Աստծու իմաստութեան մասին, որ սահմանել էր մեր փառքի համար նախքան յաւիտենակները, որ այս աշխարհի իշխաններից ոչ մէկը չանաչեց այն. որովհետեւ եթէ ճանաչած լինէին, արդարեւ փառքի Տիրոջը խաչը չէին հանի» (Ա Կոր 2.7): Եւ եփեսացիներին գրում է. «Նա ընտրեց մեզ Քրիստոսի միջոցով նախքան աշխարհի արարումը, որպէսզի մենք սուրբ եւ անարատ լինենք նրա առաջ սիրով, նախասահմանեց մեզ որդեգրութեան Յիսուս Քրիստոսի միջոցով» (Եփ 1.4): Եւ դարձեալ. «Ճանաչեցրեց մեզ իր կամքի խորհուրդները, որ նախապէս սահմանել էր նրանով, որպէսզի ժամանակների լրումին, եւ այլն» (Եփ 1.9):

Հարց. Ինչո՞ւ Յովհաննէս ւստարանիչը սկսում է Բանի աստուածութեան մասին խօսքով եւ յետոյ գալիս տնօրինութեանը, ասելով. «Սկզբում էր Բանը եւ այլն» (Յովի 1.1) եւ թէ. «Բանը մարմին եղաւ» (Յովի 1.14): Իսկ Սողոմոնը նախ մարդեղութիւնից է սկսում, ասելով. «Տէրը ինձ ստացաւ իր ճանապարհի սկզբին» (Առ 8.22) եւ ապա գալիս աստուածութեանը, ասելով. «Ինձ ծնեց նախքան բոլոր բլուրները» եւ թէ. «Ես արարչակից էի նրան ամէն ինչում» (Առ 8.27):

Պատասխան. Յովհաննէսը ըստ պատշաճի աստուածաբանում է, իսկ Սողոմոնը՝ նախ մարդեղութեան մասին, եւ տեղին կերպով. մարդու Որդի լինելով ճանաչեցինք նրա աստուածութիւնը: Իսկ Աստծու ուրախութիւնը չորս կերպ պէտք է իմանալ: Նախ, աշխարհի լինելուց առաջ. Որդին Հօրից եւ Հայրը՝ Որդուն: Երկրորդ, արարչագործելիս Տէրը ուրախացավ իր ստեղծածներով եւ մարդկանց որդիներով (Առ 8.31): Երրորդ, մարդկանց փրկութիւնը Բանի մարդանալով: Չորրորդ, վախճանի ժամանակ, երբ բոլորը կհնազանդուեն նրան, եւ իր սուրբերին պսակելով Տէրը կուրախանա իր արարածներով:

Իմաստութիւնը շինեց իր տունը եւ կանգնեցրեց եօթը սիւներ (Առ 9.1):

Հարց. Ի՞նչ է իմաստասէրը եւ ի՞նչ՝ իմաստակը: Ի՞նչ է իմաստունը եւ ի՞նչ՝ իմաստութիւնը:

Պատասխան. Իմաստասէր կոչւում են նրանք, ովքեր բնական կրթութեամբ քննեցին էակաների բնութիւնը, ինչպէս Պիթագորասը, Պլատոնը եւ այլք: Իսկ իմաստակ կոչւում են նրանք, ովքեր գիտութեան մի մասի մէջ միայն հմտացան, ինչպէս քերականութեան կամ ճարտասանութեան: Իմաստուն կոչւում են նրանք, որ նախ, բնական խոհեմութեամբ իմաստնացան, ինչպէս Յօր եւ Կռնելիոս նահապետները. երկրորդ, նրանք, ովքեր շնորհով ստացան, ինչպէս Բեսելիէլը եւ Սողոմոնը: Իսկ իմաստութիւնը միայն Քրիստոս է կոչւում ըստ այնմ. «Քրիստոս Աստծու զօրութիւնն ու իմաստութիւնն է» (Ա Կոր 1.24): Դրա համար էլ այստեղ Քրիստոսի մասին է խօսում ասելով. «Իմաստութիւնը շինեց իր տունը»: Նախ նրա տունը երկինքների երկինքն է ասում, որը լի է վայելչութեամբ: Թէպէտ կարօտ չէ տեղի, որովհետեւ լցնում է երկինքն ու երկիրը, նրա սեփական բնակութիւնը պէտք է երկինքը հասկանալ, ըստ այնմ. «Երկինքը իմ աթոռն է» (Ես 66.1), եւ ասում ենք. «Հայր մեր, որ երկնքում ես»: Իսկ եօթը սիւն ասելով նկատի ունի իմանալի էակաների դասակարգութիւնը ինչպէս գրուած է Եփեսացիների թղթում. «Քանզի Աստծու կամքը հանգչում է նրանց մէջ»: Երկրորդ, տուն է կոչւում Աստծու հաստատութիւնը, քանզի թագաւորական տան նման պայծառ ու գեղեցիկ զարդերով զարդարեց: Եւ եօթը սիւներ կանգնեցրեց, եօթը պարփակող գօտիներ՝ մոլորակ աստղերով հանդերձ, նրանցով բոլորելով տարուայ եղանակները: Տուն է կոչւում նաեւ զգալի արարածները, որոնց ստեղծեց անձառ իմաստութեամբ եւ նրանցում սահմանեց կարգաւորութիւն եւ սահմաններ անփոփոխելի հրամանով: Եւ եօթը սիւներ արարչութեան զխաւոր էականերն են կոչւում, որոնք առաջին օրը ստեղծուեցին, այսինքն, երկինքը եւ երկիրը, հրեշտակները եւ լոյսը, հուրը, օդը եւ ջուրը: Եօթը սիւներ նաեւ արարչութեան եօթը

օրերն են կոչւում եւ ժամանակների դարերը: Չորրորդ, տուն է նաեւ վկայութեան խորանը, որ Մովսէսի միջոցով նորոգեց աւելի պայծառ, քան առաջինը: Թէեւ սիւները աւելի էին նրանում, սակայն եօթով էր բովանդակուած նրանց մէջ ակնարկութիւնները, ինչպէս շաբաթուայ եօթներորդ օրը եւ եօթը ըստ օրերի, ամիսների եւ տարիների եւ յիսներորդը, որը յոբելեան էր եւ ազատարար (Ղեւտ 25.11): Դարձեալ, եօթնաստեղ աշտանակը եւ եօթնաբերան ճրագները (Յայտ 1.13), նաւակատիքի եօթը օրերը եւ քահանաների եօթնօրեայ մաքրութիւնը: Սրանք բոլորը սիւներ են օրինաւորների համար: Հինգերորդ, Աստծու տուն է կոչւում իւրաքանչիւր ոք, ով պահում է նրա պատուիրանները ըստ այնմ. «Եթէ մէկը իմ պատուիրանները պահի, ես եւ Հայրը նրա մոտ կգնանք եւ նրա մօտ կօթեւանենք» (Յովի 14.23): Եւ եօթը սիւները նրա մէջ հանապազօրեայ աղօթքն է ըստ մարգարէի. «օրուայ մէջ եօթը անգամ կօրհնէմ քեզ» (Սաղմ 118.164): Վեցերորդ, տուն է կոչւում ողջ եկեղեցին, որը շինեց իրեն մարմին՝ անձառ խորհրդով միաւորելով ընկածին ու կործանուածին, ինչպէս ասաց Պետրոսին. դու ես վէմ եւ այդ վէմի վրայ կշինեմ իմ եկեղեցին» (Մատթ 16.18), եւ թէ. «Կենդանի Աստծու տաճար էք դուք եւ Աստծու Հոգին է բնակուում է ձեր մէջ» (Ա Կոր 3.16), եւ եօթը սիւները եօթը դասերն են, որ կան եկեղեցում, այսինքն, առաքելների, մարգարէների, վարդապետների, զօրութիւն գործողների, որոնց Աստուած է շնորհում բժշկութիւն հոգեւորներին օգնելու համար, կառավարիչների, զանազան լեզուներ խօսողների եւ թարգմանողների, որոնց թուարկում է առաքելը (Ա Կոր 12.28), որոնք եկեղեցու սիւներն են եւ հաւատի հաստատութիւնը: Եօթներորդ, տուն է կոչւում մարդկանց բնակութեան համար բոլոր քաղաքները եւ գիւղերը, իսկ եօթը սիւները, այսինքն, թագաւորները, դատաւորները, իշխանները, զօրականները, արհեստաւորները, հողագործ մշակները եւ այլ աշխատաւոր ժողովուրդը. սրանք են աշխարհական կարգերի սիւները եւ հաստատութիւն պահողները: Ութերորդ, տուն դարձրեց արժանաւոր սուրբերին իր բնակութեան համար, ըստ այնմ. «Ես ու՞մ մէջ հանգչեմ, եթէ ոչ հեգերի եւ խոնարհների եւ այլն» (Ես 66.2), եւ թէ. «Կրնակուեմ նրանց մէջ եւ կքայլեմ նրանց հետ»: Եւ սիւներ է ասում հոգու եօթնարկեան շնորհները ըստ Եսայու. Հոգի իմաստութեան եւ հանձարի եւ խորհրդի եւ զօրութեան եւ գիտութեան եւ աստուածապաշտութեան եւ երկիւղի (Ես 11.2): Քանզի ոմանց իմաստնացնում է Աստծու գիտութեան մէջ, ուրիշներին տալիս է հանձար՝ արհամարելու կենցաղի գայթակղութիւնները, իսկ խոհական միտք ունեցողներին՝ վերինն է խորհել տալիս: Եւ զօրացնում է ստորինների 5 դէմ կռուելու եւ նրանց արհամարհելու համար: Յայտնում է Սուրբ Գրքի խօսքերի եւ քարոզութիւնների գիտութիւնը: Եւ սրանով յորդորում է աշակերտողներին դէպի աստուածապաշտութիւն, որից յետոյ նրանց մտքում հաստատում է Աստծու երկիւղը: Եւ այսպէս եօթը զօրութեան, որ Քրիստոսով տնօրինուող եօթը սիւներ են կոչւում, մեզ են անցնում, որ նրա վրայ շինուեցինք իրենով՝ որպէս տաճար եւ օթեւան իր եւ իր Հօր համար, ինչպէս վերելում ասացինք: Իններորդ, տուն է ասում եւ իր մարմինը, որ բեղմնաւորուելով ամենասուրբ Կոյս Աստուածածնի արիւնից, խառնեց իրեն եւ միաւորուեց նրան՝ ոչ հաճութեամբ, այլ բնութեամբ, որին ինքը տաճար է կոչւում. «քանդեցէք այդ տաճարը եւ երեք օրում կվերականգնեմ» (Յովի 2.19), եւ այդ պատճառով տուն եւ տաճար է կոչւում, որպէսզի յայտնի դարձնի, որ ոչ թէ մարդու ինչևոր միջամտութեամբ է փրկչական ծնունդը, այլ Սուրբ Հոգուց, որը Եսային կնքուած գիր է անուանում (Ես 29.11), իսկ Դանիէլը՝ առանց ձեռքերին դիպչելու քար (Դան 2.34): Իսկ եօթը սիւներ Հոգու եօթը զօրութիւններին է ասում, որ մեր Տէր Յիսուս Քրիստոս առաւ իր մարմնի մէջ ըստ տնօրինութեան խորհրդի եւ մեզ՝ իր անդամների վրայ հեղեց, ինքը մեր գլուխը լինելով, ըստ առաքելի (Եփ 1.22): Տասներորդ, տուն է կոչւում նաեւ խաչը, որին Տէրը հաճեց Սիոնի, այսինքն, խաչի դիտանոցի հետ միասին, եւ նախընտրեց բնակուել նրա մէջ եւ այլն: Իսկ սիւները ըստ ոմանց եօթը բեւեռները պէտք է հասկանալ, որով խաչը հաստատուեց ի փրկութիւն տիեզերքի:

Մորթեց իր անասունները եւ խառնեց պատրաստեց գինին (Առ 9.1): Իմաստութիւնը իր տունը շինելուց յետոյ յիրաւի խրախճանք է անում, ինչպէս տաճարի նաւակատիքի ժամանակ: Արդ, նախ դրախտի վայելչութիւնը անմահական ճոխութեամբ դրեց մարդու առաջ որպէս մորթուելիք անասուն եւ ուրախարար գինու խառնարան բոլորի տան՝ աշխարհի համար: Երկրորդ, դրախտից արտաքսելուց յետոյ էլ տուեց ամէն տեսակ բարիքներ եւ՝ երկնքից, եւ՝ երկրից: Երրորդ, Իսրայելի ազգին, որին անապատում պարզեց մանանան եւ լորամարգին, ինչպէս նաեւ երկիրը: Չորրորդ, քանզի Ղեւիի ցեղին տուեց խորանի նուերները, եւ մորթուածներից ու գինուց, եւ ինչը Սողոմոնի տաճարում եւ Ջօրաբաբէլի միջոցով օրինակ տրուեց: Մտքի մեկնութեամբ Յիսուս Քրիստոս է Հօր Աստծու իմաստութիւնը. մորթեց իր անասունները, այսինքն, օրէնքը փրկչի գալստեան նմանութիւն եւ կերպարանք էին, քանի որ եթէ զոհը չմորթուի, սեղանի վրա չի ելնի: Նոյնպէս եւ եթէ ճշմարտութիւնը չծագէր, օրենքի խորհուրդը չուտելի եւ անտեսանելի կլինէր, քանի որ օրէնքի վախճանը Քրիստոս է (Հռ 10.4): Իսկ խառնեց պատրաստեց, այսինքն մարդկային բնութիւնը խառնելով միացրեց իր աստուածութեանը ինչպէս ասում է

աստուածաբանը. «գոհութիւն նոր խառնմանը եւ սքանչելի խառնուրդին»⁶: Վեցերորդ, մորթեց իր զոհը, այսինքն երբ իր մարմինը բաշխեց վերնատանը իր աշակերտներին ըստ այնմ. եւ խառնեց արիւնը եւ տուեց ճաշակելու մարմնի հետ միասին, որ քո կենրար մարմինը խառնելով տուիր բաժակով, քանի որ հին օրէնքում միայն մարմին էին ուտում: Եւ ինքը ասում է. «այս նոր ուխտ է իմ արիւնով» (Ղուկ 22.20): Այս է խառնումը, որովհետեւ ճշմարտութիւնը միացրեց օրինակին եւ Աւետարանը՝ օրէնքի հետ: Եօթներորդ, մորթեց անասունները, այսինքն նրանց ելից զատկի մէկ տարեկան ոչխարը, նոյն զատկին բոլորի փրկութեան համար ինքը մորթուեց որպէս պատարագ Հօր. պարարտ եզ՝ ըստ Ղուկասի (Ղուկ 15.23), եւ անարատ գառ, որ վերցրեց աշխարհի մեղքերը, ըստ մարգարէի (Յովի 1.29): Իսկ խառնարանը այն է, որ պենտակոստէի օրը Սուրբ Հօգին իջաւ, եւ գնայլեցրեց առաքայլներին սուրբ վերնատանը, ըստ այնմ. «Նրանք պիտի հագնան քո տան լիութիւնից եւ նրանց պիտի խմեցնես քո գրգանքի գետերից» (Սաղմ 35.9): Ութերորդ, ինչպէս որ անասունները եւ կերակուրը ուրախութիւն է մարմնի համար, նոյնպէս եւ Երրորդութեան գիտութիւնը եւ ճշմարիտ հաւատքը ուրախութիւն է հոգու համար, ըստ այնմ. «լցուեց երկիրը Աստծու գիտութեամբ՝ նման առատ ջրերի, որոնք ծածկում են ծովերը» (Ես 11:9), որով փարատուեց անգիտութեան խաւարը եւ ծովացեալ մեղքերը: Իսկ խառնուած գինին ուրախութիւնն է հրեշտակների եւ մարդկանց, հրէաների եւ հեթանոսների, հոգիների եւ մարմինների, մեռելների եւ կենդանիների, արդարների եւ մեղաւորների, կէսին խմբարան, իսկ միւսներին՝ քաւարան⁷: Իններորդ, զոհ են նրանք, ովքեր Քրիստոսից յետոյ իրենց անուշահոտ պատարագ մատուցեցին, իսկ խառնելիներ՝ ինչպէս վկաները իրենց արիւնը անխառնելիորեն խառնեցին Տիրոջ փրկագործ արեանը: Տասներորդ, մեզանից իւրաքանչիւրը լինում է Աստծու զոհ եւ պատարագ ըստ այնմ. «քեզ համար ենք մեռնում ամէն օր» (Սաղմ 43.23), եւ թէ. «Աստծու զոհը խոնարհ հոգին եւ սուրբ սիրտն է» (Սաղմ 50.19): Եւ անապական գինով խառնում եւ միանում ենք Քրիստոսի սիրուն, ըստ այնմ. «Իմ սիրոյ մէջ հաստատուն մնացէ՛ք եւ ես նոյն սիրով ձեր մէջ» (Յովի 15.9): Իսկ ասում է, պատրաստեց իր սեղանը, որովհետեւ սեղանի վրայ են դրում բոլոր կերակուրները: Նախ, դրախտն ենք ընդունում որպէս պատրաստուած սեղան պտուղներով: Երկրորդ, դրախտից յետոյ երկիրը՝ իր բոլոր բարիքներով: Երրորդ, Իսրայելի սեղանը անապատում: Չորրորդ, խորանի եւ տաճարի սեղանները յայտնի էին: Հինգերորդ, խորհրդի սեղանը վերնատանը, որովհետեւ նրա վրայ պատրաստուեց Տիրոջ մարմնի եւ արեան վայելումը ըստ այնմ. «ով որ ուտի իմ մարմինը եւ խմի մի արիւնը, յաւիտեան մահ չի տեսնի» (Յովի 6.55): Վեցերորդ, ճշմարիտ սեղան է փրկական խաչը, որի վրայ դրուեց պատարագի գառը, որ վերցնում է աշխարհի մեղքերը: Եօթներորդ, երկնաւոր սեղանը ըստ այնմ. «կուտեք եւ կխմեք իմ Հօր արքայութեան սեղանից» (Ղուկ 22.30): Ութերորդ, հոգեւոր սեղան է տէրունական տօների ներբողները եւ ճառերը որով մեր մայրը՝ Եկեղեցին ուրախացնում է հաւատացեալների խմբերը, քանզի «ոչ միայն հացով է ապրում մարդ, այլ Աստծու ամէն խօսքով (Մատթ 4.4): Իններորդ, մեր մարմինն ու հոգին է Աստծու սեղանը, որով ընծայում ենք աղօթքներ եւ այլն, ըստ այնմ. Իմ սիրտը եւ իմ մարմինը քո սեղանն է, ո՛վ Տէր Զօրութիւնների (Սաղմ 83.4): Տասներորդ, վեցանկիւնի նորակերտ սեղանը բարձրացած բեմի վրայ, որպէս օրինակ Յիսուս Փրկչին, որի մօտ այսօր հաւաքուած ենք տօնախմբութեան տաճարում: Եւ ուղարկեց իր ծառաներին բարձր քարոզութեամբ կանչել իր խառնած գինուն: Նախ, Աստծու ծառաներ էին արեգակն ու լուսինը եւ միւսները, որոնք իրենց լոյսով կանչում են հոգեւոր եւ մարմնական բարիքների վայելմանը, ըստ այնմ. «երկինքը Աստծու փառքն է պատմում» (Սաղմ 18.1) բարձր քարոզութեամբ, քանզի «քանզի ողջ երկիրն է բռնել նրանց ձայնը» (Սաղմ 18.5) ոչ օդաւոր ձայնով, այլ իմացմամբ: Երկրորդ, առաքեց իր Սովսէս եւ Ահարոն ծառաներին՝ կանչելու Իսրայելին դէպի անապատի եւ աւետեաց երկրի բարի խառնարանը բարձր բազկով եւ հզօր ձեռքով: Երրորդ, Սիոնի բոլոր բարձրաքարոզ մարգարէները հրաւիրեցին Իսրայելին, հեթանոսներին եւ տիեզերքը՝ անհաս խոհուրդների խրախճանքին: Չորրորդ, Յովհաննէս Կարապետը, որ պատրաստեց փրկութեան ճանապարհը դէպի Քրիստոս ըստ այնմ. «Ես անապատում կանչողի ձայնն եմ եւ այլն» (Յովի 1.23): Հինգերորդ, ծննդեան, խաչելութեան, յարութեան եւ տնօրինութեան այլ խորհուրդներից յետոյ ուղարկեց իր ծառաներին՝ առաքեալներին, հաւատով կանչելու տիեզերքը խաչի խառնարանին ըստ այնմ. «գնացէ՛ք, մկրտեցէ՛ք բոլոր հեթանոսներին եւ այլն» (Մատթ 28.19), բարձրաձայն քարոզութեամբ, նշաններով եւ զօրութեամբ: Վեցերորդ, հայրապետների ժողովները⁸, որոնք կանչում են դէպի ուղղափառութեան ճշմարիտ խառնարանը տիեզերաւոր աւետիսով: Եօթներորդ, եկեղեցու վարդապետները, որոնք մարդկանց սովորեցնում են հեռու մնալ աշխարհային գայթակղութիւններից, եւ երկնային բաները իմաստասիրել հաւատով եւ սրբութեան գործերով բարձրաձայն քարոզութեամբ կատարելով եւ ուսուցանելով ըստ Տիրոջ խօսքի (Մատթ 5.19): Ութերորդ, եկեղեցու քահանաները, ովքեր մարդկանց յորդորում են եւ Աստծու որդիներ դարձնում, սրբում եւ լուսաւորում են եկեղեցու եօթը խորհուրդներով բարձրաձայն քարոզութեամբ, այսինքն

անախտ վարքով: Իններորդ, բարեպեշտ թագաւորները, ինչպէս Կոստանդիանոսը, Տրդատը եւ ուրիշներ, որոնք արքայական հրամանի բարձրաձայն քարոզութեամբ աշխարհը կռապաշտութեան խաւարից դարձրեցին աստուածգիտութեան լոյսին: Տասներորդ, իր գալստեան ժամանակ իր ծառաներին՝ հրեշտակներին կառաքի եւ նրա ընտրեալներին կհաւաքեն չորս կողմերից բերելու անմահ փեսայի՝ Քրիստոսի հարսանիքի ուրախութեանը (Մատթ 24.31): Դրա համար էլ ասում է. «ով որ անզգամ է, թող գայ ինձ մօտ» (Առ 9.4), այսինքն հեթանոս ազգերին, որոնք կռապաշտութեամբ մոլորուեցին, եւ մեղքերի գանազան ախտերով տգիտացան, անասունների օրենքին շրջելով իրենց անձերը լոյսի փոխարէն, եւ «անմտութեամբ խաւարեցին նրանց սրտերը» ինչպէս խրատում է առաքեալը (Հռ 1.21). այնպիսիներին կանչեց վերոյիշեալ ծառաների միջոցով: «Իսկ պակասամիտներին ասաց. եկէ՛ք, կերէ՛ք իմ հացից եւ խմեցէ՛ք իմ գինուց, որ պատրաստել եմ ձեզ համար» (Առ 9.5): Պակասամիտ է հրէայ ազգը, որը պակասեց արդարութեան օրէնքից: Եւ յայտնի էլ է, որ հրէաներին ինքը կանչեց, իսկ հեթանոսներին՝ առաքեալների միջոցով. «Թողէ՛ք յիմարութիւնը եւ դուք կապրէ՛ք, իմաստութիւն փնտրեցէ՛ք եւ կփրկուէ՛ք» (Առ 9.5): Ի՞նչ է միայն պէտք. չարութիւնից հեռանալ եւ փնտրել արդարութեան իմաստութիւնը, որ նոյն ինքը ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքն է (Յովի 14.6), եւ նրան գտնելը յաւիտենական կեանք է: Եւ «ուղղեցէ՛ք ձեր խոհերը իմացութեամբ» (Առ 9.6), այսինքն ոգեկեցոյց առաքինութեամբ, որով կկարողանանք ազատուել գեհե՛նի տանջանքներից եւ հասնել Սուրբ Հոգու մխիթարութեանը՝ դէմ հանդիման տեսնելով ամենասուրբ Երրորդութեան փառքը, որին արժանի կլինենք մեր այս կեանքը մեր Տէր Քրիստոս Յիսուսով աւարտելուց յետոյ, որին փառք յաւիտեանս. ամէն:

Գլուխ երկրորդ

Առակների մեկնութեան առաջին գլուխը տեսական իմաստութեան մասին էր: Երկրորդը գործնականի մասին է: Դարձեալ, առաջինը ինքնին հոգեւորի մասին էր, իսկ երկրորդը՝ մարմնաւորի եւ հոգեւորի մասին՝ առակների խրատներով:

Հարց. Ի՞նչ է շահ ունի մարդ հարստութիւնից եւ ի՞նչ վնաս:

Պատասխան. Երկու տեսակ հարստութիւն կայ. կամաւոր հարստութիւն եւ դրանով է զբաղւում մարդ. այս չար է, եւ կայ հարստութիւն, որ պատահական է եւ ինքը՝ մարդը ազատ է, քանի որ խոնարհների հետ է նստում. այս բարի է, ինչպէս Աբրահամի, Իսահակի, Յակոբի եւ այլոց հարստութիւնը: Սկզբում խօսենք, թէ ինչ շահ կայ հարստութիւնից: Նախ այն է, որ ինչպէս քաղաքը պարսպով է ամրանում, նոյնպէս եւ հարուստը իր թշնամիներից, քանի որ առատութեամբ է տալիս, ինչպէս ասում է առակը. «մեծատունների հարստութիւնն իրենց ամուր քաղաքն է» (Առ 10.15): Երկրորդ, քանի որ ազատւում է փորձանքներից, ինչպէս ասում է առակը. «մարդու փրկանքը իր հարստութիւնն է» (Առ 13:8): Երրորդ, որովհետեւ չի պանդխտանում աղքատի նման, կամ սովի մատնւում, ըստ այնմ. «որ փարթամ է ամէն տեսակ ունեցուածքով»: Չորրորդ, քանի որ շքեղանալով բոլորից պատուի է արժանանում ինչպէս ասում է առակը. «Նրա փառքը մեծապէս հովանի է իրեն» (Առ 18.11), որից յայտնի է, որ միեւնոյն է աղքատի եւ հարուստի էութիւնը եւ մարմնի կազմուածքը, որի համար է, որ հարուստից պատկառում ենք եւ աղքատներին՝ արհամարհում: Հինգերորդ, քանի որ շատերին որպէս բարեկամ ունի ինչպէս ասում է առակը. «հարստութիւնը բարեկամներ է աւելացնում, իսկ աղքատը իր բարեկամից է զրկւում» (Առ 19.4): Վեցերորդ, քանի որ խօսքի մէջ համարձակ է, ինչպէս ասում է առակը. «հարուստը յանդուգն պատասխան է տալիս» (Առ 18.23) Եօթներորդ, քանի որ հարստութիւնը հանապազ ուրախացնում է, որպէս այն հարուստը, որ բեհեզ ու ծիրանի էր հագնում եւ ամէն օր առատապէս ուրախութիւն էր անում (Ղուկ 16.19): Ութերորդ, ուրիշ գործերի մէջ է հզօրանում բազում հարստութիւն հաւաքելով, ինչպէս ասում է ժողովուրդը. «արծաթ սիրողը արծաթից չի կշտանայ» (Ժող 5.4) եւ առակը. «ժրաջան ձեռքերը հարստացնում են նրան» (Առ 10.4): Իններորդ, քանի որ նրանք, որ նաեւ իմաստուն են, կարող են եւ հարստութեան միջոցով մեղքերի թողութիւն ստանալ, երբ ողորմում են աղքատին ըստ Ղանիէլի. «քո մեղքերը քաւիր ողորմութեամբ եւ քո անօրենութիւնները՝ աղքատներին գթալով» (Ղան 4.24): Տասներորդ, քանի որ կարող են նաեւ հոգեւոր բարեկամներ շահել, ինչպէս ասում է Տէրը. «անիրաւ մամոնայից ձեզ համար բարեկամներ արէ՛ք, որպէսզի երբ այն պակասի, յաւիտենական յարկերի տակ ընդունեն ձեզ» (Ղուկ 16.9): Այսքան այն մասին:

Հարց. Ո՞րն է աղքատի թշուառութիւնը:

Պատասխան. Առաջին, ամէն կողմից կապանքի եւ անհաջողութեան մէջ է լինում, ինչպէս ասում է Ղաւիթը. «աղքատութեանը կապուած էին ինչպէս երկաթին» (Սաղմ 106.10): Երկրորդ, ամէն տեսակ առարկաների կարօտութիւն է լինում, ինչպէս Ղազարոսին, որ ցանկանում էր հարուստի սեղանի փշրանքներից իր որովայնը լցնել (Ղուկ 16.20): Երրորդ, լի է ամէն տեսակ վշտերով եւ ցաւերով, ինչպէս

ասում է Դաւիթը. «աղքատ եւ ցաւած եմ ես, Աստուած» (Սաղմ 68.30), եւ դարձեալ. «նեղութիւնն ու վիշտն ինձ պատեցին» (Սաղմ 118.143) Չորրորդ, ատելի է լինում նոյնիսկ իր բարեկամներին, ինչպէս ասում է առակը. «աղքատներին ատում են նոյնիսկ իր բարեկամները» (Առ 14.20), ինչպէս Յոբի բարեկամները, որի պատճառով ասում էր. «մեղանշական բժիշկներ էք եւ ողջացնում էք չարիքներ միայն» (Յոբ. 13.4): Հինգերորդ, բոլորի հետ ողորելով եւ հանդարտ է խօսում, ինչպէս ասում է առակը. «ողոք խօսքերով է խօսում աղքատը» Առ (18.23): Վեցերորդ, ինչպէս ասում է առակը. «աղքատը անընդհատ պատուհասում է (Առ 13.8): Եօթներորդ, ինչպէս ասում է առակը. «աղքատութիւնը խոնարհեցնում է մարդուն» (Առ 10.4): Ութերորդ, ինչպէս ասում է առակը. «եթէ աղքատ ես, մի ձգտիր հարստութեան, այլ քո իմաստութեամբ հեռացիր նրանից» (Առ 23.4): Իններորդ, գողանում է, երբ կամաւոր աղքատութեան մէջ չի, ինչպէս Գէեգին, որ գողացաւ Նէեմանի արծաթն ու հանդերձները (Դ Թագ 5.22), եւ Անանիան ու Սափիրան, որ գողացան իրենց ազարակի գումարից (Գործք 5.1), եւ ինչպէս ասում է առակը. «հարստութիւն մի տուր ինձ, այլ ինձ համար կշռիր արժանին, որ բաւական է, չլինի թէ հարստանամ ու ստեմ, կամ աղքատանամ ու գողանամ եւ երդում ուտեմ իմ Տէր Աստծու անունով» (Առ 30.8): Տասներորդ, ինչպէս ասում է Ժողովողը. «աղքատի իմաստութիւնը արհամարհուած է, եւ նրա խօսքերը լսելի չեն» (Ժող 9.16):

Հարց. Ո՞րն է աղքատի շահը եւ հոգեւոր մեծութիւնը:

Պատասխան. Նախ, պէտք է գիտենալ, որ կայ ստիպողական եւ ակամայ աղքատութիւն, ինչպէս նրանցը, ովքեր դժկամում եւ դժգոհում են եւ հարստութիւն են ցանկանում. սա գովելի չէ: Եւ կայ կամաւոր աղքատութիւն, ինչպէս նրանցը, ովքեր գոհութեամբ եւ ուրախութեամբ են տանում իրենց հետ պատահածը. սա գովելի է, քանի որ ազատութեան մէջ է:

Իսկ սրանց շահը այս է: Նախ, ինչպէս ասում է Քրիստոս. «Երանի հոգով աղքատներին, քանզի նրանցն է երկնքի արքայութիւնը» (Մատթ. 5.3): Երկրորդ, մեղքերի յանցանքները աղքատութեամբ են քաւում, ինչպէս Ղազարոսինը, որի մասին Աբրահամը ասում էր. «դու ստացար քո բարիքները այնտեղ, քո կեանքի ընթացքում, իսկ սա՝ չարչարանքները. այժմ սա այստեղ մխիթարում է» (Դուկ 16.25): Երրորդ, Աստուած վրէժնորդի է աղքատների ու զրկուածների համար, ինչպէս ասում է առակը. «ով ծաղրում է աղքատին, նա զայրացնում է նրա Արարչին» (Առ 17.5), ինչպէս Դաւիթն է ասում. «աղքատի տառապանքի եւ տնանկի հեծութեան համար այժմ ես կելնեմ, ասում է Տէրը, կբերեմ իմ փրկութիւնը» (Սաղմ 11.6): Չորրորդ, ինչպէս ասում է առակը. «մարդիկ կան, որ իրենց հարուստ են ձեւացնում, բայց ոչինչ չունեն» սրանք հարուստներն են, «կան էլ, որ իրենց խեղճ են ձեւացնում, բայց լի են մեծ հարստութեամբ» (Առ 13.7), սրանք աղքատ են ըստ մարմնի եւ առատ երկնաւոր գանձերով: Հինգերորդ, ինչպէս ասում է առակը. «լաւ է արդար աղքատը, քան ստախօս հարուստը» (Առ 19.22), եւ Ժողովողի մէջ ասում է. «լաւ է աղքատ եւ իմաստուն տղան, քան թէ ծեր եւ անմիտ թագաւորը» (Ժող 4.13): Վեցերորդ, Ժողովողն ասում է. «քաղաքում կար աղքատ եւ իմաստուն մի մարդ, եւ նա իմաստութեամբ փրկեց քաղաքը» (Ժող 9.15): Եօթներորդ, ինչպէս ասում է առակը. «լաւ է բանջարեղէնի ճաշ ուտել սիրով եւ խաղաղութեամբ, քան թէ մսուրի արջառի միս՝ թշնամութեամբ» (Առ 15.17), եւ Դաւիթ մարգարէն. «լաւ է արդարի քիչ ունեցուածքը, քան մեղաւորների բազում ունեցուածքը, որոնք մարդուն տանում են դէպի չար գործեր եւ մարմնական հեշտութիւն, քանի որ նա ամէն ինչի ձեռահաս է, իսկ աղքատութիւնը բարեգործութիւն է մարդու համար, ինչպէս ասում է Դաւիթը. «լաւ է ինձ համար, որ խոնարհեցիր ինձ, որպէսզի սովորեմ քո արդարութիւնը» (Սաղմ 118.71): Իններորդ, աղքատները չունեն այս աշխարհի մեծութեան հոգսը, որով չարչարում են հարուստները ու չեն զբաղում Աստծու օրենքներով, որ Տէրը փուշ է անուանում ասելով. «աշխարհի հոգսերը եւ հարստութեան պատրանքները խեղդում են եւ լինում է անպտուղ» (Մատթ 13.22), իսկ աղքատը ազատ է սրանցից, այլ Տիրոջ օրէնքների մասին է խորհում գիշեր եւ ցերեկ, ինչպէս ասում է Դաւիթը (Սաղ 1.2): Տասներորդ, ինչպէս ասում է Դաւիթը. «նա կխղճայ աղքատին ու տնանկին, նրանց անձերը կփրկի չարագործների վաշխից» (Սաղմ 71.13), որ է դժոխքի տանջանքը, եւ դարձեալ. «Ես աղքատ եմ եւ տնանկ, Աստուած, հոգ տար իմ մասին» (Սաղմ 39.18), եւ դարձեալ. «Տնանկին օգնեց իր աղքատութեան մէջ, առաջնորդեց նրանց ինչպէս ոչխարների հօտի» (Սաղմ 106.41):

Հարց ողորմութեան մասին. Ինչո՞ւ Սողոմոնը աղքատին տուած ողորմութիւնը Աստծուն տուած փոխ է անուանում ասելով. «աղքատին ողորմութիւն տուող փոխ է տալիս Աստծուն» (Առ 19.17):

Պատասխան. Բազում պատճառներով է փոխ կոչում: Նախ, որովհետեւ ամէն կերպ հատուցում ունի: Եւ այստեղ ասում է ողորմածների համար որ իրենց ողորմութեան համեմատ հատուցում կստանան: Երկրորդ, որովհետեւ փոխատուն ողորմելով չի խնդրում պարտքը, ինչպէս եւ Յակոբոսն է ասում. «ողորմութիւնը բարձրագլուխ պարծենում է դատաստանի դիմաց» (Յակ 2.13): Երրորդ,

որովհետեւ փոխատուն երբ կամենայ, այն ժամանակ էլ առնում է, նոյնպէս եւ ողորմածը եթէ կամենայ, այստեղ կամնի, եթէ ոչ՝ հանդերձեալ կեանքում: Այստեղ՝ ինչպէս կեղծաւորները մարդկանցից են փառքն առնում, ինչպէս ասում է Տէրը (Մատթ 6.2): Իսկ այնտեղ՝ յայտնապէս կատանայ հատուցումը Հօրից (Մատթ 6.4), կամ այստեղ հարիւրապատիկը եւ այնտեղ յաւիտենական կեանքը, ինչպէս խոստացաւ Քրիստոս (Մատթ 19.29): Չորրորդ, որովհետեւ որքան դանդաղում է վճարումը, այնքան աւելանում է շահը. նմանապէս եւ այն ողորմածներին, ում հանդերձեալ կեանքում կհատուցուի, աւելի է շահը, քան նրանց, ովքեր կեանքում մարմնական բաներ կատանան որպէս հատուցում: Հինգերորդ, ովքեր փոխ են տալիս, երեքից մի բան են ուզում, այսինքն, կամ երաշխաւոր, կամ գրաւ, կամ վարձակալութեան պարտաւորագիր: Իսկ ողորմածը Քրիստոսից ունի հաստատուն կտակ, որ ասում է. «քանի որ իմ այս փոքր եղբայրներից մէկին արեցիք, այդ ինձ համար արեցիք» (Մատթ. 25.40): Իսկ երաշխաւոր է սուրբ հրեշտակը, որի միջնորդութեամբ տալիս է ողորմութիւնը: Իսկ գրաւ է աշխարհի բարիքները, որ վայելի այս կեանքում, մինչեւ հասնի հանդերձեալ կեանքին: Վեցերորդ, ինչ որ փոխ են տալիս, նոյնը եւ պահանջում են, այսինքն կամ փող, կամ արծաթ, որի համար էլ Պողոսը ասում է. «ինչ որ մարդս սերմանում է, նոյնը եւ կինձի, թէ՛ մարմնի համար եւ թէ՛ Հոգու» (Գաղ 6.8): Կեղծաւորների փողը, որ հնչեցնում են, մարդկանց ցուցադրելն է, եւ հենց դա է նրանց վարձքը, ասում է Տէրը: Իսկ արծաթը այն է, որի հատուցումը հանդերձեալում է, ինչպէս ասացինք: Եօթներորդ, որքան փոխ են տալիս, նոյնքան էլ պահանջում են: Եւ Տէրն էլ ասում է, ինչ չափով չափեք, նրանով պիտի չափուի ձեզ համար զեղուն, թաթաղուն» (Ղուկ. 6.38): Եւ դարձեալ. «տուեք եւ կտրուի ձեզ»: Ութերորդ, ով որ փոխ տայ, նա էլ կամնի, եւ ոչ ուրիշը: Դրա համար էլ ասում է Տէրը. «երանի ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմութիւն կգտնեն» (Մատթ 5.7), իսկ առակը. «աղքատին ողորմութիւն անողը ինքն էլ պիտի կերակրուի, որովհետեւ տնանկին իր հացից է բաժին հանել» (Առ 22.9), եւ դարձեալ ասում է առակը. «Ողորմած մարդը բարութիւն է անում իր հոգուն» (Առ 11.17): Իններորդ, ինչպէս որ միայն փոխն է մնում մարդուն, երբ մնացած ունեցուածքը կորչում է գողերի եւ աւազակների յարձակումից կամ ուրիշ դիպուածներից, նոյնպէս եւ ողջ ունեցուածքը կորչում է կեանքում եւ մահուան ժամանակ, քանի որ ոչինչ չբերեցինք աշխարհ եւ ոչինչ տանել չենք կարող, ասում է առաքեալը (Ա Տիմ 6.7): Իսկ ողորմութիւնը մնում է որպէս յաւիտենական գանձ, ըստ Տիրոջ խօսքի. «ձեզ համար շինեցէք չինացող քսակներ եւ անհատնում գանձեր երկնքում, ուր ոչ գողն է մօտենում, եւ այլն» (Ղուկ 12.33): Իսկ Ղաւիթն ասում է. «Բաժանեց նա ու տուեց աղքատներին, նրա արդարութիւնը կմնայ յաւիտեանս յաւիտենից, եւ նրա եղջիրը բարձր կլինի փառքով» (Սաղմ 111.9): Տասներորդ, ինչ որ ունի փոխատուն, այդ է խնդրում փոխառուն եւ ոչ թէ անկարելին. նոյնպէս եւ Աստուած ողորմութիւնը ըստ հնարաւորին է պահանջում եւ ոչ աւելին, այսինքն, մի բաժակ սառը ջուր, օտարներին ընդունել եւ հիւանդին տեսակցութեան գնալ, որ ամէն մարդու համար հնարաւոր է, ըստ Աւետարանի, միայն թէ ազատ կամքով եւ զուարթ երեսով, ինչպէս ասում է առակը. «Աստուած զուարթադէմ տուրքն է սիրում» (Առ 9.7), որովհետեւ Աստուած կամքն է սիրում եւ ոչ թէ ունեցուածքը, ինչպէս այրի կինը, որը երկու լումայ գցեց գանձանակը եւ գովուեց Քրիստոսից (Մարկ 12.41): Այսքանը որպէս համեմատութիւն փոխատուի հետ:

Եւ պէտք է գիտենալ, որ բազում առաւելութիւն ունի այն փոխը, որը Աստծուն ենք տալիս, քան այն, որը մարդկանց ենք տալիս: Նախ, որովհետեւ այստեղ մարդիկ մարմնական ունեցուածքն են փոխ տալիս եւ նոյնը առնում, իսկ Աստծուն մարմնաւորն են տալիս եւ հոգեւորը առնում, չնչինը տալիս, այսինքն արծաթը, ոսկին, կերակուրը, եւ մեծը առնում, այսինքն երկնքի արքայութիւնը ըստ այնմ. «քաղցած էի եւ ինձ ուտելիք տուիք եւ այլն, եկէք իմ Հօր օրհնեալներ, ժառանգեցէք երկնքի արքայութիւնը» (Մատթ 25.34): Երկրորդ, որովհետեւ ովքեր փոխ են տալիս մարդուն, այստեղ են միայն առնում, իսկ ով Աստծուն է փոխ տալիս, երկու կեանքում էլ առնում է. այստեղ՝ հարիւրապատիկը եւ այնտեղ՝ յաւիտենական կեանքը, ըստ Սաղմոսի. «բարի մարդը ողորմում է եւ խօսքն իր կատարում արդարութեամբ, որպէսզի յաւիտեան չսասանուի» (Սաղմ 111.5): Երրորդ, այստեղ մարդը մարդուն է փոխ տալիս, որոնք հաւասար են, ինչպէս ասում է Տէրը. «մեղաւորները մեղաւորներին են փոխ տալիս, որպէսզի նոյն չափով ետ առնեն» (Ղուկ 6.34): Իսկ ով ողորմում է աղքատին, փոխ է տալիս Աստծուն, ասում է Սողոմոնը, որ առաւել մեծ բան է Աստծուն պարտական ունենալ: Չորրորդ, այստեղ ինչպէս տալիս են, այնպէս էլ առնում են, իսկ այն փոխը ծածուկ են տալիս, եւ յայտնի առնում մեծ տիեզերական հրապարակի վրայ, ըստ այնմ. «քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ յայտնապէս» (Մատթ 6.4): Հինգերորդ, այստեղ միջնորդը մարդիկ են, իսկ այնտեղ հրեշտակները, որտեղ ամենեւին զլացում չկայ, ինչպէս ասաց Կոռնելիոսին. «քո աղօթքներն ու ողորմութիւնները Աստծու առաջ ելան յիշատակի համար» (Գործք 10.4): Վեցերորդ, ովքեր այստեղ են փոխ տալիս, տոկոսն էլ են առնում, որով մեղքն է բազմանում ըստ այնմ. «անօրենութիւն եւ չարիք կայ նրանց մէջ եւ վաշխն ու նենգութիւն

չպակասեց նրանցից» (Սաղմ 54.12), իսկ այն փոխը մեղքն է քաւում եւ մեղքերի վաշխը, որը դժոխքի տանջանքն է, ինչպէս ասում է Ղանիէլը. «քո մեղքերը ողորմութեամբ կքաւես» (Ղան 4.4): Իսկ Ղաւիթը ասում է. «ով խնայում է աղքատին եւ տնանկին, իր անձը կփրկի չարերի վաշխից» (Սաղ 71.14): Եօթներորդ, այստեղ հարուստները փոխ են տալիս աղքատներին, իսկ այնտեղ աղքատներին տրուած փոխը տալիս ենք հզօր Աստծուն, որը անկարօտ է, քանի որ Տիրոջն է երկիրն իր ամբողջութեամբ, ասում է մարգարէն (Սաղմ 23.1), եւ դարձեալ. «իմն է արծաթը, իմն է ոսկին եւ այլն» (Անգէ 2.9): Ութերորդ, այստեղ փոխատուն աղքատանում է եւ փոխառուն հարստանում, իսկ այնտեղ փոխառուն՝ Աստուած որեւէ պակասութիւն չունի, որ լիանայ, այլ փոխատուն լիանում է ամէն բանով նրանից, ով փոխն առաւ ինչպէս ասում է Պօղոսը. «Աստուած լցնի ձեզ ամէն բարիքներով» (Փիլ 4.19): Իններորդ, այստեղ փոխատուն ոչնչով առաւել չէ փոխառուից, այլ իրենն է տալիս, իսկ այնտեղ նրանից ենք առնելու բոլոր պարգեւները, եւ դարձեալ, փոխ ենք տալիս նրան, որովհետեւ. «ամէն բարի շնորհ եւ ամէն կատարեալ պարգեւ վերեւից է իջած, լոյսի Հօրից», ինչպէս ասում է Յակոբոսը (Յակ 1.17): Տասներորդ, այստեղ փոխ ենք տալիս նրան, ումից ակնկալում ենք յետ ստանալ, իսկ այն փոխը, որը աղքատին ենք տալիս, ոչ թէ նրանից, այլ Աստծուց ենք ակնկալում ստանալ, ինչպէս ասում է Տէրը. «փոխ տուէք նրան, ումից յետ առնելու ակնկալութիւն չունեք, այլ ձեր հատուցումը կլինի Աստծու արքայութեան մէջ» (Ղուկ 6.35): Ղարձեալ, պէտք է գիտենալ, որ մարդկանց վեց տեսակ կայ, որոնց փոխ չեն տալիս, թէպէտ եւ խնդրեն, եւ այս պատճառներից ամենեւին ազատ է Քրիստոս, որը աղքատների միջոցով է խնդրում փոխը: Նախ, փոխ չեն տալիս օտար եւ անծանօթ մարդուն, իսկ Քրիստոս ծանօթ է մեզ, որովհետեւ մեր Ստեղծողն ու Արարիչն է, եւ մեր սիրոյ համար եղավ մարդ՝ մեզ բնութենակից եւ մեր եղբայրների ձեռքով խնդրում է ողորմութեան փոխը, ուստի պէտք է տալ նրան: Երկրորդ, փոխ չեն տալիս նրան, ով ընտանիք չունի, ասում են կառնի ու կիպիսի, իսկ մեր Տէրը Յիսուս Քրիստոս չի փախչի, այլ մեր մէջ է ըստ այնմ. «ես ձեզ հետ եմ բոլոր օրերում մինչեւ աշխարհի վերջը» (Մատթ 28.20), եւ աղքատների միջոցով շրջում է ձեր դռան առաջ եւ նրանց ձեռքով առնում ողորմութիւն: Նաեւ էակից Հայրը եւ փառակից Սուրբ Հոգին: Երրորդ, եթէ շատ աղքատ է. իսկ մեր Տէր Քրիստոսը ամենաառատն ու փարթամն է հարստութեամբ, այնպէս որ ինքն է ամէն ինչ լցնում ողորմութեամբ ըստ այնմ. «Տիրոջ ողորմութեամբ լցուեց երկիրը» (Սաղմ 32.5): Չորրորդ, եթէ դատարկապորտ եւ անգործ է, ուտող եւ հարբեցող, իսկ մեր Տէրը ասում է. «իմ Հայրը մինչեւ հիմա գործում է, եւ նույնպէս գործում եմ» (Յովի 5.17): Եւ դարձեալ ասում է. իմ կերակուրն այն է, որ կատարեմ իմ Հօր կամքը, այսինքն մարդկանց փրկութիւնը (Յովի 4.34): Հինգերորդ, եթէ ուրացող եւ ստախօս է, իսկ մեր Տէր Յիսուս Քրիստոս ստախօսին սատանայի որդի է անուանում (Յովի 8.44), եւ Իր մասին ասում է. «Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը» (Յովի 14.6): Վեցերորդ, եթէ բռնացող եւ զրկող մարդ է, փոխ չեն տալիս ասելով, թէ ուրիշներինը առավ ու չվերադարձրեց: Իսկ մեր Տիրոջ մասին մարգարէն ասում է. «ողորմութեամբ քո եւ իրավունքով կօրինեմ քեզ» (Սաղմ 100.1), որովհետեւ ողորմութեամբ իրեն մահուան մատնեց եւ փրկեց մեզ: Մեր ստացած փրկութեան պատճառը, ինչպէ՞ս կզրկի մեզ: Եւ քանի դեռ մեռած էինք մեր մեղքերի մէջ, կենդանացրեց մեզ, ասում է առաքեալը (Եփ 2.4) եւ ինչպէ՞ս արդարանալիս չի շնորհի մեզ ամէնը (Հռ 5.9): Քանի որ նա բարիք է գործում բարիներին եւ նրանց, որ ուղիղ են սրտով: Ուստի մենք պէտք է համարձակորեն բարիք գործենք հանուն նրա անուան, ողորմենք աղքատին եւ փոխ տանք Աստծուն:

Հարց գինու եւ հարբեցողութեան մասին: Ո՞րն է գինու օգուտը եւ ո՞րն է վնասը:

Պատասխան. Չափաւոր օգտագործելը մերժելի չէ Սուրբ Գրքի տեսանկիւնից բազում պատճառներով, որ յայտնի է վկայութիւններից: Նախ, գինին ուրախարար է ըստ Ղաւթի. «գինին ուրախացնում է» (Սաղմ 103.15): Երկրորդ, որովհետեւ բժշկարար է ըստ Պօղոսի. «Այսուհետեւ միմիայն ջուր մի խմիր, այլ մի քիչ գինի էլ խառնիր՝ քո ստամոքսի եւ յաճախակի տկարութիւնների պատճառով» (Ա Տիմ 5.23): Երրորդ, որովհետեւ ոչ թէ չար է, այլ բարի, եւ մէկն է Աստծու բարի ստեղծութեան ըստ այնմ. «Աստուած տեսաւ...որ այն ամէնը, ինչ ստեղծել էր, շատ բարի էր» (Շննդ 1.31): Չորրորդ, մեր Տէրը Իր մարդեղութեան ժամանակ ջուրը գինի դարձրեց (Յովի 2.8): Հինգերորդ, ինքը՝ Բանն Աստուած իր աշակերտների հետ գինի ճաշակեց ըստ այնմ. «այլեւս որթատունկի բերքից չեմ խմի մինչեւ այն օրը, երբ ձեզ հետ կխմեմ նորը իմ Հօր արքայութեան մէջ» (Մատթ 26.29): Վեցերորդ, որովհետեւ Իր արիւնն իսկ դրանով ուխտեց վերնատանը ըստ այնմ. «բաժակ վերցնելով գոհութիւն յայտնեց, տուեց նրանց եւ ասաց. այդ է նոր ուխտի իմ արիւնը» (Մատթ 26.28): Եօթներորդ, թոյլ է տալիս չզգալ մարմնական ցաւերի կսկիծը, երբ զմտուած տան մարդուն, ինչպէս է մեր Տիրոջը տուին գինուորները խաչելութեան ժամին, ինչպէս նաեւ առակն է ասում. «ըմպելիք մատուցէք վշտացածներին, գինի տուէք ըմպելու տառապեալներին, թող խմեն եւ մոռանան իրենց ցաւերը» (Առ 31.6): Ութերորդ, ծերերին կարողութիւն եւ զօրութիւն է տալիս: Իններորդ, նաեւ մարտիրոսական արիւնն է առակով ակնարկում Տէրը. «իմ բաժակը

կխմէք» (Մատթ 20.23), եւ յետոյ. «Քո հազուստներն ինչո՞ւ են կարմիր, քո հազուստներն ասես հնձանահարի հազուստներ լինեն, որ տրորում է լեցուն հնձանը». պատասխանում է. «Ես մենակ ճնլեցի հնձանը» (Ես 63.2), այսինքն խաչի վրայի չարչարանքների մասին է ասում: Տասներորդ, նաեւ Սուրբ Հոգու իմաստութեան մասին է առակով ասում Ղաւիթը. «Կհարբեն նրանք քո տան պարարտութիւնից եւ այլն» (Սաղմ 35.9) եւ առակը. «Իմաստութիւնը շինեց իր տունը, խառնեց պատրաստեց գինին» (Առ 9.2), այսինքն Հին եւ Նոր կտակարանները: Այստեղից երեւում է, որ չափաւորը արգահատելի չէ:

Իսկ գինու չափազանց օգտագործումը անարգելի է, որովհետեւ ինչպէս երկաթը, որ տրորած է տարբեր աշխատանքների համար, ոմանք սպանելու համար են գործածում: Եւ այսպէս ամուսնութիւնը, որ պատուական է որդեծնութեան համար, ոմանք ծառայեցնում են որպէս առիթ հեշտանքի: Նոյնպէս եւ գինին են չափից դուրս ընկում, եւ այն, որ Աստծուց բարի է ստեղծուած, չարիք են դարձնում իրենց անձերի համար: Առաջին վնասը այն է, որ հարբեցողը անարգում եւ թշնամանում է նոյնիսկ սիրելիներին, ինչպէս ասում է առակը. «գինին անառակ է եւ հարբեցողութիւնը՝ թշնամութիւն գործող» (Առ 20.1): Երկրորդ, զրկում է խելքի բանական մասից, որով Աստծու պատկեր ենք, ինչպէս ասում է առակը. «ովքեր հաղորդակցուում են գինուն, իմաստուն չեն» (Առ 31.4): Երրորդ, ունեցուածքի պակասութիւն է առաջացնում, որով զրկում է կնոջն ու որդիներին ու իր սիրելիներին, ինչպէս ասում է առակը. «Եթէ աչքը զցես թաս ու բաժակի, յետոյ պիտի սանդի կոթի պէս տկլոր ման գաս» (Առ 23.31): Եւ դարձեալ ասում է. «ամէն հարբեցող եւ բոզարած եւ քնի մէջ թմրած ամէն մարդ պատառոտուն հազուստ պիտի հագնի» (Առ 23.21), քանի որ ինչ ուներ, վաճառեց եւ այլեւս չի կարող վաստակել: Չորրորդ, թուլացնում եւ ծռում է բոլոր զգայարանները, որովհետեւ ուղիղ խօսել չի կարող եւ ուղիղ ընթանալ. ականջներով խլացած է եւ դիւահարուած աչքերով է շրջում: Հինգերորդ, շնացողների եւ պոռնիկների հետ միասին արտաքսուում է Աստծու արքայութիւնից, ինչպէս ասում է Պողոսը. «ոչ շնացողները, ոչ պոռնիկները, ոչ հարբեցողները Աստծու արքայութիւնը չեն ժառանգելու» (Ա Կոր 6.9): Վեցերորդ, Աստծու բարկութիւնը աշխարհի վրայ է շարժում «ինչպէս Նոյի օրերը. ուտում էին եւ խմում, կին էին առնում եւ մարդու գնում, որի համար էլ եկաւ ջրհեղեղը եւ բոլորին կորստեան մատնեց», ասում է Տէրը (Ղուկ 17.27): Նոյնպէս անապատում հորթ պատրաստեցին եւ գինի ըմպեցին եւ վեր կացան պարելու (Ելք 32.6), որի պատճառով Մովսէսը բարկանալով խորտակեց օրէնքի տախտակները եւ նրանցից երեք հազար տղամարդ սպանեց սրով: Նմանապէս շատերը յարեցին Բելվեգովրին, կերան մելելոտի եւ զոհերի գինուց խմեցին եւ խառնակուեցին նրանց դուստրերի հետ, որի պատճառով, ասում է, մեռան նրանցից քսաներեք հազար տղամարդ, մինչեւ Փենէիէսը քաւութիւն կատարեց եւ դադարեց մահը (Թուր 25.1): Այս մտքով է ասում նաեւ Աւետարանը. «Ձգոյշ եղեք ինքներդ ձեզանից, գուցէ ձեր սրտերը ծանրանան գեխութեամբ եւ հարբեցողութեամբ եւ աշխարհիկ հոգսերով. եւ յանկարծակի հասնի ձեր վրայ այդ օրը» (Ղուկ 21.34): Եօթներորդ, գինին պատճառ եւ առիթ է լինում պոռնկութեան, երբ բորբոքում է ցանկականը եւ մղում այդ գործին ինչպէս ասում է առակը. «ովքեր ամբարշտութեամբ հաց են ուտում եւ հարբում են անօրէնութեան գինով, քանզի նրանք մինչեւ չարիք չգործեն, չեն քնում» (Առ 4.17): Եւ մարգարէն էլ ասում է. «Քո քրոջ՝ Սողոմի անօրէնութիւնն այս էր՝ ամբարտաւանութիւն, հացով լիացածութիւն, գինու մէջ յղվացածութիւն» (Եզե 16.49), ինչպէս Ղովտը, որ հարբեց եւ անօրէն խառնակութիւն գործեց (Ծննդ 19.36): Ութերորդ, Նոյն նոյնպէս գինի խմեց եւ բացուեց նրա մերկութիւնը, եւ մեղանչեց Քամը, որի համար անիծեց Քամի որդի Քանանին եւ ասաց. «Անիծեալ լինի ստրուկ Քանանը» (Ծննդ 9.25): Իններորդ, տարբեր հիվանդութիւններ է առաջացնում մարմնի մէջ եւ շատերին մահ է բերում իր զօրութեան պատճառով, ինչպէս ասում է առակը. «այնպիսին շուտով պիտի մեռնի եւ բոլոր անօրէնները վերջանան» (Առ 23.28): Տասներորդ, մղում է բարկութեան եւ ծեծկռտութիւն ինչպէս ասում է առակը. «Ո՞ւմ համար է վայր, ո՞ւմ համար է խռովութիւնը, ո՞ւմ համար են դատաստանները, ո՞ւմ համար են դաժանութիւններն ու տարակուսանքները, ո՞ւմ են աջ ու ձախ տրուած հարուածները եւ ո՞ւմ են հարուածից կապտած աչքերը, ո՞չ արդեօք նրանցը, ովքեր տարուում են գինով, ովքեր նայում են, թէ որտեղ գինարբուք կայ» (Առ 23.29): Այսքան այս մասին:

Կշռի մէջ խաբողների մասին հարց. «Թէ՛ մեծ, թէ՛ փոքր ծուռ կշեռքը եւ թէ՛ երկակի չափը, երկուսն էլ պիղծ են Տիրոջ առջեւ» (Առ 20.10):

Պատասխան. Մի շարք պատճառներով են պիղծ այդպիսիները: Նախ, որովհետեւ ով մարդու է խաբում, Աստծուն է խաբում, որի պատկերին խաբեց: Երկրորդ, որովհետեւ չի հաւատում, որ Աստուած տեսնում է ամէն գործ. ըստ այնմ. «նրա աչքերի առաջ Աստուած չկայ, նրա ճանապարհները պիղծ են ամէն ժամ» (Սաղմ 9.5): Երրորդ, որովհետեւ չի հավատում Աստծու դատաստաններին, թէ գողերի հետ պիտի դատապարտուի: Չորրորդ, որովհետեւ ավելի չար է, քան գողը, քանի որ գողը վախենալով եւ ծածուկ է գողանում իսկ նա՝ բացայայտ նստած հրապարակում, որը կրպակն է, այսինքն կուղպակ, որը

ստուգաբանում է գող բալ: Հինգերորդ, քանի որ մարդիկ լսելով աւագակներից խոյս են տալիս եւ նրա մոտ որպէս բարի եւ սիրելի մէկի մօտ են գնում: Վեցերորդ, որովհետեւ գողը մի անգամ է գողանում մէկի ունեցվածքը, իսկ նա բազում անգամ է գողանում միեւնոյն մարդուց խաբէութեամբ: Եօթներորդ, որովհետեւ աւագակը ուրիշի մարմինն է սպանում, իսկ նա իր հոգին է սպանում մատնելով գեհեներին, եւ ինչպէս որ հոգին աւելի մեծ է, քան մարմինը, նոյնպէս եւ մեծ է նրա մահը: Ութերորդ, քանի որ ազահուրին է անում, որը կռապաշտութիւն է, ասում է առաքեալը (Եփ 5.5): Իններորդ, որովհետեւ Աստուծու անունը սնտի բաների վրայ է կանչում եւ երդում, որ Քրիստոս հրամայում է ամենեւին չերդուել (Մատթ 5.34): Տասներորդ, որովհետեւ ուրիշներին է գործակից դարձնում իր մեղքերին՝ նրանց իրեն վկայ բռնելով եւ նրանք սուտ են վկայում, որպէսզի նա էլ իրենց համար վկայի, եւ պատժուում են Քրիստոսի սուտ վկաների հետ միասին, ովքեր Պիղատոսին խաբեցին եւ պատժուեցին յաւիտենական հրով, քանզի ասում է առաքելը. «Ստախոս վկան անպատիժ չի մնայ» (Առ 19.5):

Հարց համբերութեան մասին. Ի՞նչ օգուտ կայ համբերութիւնից:

Պատասխան. Առաջին, որ Աստուած նրանց օգնական է եւ տալիս է համբերութեան շնորհը, եւ շուտափոյթ ցոյց է տալիս ելքը, ինչպէս ասում է Պօղոսը. «հաւատարիմ է Աստուած, որ ձեզ աւելի փորձութեան մէջ չի զգելու, քան կարող էք տանել, եւ փորձութեան հետ փրկութեան ելք էլ է ցոյց տալու, որպէսզի կարողանաք համբերել» (Ա Կոր 10.13): Երկրորդ, սէր ծնում, ինչպէս ասում է առաքեալը. «համբերութիւնը յոյս է բերում եւ սա սէր է սփռում» (Հռ 5.4): Երրորդ, որ Աստուած համբերողների համար վրէժխնդիր է լինում, ինչպէս ասում է առաքելը. «մի խնդիր վրէժ քո թշնամիներից, այլ համբերիր եւ Տէրը կօզնի քեզ» (Առ 20.22), ինչպէս Ղաւթի համբերութեան համար վրէժխնդիր եղաւ Սաւուղին: Չորրորդ, որ Աստուած հեշտութեամբ է լսում համբերողների աղօթքին, ինչպէս Ղաւթին. «համբերելով համբերեցի Տիրոջը, նայեց ինձ եւ լսեց իմ աղօթքի ձայնը» (Սաղմ 39.2): Հինգերորդ, որ համբերութիւնը մօտեցնում է բոլոր գործերի կատարումը, ինչպէս ասում է Յակոբոսը. «Թող համբերութիւնը կատարեալ ներգործութիւն ունենայ» (Յակ 1.14): Վեցերորդ, որ համբերութիւնը յաւիտենական կեանքի առիթ է ըստ այնմ. «Ձեր համբերութեամբ պիտի շահեք ձեր հոգիները» (Ղուկ 21.19) եւ «ով մինչեւ վերջ համբերի, նա պիտի փրկուի» (Մատթ 10.22), ինչպէս մարտիրոսների դասերը: Եօթներորդ, որ համբերութիւնը անուանի եւ փառաւոր է դարձնում եւ ուրիշներին յորդորում է նոյնին ըստ այնմ. «Լսել էք Յօրի համբերութեան մասին» (Յակ 5.11), որով ինքը հռչակուեց: Ութերորդ, որ համբերողը բազում անհամբերների սատակումը պիտի տեսնի ըստ մարգարէի. «համբերիր Տիրոջը եւ պահիր նրա ճանապարհները եւ կբարձրացնի քեզ՝ երկիրը ժառանգելու եւ կտեսնես մեղաւորների կործանումը» (Սաղմ 36.34): Իններորդ, որ համբերութիւնը ուրիշներին զղջման է տանում, ինչպէս ասում է Պօղոսը հռոմեացիներին գրուած թղթում. «Աստուծու երկայնմտութիւնը քեզ զղջման է տանում, իսկ դու քո խստասրտութեամբ եւ անզեղ սրտով քո անձի դէմ բարկութիւն եմ դիզում» (Հռ 2.5): Նոյն մտքով Տէրն էլ է օրինադրում. ով քո մի ծնօտին խփի եւ այլն, ով քո բաճկոնը հանի եւ այլն, եթէ մէկը քեզ ստիպի մի մղոն ճանապարհ անցնել եւ այլն (Մատթ 5.39): Տասներորդ, համբերութիւնը մարդուն դարձնում է Աստուծուն նման եւ անուանակից, որովհետեւ Ղաւթը Աստուծուն անուանում է ողորմած, գթած եւ երկայնամիտ:

Հարց թագաւորների եւ իշխանների մասին. «Ինչպէս ջրի հոսանքը, այնպէս էլ թագաւորի սիրտը Աստուծու ձեռքին է, նա որ կողմ կամենայ, այն կողմ էլ կդարձնի այն» (Առ 21.1):

Պատասխան. Ովքեր մտադրութեամբ եւ անձնիշխան կամքով չարն են գործում, այս շնորհի մէջ չեն, ինչպէս չար թագաւորները, որոնք հակառակում են Աստուծու կամքին: Իսկ ովքեր Աստուծու կամքի սպասաւորներն են, երկու պատճառով է Աստուած նրանց տալիս թագաւորութիւնը. կամ մեղաւորներից վրէժխնդիր լինելու, կամ էլ արժանաւորներին բարերարութիւն անելու: Վրէժխնդիր լինելու, ինչպէս Նաբուգոդոնոսորը, որի մասին Աստուած ասում է. «Ոսկի բաժակ է իմ ձեռքին Նաբուգոդոնոսորը, ում ուզեմ՝ կհարբեցնեմ», ինչպէս դառնութեան մրուրը խմեցրեց Իսրայելի ազգին: Իսկ բարերարութեան համար, ինչպէս Կիրոսը, որը առանց կաշառքի ու նուերի վեարդարձրեց Իսրայելի գերիներին: Դրա համար մարգարէն ասում է. «այսպէս է ասում Տէր Աստուած իր օժեալ Կիրոսին, որի աջ ձեռքից բռնեցի եւ զօրացրեցի նրան» (Ես 45.1): Նմանապէս բոլոր թագաւորներն ու իշխանները այս պատճառով են տիրում երկրներին ու գաւառներին:

Հարց. Ի՞նչ է նշանակում. «Խորհուրդը մտքով է պատրաստում, եւ պատերազմը իմաստութեամբ է մղում» (Առ 20.18):

Պատասխան. Ոչ թէ զօրքի բազմութեամբ է փրկուում թագաւորը, եւ ոչ էլ հսկան իր զօրութեան մեծութեամբ, ինչպէս յայտնի է փարաւոնի օրինակից, որը մեծ զօրք ունէր, եւ Գողիաթից, որը քաջ հսկայ էր:

Եւ պէտք է իմանալ, որ չորս տեսակ իմաստութեամբ պէտք է վարուել պատերազմի ժամին: Նախ, զօրապետի բարեպաշտութիւնն ու աղօթքը, ինչպէս ասում է Դաւիթը. «Ձին անօգուտ է փրկութեան համար, Տիրոջ աջքն իր երկիւղածների եւ իր ողորմութեանը յուսացողների վրայ է» (Սաղմ 32.17): Եւ Եզեկիայից էլ յայտնի է դա, որը աղօթքով յաղթեց Ռափսակին. նրա զօրքից հարիւր ութսունհինգ հազար մարդ կոտորուեց (Դ Թագ 19.35): Երկրորդ, պէտք է իմանայ պատերազմի ճակատ հարդարել, որի համար էլ ասում է առակը. «պատերազմը առաջնորդութեամբ է մղուում» (Առ 24.6): Երրորդ, որ քաջալերի զօրքին յորդորելով արիանալ. «եղբօրից օգնութիւն ստացած եղբայրը նման է ամուր քաղաքի եւ հզօր ու բարձր է, ինչպէս հաստատուն թագաւորութիւնը» (Առ 18.19), որովհետեւ «Թագաւորի զուարթութիւնը նման է դալար խոտի վրայ կաթած ցօղի» (Առ 19.12) Չորրորդ, որ մեծամեծ պարգէներ է խոստանուում, ինչպէս ասում է. «Կաշառք տուողը յաղթութիւն է ստանում» (Առ 22.9): Եւ դարձեալ ասում է. «Ողորմածութիւնն եւ ճշմարտութիւնը թագաւորի պահապաններն են» (Առ 20.28):

Հարց. Ի՞նչ է պէտք թագաւորներին եւ ի՞նչ նրանց ենթականերին:

Պատասխան. Հինգ բան է հարկաւոր թագաւորին եւ իշխանին: Առաջին, բարեպաշտութիւնն եւ արդարութեան գործեր, որպէսզի ենթականերն էլ նոյնը սովորեն նրանից. նրանց Դաւիթը խրատում է. «Արդ, թագաւորներ, ուշ դարձրեք սրան եւ խրատուեցէք, ծառայեցէք Տիրոջը երկիւղով եւ այլն» (Սաղմ 2.10), իսկ առակը ասում է. «Արդարութիւնը սիրեցէք դուք, որ դատում էք երկիրը, Տիրոջ մասին բարութեամբ խորհեցէք եւ սրտի միաստութեամբ փնտրեցէք նրան» (Իմաս 1.1): Երկրորդ, թագաւորին իմաստութիւն է հարկաւոր, որով կարողանայ ժողովրդին առաջնորդել, ինչպէս ասում է առակը. «հանձարեղը առաջնորդութիւն ստանայ» (Առ 1.5): Եւ դարձեալ ասում է. «շրթունքներով հովուում է թագաւորը» (Առ 22.12), այսինքն խօսքերի իմաստութեամբ, որի պատճառով Սողոմոնը Աստուծուց միայն իմաստութիւն խնդրեց եւ նա ասաց նրան. «որովհետեւ չխնդրեցիր արծաթ կամ ոսկի կամ յաղթութիւն թշնամիների վրայ, կտամ քեզ իմաստութիւն այնպէս, որ ոչ՝ քեզանից առաջ եւ ոչ՝ քեզանից յետոյ Երուսաղեմում քեզ նման իմաստուն չի լինի» (Գ Թագ 3. 12): Իսկ անմիտների մասին ասում է. «վա՛յ քեզ քաղաք, որ քո առաջնորդը մանուկ է» (Ժող 10.16): Երրորդ, որ արդար իրաւունքով չարերին պատժում է եւ բարիներին պատուի արժանացնում, եւ դրանով աշխարհը մնում է խաղաղութեան մէջ, ինչպէս ասում է առակը. «գարշելի է չարիք գործողը թագաւորի համար եւ ընդունելի են թագաւորի համար արդար շրթունքները» (Առ 16.12): Եւ դարձեալ ասում է. «իմաստուն թագաւորը ցրում է ամբարիշտներիին, եւ անուի տակ է գցում նրանց» (Առ 20.26): Եւ դարձեալ ասում է. «թագաւորի սպառնալիքը նման է առիժի մռնչիւնին» (Առ 19.12), նմանապէս պէտք է ահարկու լինել ամբարիշտների եւ ապստամբների նկատմամբ: «Նրա զուարթութիւնը նման է դալար խոտի վրա եղող ցօղի», նմանապէս անհրաժեշտ է քաղցր լինել բարիների եւ հնազանդների նկատմամբ, քանի որ «թագաւորի պատիւը իրաւունք է սիրում» (Սաղմ 98.4): Չորրորդ, որ ողորմած լինի աղքատների, եկուորների եւ օտարների նկատմամբ, եւ դրանով աշխարհը շինութեան մէջ է մնում, ինչպէս ասում է առակը. «ողորմածութիւնը եւ ճշմարտութիւնը պահապան են թագաւորի» (Առ 20.28): Հինգերորդ, որ սուտ չխօսի եւ չխաբի ինչպէս ասում է առակը. «թագաւորի լեզուից թող սուտ դուրս չգայ, եւ խաբութիւն չելի նրանից» (Առ 24.2), որի պատճառն այն է, որ մարդ սուտ է խօսում տկարութիւնից, եւ խաբում է երկիւղից դրդուած: Իսկ թագաւորը կարող է եւ հզօր, որովհետեւ չի վախենում որեւէ մէկից, ուստի պէտք չէ, որ թագաւորը ստի կամ խաբի: Այս բանը նաեւ Սիրաքն է ասում. «իմ հոգին ատեց երեք տեսակ մարդկանց՝ աղքատ հպարտը, ստախօս հարուստը եւ ծեր պոռնիկը» (Սիրաք 25.3): Նաեւ պէտք չէ անզգամ եւ ստախօս մարդկանց լսել, ինչպէս Սողոմոնի որդի Ռոբովամը, որ թողեց ծերերի խրատը եւ ընդունեց յիմար երիտասարդների խրատը, որի պատճառով ճեղքուեց նրա թագաւորութիւնը եւ բաժանուեցին տասը ցեղերը նրանից (Գ Թագ 12.11): Այս բոլորը պէտք է իւրաքանչիւր իշխանի եւ թագաւորի:

Շառաների մասին: Իսկ թագաւորների ենթականերին պէտք է նախ, իմաստութիւն, ինչպէս ասում է առակը. «խելացի սպասաւորը հաճելի է թագաւորին. իր փութաջանութեամբ նա թոթափում է անարգանքը» (Առ 14.35): Եւ դարձեալ ասում է. «տունը իմաստութեամբ է շինուում եւ հանձարով են լցուում շտեմարանները ամէն տեսակ հարստութեամբ եւ բարիքով» (Առ 24.3): Երկրորդ, պէտք է հաւատարմութիւն տիրոջ ունեցուածքի հանդէպ, որ չվատնի կամ ինքը գողանայ, այլ ամէն բան խնամքով պահի եւ տիրոջ համար օգտագործի: Այդպիսին նման է իմաստուն տնտեսին, որ երանութիւն ստացաւ Տիրոջից, ինչպէս Յովսէփը՝ փարաւոնի եւ Դանիէլը՝ Նաբուգոդոնոսորի նկատմամբ հաւատարմութիւն ցուցաբերեցին: Բայց այդպիսի մարդ դժուար է գտնել, ինչպէս ասում է առակը. «հաւատարիմ մարդ գտնելը դժուարին գործ է» (Առ 20.6), իսկ նրա մասին, որ հաւատարիմ չէ իր տիրոջը, այլ վատնող եւ գող, առակը ասում է. «հարստութիւնն արծուի թելեր է շինում իր համար եւ վերադառնում է իր վերակացութիւնը, այսինքն իր նախնիների տունը» (Առ 23.5): Քանի որ եթէ ծածուկ պահել է կամ

թաղել ունեցուածքը, իր երկմտութիւնը ձկան կարթի նման կլինի եւ դուրս կնետի նրա հարստութիւնը, ինչպէս Համանի համար եղավ Արտաշէս թագաւորից (Եսթեր 7.10): Երրորդ, որ արթուն եւ քաջ լինի գործի մէջ եւ ոչ համր, ինչպէս ասում է առակը. «Իր գործի մէջ արագ եւ զգոյշ մարդը թագաւորի առաջ պիտի կանգնի» (Առ 22.29): Եւ դարձեալ ասում է առակով. «Եթէ աղքատ ես, մի ձգտիր հարուստի մօտ լինել, այլ քո իմաստութեամբ հեռացիր նրանից» (Առ 23.4), այսինքն եթէ ժիր եւ պատրաստակամ չես, մի մտիր թագաւորի գործի մէջ, այլ հեռացիր իմաստութեամբ, որպէսզի չտուժես, երբ գործը թերի մնայ քո ծուլութիւնից: Զորրորդ, հարկաւոր է երկիւղ ունենալ, ինչպէս ասում է առակում. «որդեակ, վախեցիր Աստծուց եւ թագաւորից» (Առ 24.21), որովհետեւ «Աստծու սպասաւորներ են նոյն բանի համար կանխապէս նշանակուած» ըստ Պօղոսի (Հռ 13.6): Իսկ եթէ մէկը ասում է. Աստծու երկիւղը անսխալ է, Իսկ թագաւորինը՝ ոչ այդպէս, որովհետեւ սխալում է, երբ հաւատի կողմից է քննադատուում կամ որեւէ վատթար գործ է կատարում: Պէտք է ասեմ, որ բացի այս երկուսից թագաւորի բոլոր գործերին եւ հրամաններին պէտք է ենթարկուել, քանի որ այդ երկուսի մէջ Աստծու հրամանին պէտք է ենթարկուել, որը մեծ է բոլոր թագաւորներից, որովհետեւ նախ ասաց՝ Աստծուց վախեցիր եւ ապա՝ թագաւորից: Քանի որ յանկարծակի կկանչեն ամբարիշտներին եւ երկուսի պատուհասը ո՞վ կարող է իմանալ, քանի որ ինչպէս Աստծու դատաստանները անքննելի են եւ անհետազօտելի՝ ըստ Պօղոսի (Հռ 11.33), նոյնպէս եւ թագաւորինը՝ անսպասելի ժամին: Քանի որ երբ Յովաքը կարծում էր թէ իր մահը Դաւթից կլինի՝ այն բոլոր երախտիքների պատճառով, որ ուներ նրա նկատմամբ, սա իր մահուան ժամին Սողոմոնին պատուիրեց Յովաքին արեամբ հանդերձ դժոխք իջեցնել, այսինքն գերեզման (Գ Թագ 2.6): Դրա համար էլ առակը ասում է. «թագաւորի լեզուն սուր սուսեր է եւ ով մատնուի նրան, կխորտակուի կամ հօդերով հանդերձ կսատակուի կամ կմաշուի հրով կամ որպէս դիակ կընկնի արծիւների բոյնը» (Առ 24.3), քանի որ բազմազան են թագաւորի տանջանքները: Իսկ ով պահում է խօսքը, այսինքն երկնչում է թագաւորից եւ Աստծուց, կորուստից հեռու կլինի: Հինգերորդ, ծառային հարկաւոր է ամէն ինչում հնազանդութիւն, այսինքն չմեծամտանալ, թէ այս ամէնը կատարեցի, այլ ըստ Տիրոջ խրատի «այս անելով ասացէք անպիտան ծառաներ ենք եւ այլն» (Ղուկ 17.10): Իսկ Պօղոսը օրինադրում է. «ծառաներ, հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերին» (Եփ 6.5), նաեւ առակը. «ծառային չի վայելում բռնանալ հպարտութեամբ» (Առ 19.10): Այլ թէ ի՞նչ է պէտք անել, խրատում է նոյն ինքը՝ Սողոմոնը. «որքան էլ հարստանաս, խոնարհ պահիր քո անձը եւ Տիրոջ առջեւ շնորհ կգտնես» (Առ 16.3): Այսքան այս մասին:

Մեղաւորների տարբերութեան մասին:

Երեք տեսակ մեղաւորներ կան: Առաջին, կան, որ պատահմամբ գայթակղուելով ընկնում են մեղքի մէջ՝ ակամա, կամաւ կամ անգիտութեամբ: Սա ներելի է, որի համար Դաւիթը աղօթում է. «Իմ մանկութեան եւ անգիտութեան մեղքերը մի յիշիր» (Սաղմ 24.7): Երկրորդ, կան, որ մեղք են գործում թէպէտ գիտութեամբ, սակայն զղջումով եւ երկիւղով հանդերձ սրանք էլ ներում ունեն, քանի որ նրանց մէջ յոյս կայ, որովհետեւ զարշուրեան եւ խաւարի մէջ ճանաչում են իրենց ըստ Դաւթի. «ասացի՝ գուցէ խաւարն ինձ ծածկի կամ գիշերը՝ փրկութեան լոյսի փոխարէն» (Սաղմ 138. 11): Երրորդ, կան, որ իրենց կամքով են մեղքի մէջ ընկնում՝ իբրեւ բարիք գործելով եւ հեշտանում են նրա մէջ իբրեւ դէպի լոյսը գնալով: Դրանց համար առակը ասում է. «ամբարիշտների լապտերը մեղքն է» (Առ 21.4): Եւ դարձեալ. «անզգամ մարդը ծիծաղելով է չարիք գործում» (Առ 10.23) դրա համար ասում է. «ամբարիշտ անձը չարիքների մէջ ողորմածութիւն չի գտնում որեւէ մէկից» (Առ 21.10), քանի որ այդպիսին գերծ է Աստծու խնամքից եւ հրեշտակների պահպանութիւնից, մինչեւ որ մեղքերից զզուելով զղջման գայ:

Ճանապարհների մասին: Ճանապարհ է կոչուում այս կեանքը ծնունդից մինչեւ մահուան օրը, իսկ մահը՝ ելք, ինչպէս ասում է Դաւիթը. «ուղղիր իմ ճանապարհները եւ թող ինձ չտիրեն զանազան մեղքերը» (Սաղմ 118.133): Եւ քանի որ ճանապարհ ենք ընկել, պէտք է ամէն կերպ պատրաստել մեր ելքի թռչակը ըստ Սողոմոնի. «պատրաստիր քո ելքը» (Առ 24.27), որովհետեւ յանկարծակի եւ ստիպմամբ կգայ մահուան օրը, երբ չենք կարող ոչինչ գործել: Իսկ այս կեանքը ճանապարհ է կոչուում բազում պատճառներով: Նախ, ինչպէս ճանապարհորդը իր տանից դուրս է գալիս եւ ճանապարհ ընկնում այլ աշխարհի, նոյնպէս եւ մենք ընթանում ենք դէպի հանդերձեալ աշխարհը, ինչպէս ասում է եբրայեցիներին գրուած թղթում. «այստեղ մնայուն տուն չունենք, այլ հանդերձեալն ենք փնտրում» եւ Պօղոսն ասում է. «Եթէ մեր շինուածքի երկրաւոր տաճարը աւերուի, շինուածք ունենք Աստծուց՝ տաճար անձեռակերտ եւ այստեղ հառաչում ենք, որովհետեւ փափագում ենք երկնքի բնակութիւնը հագնել» (Բ Կոր 5.1): Երկրորդ, որքան երկար է մնում ճանապարհին, հեռանում է իր դուրս եկած տեղից եւ մօտենում է այն բաներին, որոնց մօտ գնալու էր, նոյնպէս եւ մենք, «որքան մնում ենք մարմնի մէջ, հեռանում ենք Տիրոջից», ասում է առաքեալը (Բ Կոր 5.6), եւ մօտենում ենք գերեզմանին, ինչպէս ասում է Սողոմոնը. «արագահաս սուրհանդակի եւ չար ճանապարհորդի նման կհասնի ձեզ»: Երրորդ, իմաստուն ճանապարհորդը

մտադրուում է վերադառնալ իր տունը եւ նրա մասին հոգալ, այնպէս եւ մարդկանցից իմաստունները միշտ մտքում ունեն վերադառնալ դրախտ, որտեղից արտաքսուեցինք: Դրա համար էլ ասում է Սողոմոնը. «Իմաստութիւնը զովաբանում է ճանապարհների վրա» (Առ 1.20), իսկ մարգարէն երանի է տալիս նման մարդուն. «Երանելի է այն մարդը, որի օգնութիւնը քեզնից է, մտադրուեց ելնել տրտմութեան հովտից» (Սաղմ 83.6): Չորրորդ, ինչպէս որ ճանապարհորդը վայելուչ տեղերում չի զուարճանում եւ ոչ էլ դժուարութիւններից սայթաքում, այլ երկունս էլ թողնելով իր ճանապարհն է գնում, այդպէս էլ մենք պարտաւոր ենք լինել այս կեանքում՝ ո՛չ տրտմեցնող բաներից տարակուսել, ո՛չ հեշտալի բաներին կապուել, այլ մի կողմ թողնելով դրանք, յետամուտ լինել այն կեանքին հասնելու, ինչպէս ասում է առաքեալը. «յետեւում մնացածները մոռացած՝ ձգուում են դէպի առջեւում եղածները, ուշադիր վագում են երկնային կոչման նպատակակէտին» (Փիլ 3.13): Եւ ուրիշ տեղում ասում է. «ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց, նեղութիւնները, թէ անձկութիւնները» եւ անելացնում է, որ. «ո՛չ կեանքը, ո՛չ գալիքները եւ ո՛չ մի ուրիշ արարած չեն կարող բաժանել մեզ Աստծու սիրուց, որ կայ մեր Տէր Քրիստոս Յիսուսով» (Հռ 8.33): Հինգերորդ, ինչպէս եթէ ճանապարհորդը շահով վերադառնայ, կուրախանան ինքը եւ ընտանիքը, եւ ոչ թէ կտրտմեն, այսպէս էլ աշխարհից մեր վերադարձի ժամանակ եթէ բարի գործեր շահենք, մեզ ուրախակից կլինեն բոլոր սուրբերը մարդկանցից եւ հրեշտակները եւ հենց ինքը՝ երկնաւոր Հայրը, ըստ անառակի առակի, եւ Յովհաննէսն ասում է. «բերկրում է մեզանից ամէն մէկի բարի գործերով»: Եւ նրանց, ովքեր արծաթը շահեցին, ասում է. «բարի եւ հաւատարիմ ծառայ, մտիր քո Տիրոջ ուրախութեան մէջ» (Մատթ 25.21): Իսկ եթէ մեղքերով ընթանանք, կտրտմեն, ինչպէս ասում է առակի մէջ. «մարդը գնաց իր յաւիտենական տունը եւ նրան շրջապատեցին կոծողները» (Ժող 12.5): Իսկ Յովհաննէսը ասում է. «թող ձեզանից չտրտմի բարերար Աստուած», նոյնպէս եւ Պօղոսը. «մի տրտմեցրէք Սուրբ Հոգին, որով կնքուեցիք» (Եփ 4.3), որի համար չշահողներին ասում է. «չար եւ վատ ծառայ, առէք դրանից քանքարը եւ այդ անպիտան ծառային հանէք արտաքին խաւարը» (Մատթ 25.28): Վեցերորդ, ինչպէս ճանապարհորդը անպիտան բաները վաճառում է եւ գնում է այն, ինչ պէտք է իրենց երկրում, այսպէս էլ մենք պէտք է տանք մարմնական բաները եւ ձեռք բերենք այն, ինչ պիտանի է այն կեանքին, ըստ Տիրոջ հրամանի. «վաճառեցէք ձեր ունեցուածքը եւ ձեզ համար անհատնում գանձ կուտակեցէք երկնքում» (Ղուկ 12.33): Եւ դարձեալ. «անիրաւ մամոնայից ձեզ բարեկամներ արէք, որպէսզի երբ այն պակասի, ձեզ ընդունեն յաւիտենական յարկերի տակ» (Ղուկ 16.9): Եօթներորդ, ինչպէս ճանապարհորդների մէջ կան, որ արագ են գնում տուն թեթեւ բեռներով եւ կան, որ ծանր բեռներով դուրս են մնում, նոյնպէս բարի գործերը երկնաթռիչ են դարձնում մարդուն ըստ Պօղոսի. «ամպերով կելնենք Քրիստոսին ընդառաջ օդում եւ այդպէս մշտապէս Տիրոջ հետ կլինենք» (Ա թես 4.16), ինչպէս իմաստուն կոյսերը արագ հասան եւ մտան փեսայի առագաստը (Մատթ 25.11): Իսկ մեղքը ծանր բեռ է, ինչպէս ասում է Դաւիթը. «իմ անօրէնութիւնները իմ գլխից վեր բարձրացան, որպէս ծանր բեռ» (Սաղմ 37.5), որով յիմար կոյսերը ծուլանալով դուրս մնացին եւ փակուեց առագաստի դուռը: Այս էր խոստանում Տէրը մեղաւորներին. «ինձ մօտ եկէք բոլոր հոգնածներ եւ բեռնաւորուածներ եւ ես կհանգստացնեմ ձեզ» (Մատթ 11.29): Ութերորդ, ինչպէս ճանապարհորդները բոլոր վայրերում մաքս են տալիս եւ յետոյ անցնում, նոյնպէս եւ մենք պէտք է իւրաքանչիւրին տանք պարտքը ըստ Պօղոսի. որին պարտք՝ պարտքը, որին հարկ՝ հարկը, մէկին պատիւ, միւսին երկիւղ եւ բոլորին սէր ըստ առաքեալի (Հռ 13.7): Նաեւ մեր մէջ մարմնի եւ հոգու բաժինը, այսինքն, այս կեանքինը եւ հանդերձեալինը ըստ Սողոմոնի. «տուեք բաժին եօթին նաեւ ութին» (Ժող 11.2): Իններորդ, ինչպէս երկու ճանապարհ կա, որոնցով գնում են մարդիկ, մէկը լայն եւ դիւրին, բայց մահուան որոգայթ է աւազակներից եւ ունեցուածքի վատնում, որով անմիտներն են գնում եւ կորչում. իսկ միւսը թաքուն է եւ նեղ, բայց խաղաղութեամբ են հասնում տեղ, որով իմաստուններն են գնում: Այսպէս երկու տեսակ է մարդկանց ընթացքը, այսինքն չար ու բարի: Չարի մասին Գիբը ասում է. գնալով գնում էին եւ չար էր նրանց ճանապարհը, իսկ բարու մասին ասում է Դաւիթը. «Երանելի են անբիծները ճանապարհ գնալիս» (Սաղմ 118.1): Այս ճանապարհների մասին Սողոմոնը ասում է. «աջից եղող ճանապարհները Աստուած գիտէ, թիւր են ձախից եղող ճանապարհները» (Առ 4.27): Նոյն Դաւիթը ասում է. «Տէրը ճանաչում է արդարների ճանապարհները, ամբարիշտների ճանապարհները կկորչեն» (Սաղմ 1.6), ինչը յայտնապէս ասում է Տէրը. «լայն եւ ընդարձակ է այն ճանապարհը, որ դէպի կորուստ է տանում, եւ շատերն են գնում մարմնի հեշտութեան պատճառով, նեղ եւ անձուկ է այն ճանապարհը, որը դէպի կեանք է տանում, եւ քչերն են գտնում այն» (Մատթ 7.13), որովհետեւ «շատ նեղութեամբ պէտք է մտնենք հանգիստը» ըստ Պօղոսի (Գործք 14.21): Եւ դարձեալ, ովքեր քրիստոսեաններ են, իրենց մարմինը խաչ հանեցին կարիքներով եւ ցանկութեամբ հանդերձ» (Գաղ 5.24): Տասներորդ, ինչպէս շատ ճանապարհորդներ ճանապարհին մեռնում են եւ կտակով իրենց ունեցուածքը եւ շահը ուղարկում են տուն, այդպէս էլ շատերը կեանքի ճանապարհին

մեռնում են երեկոյան կամ գիշերը եւ չեն հասնում ծերութեան, որը ծայրն է ժամանակի: Այդ պատճառով, իմաստուն է նա, որ մահուան ժամին կզղջայ եւ կխոստովանի, կգտնի ողորմութիւն այն տնտեսի նման, որը շնորհեց պարտապաններից մէկին հիսուն մար ձէթ՝ ըստ մտքի մեղքերի եւ միւսին քսան քոռ ցորեն, այսինքն մարմնի մեղքերից (Ղուկ 16.7): Եւ ուրիշներ շահեցին բարի գործեր ողորմութեամբ, պարգեւներով, պաշտամունքով եւ կենդանիների աղօթքներով, ինչպէս Ղազարոսի քոյրերը աղաչեցին եւ Քրիստոս յարութիւն տուեց նրանց եղբորը (Յովհ 11.43):

Հարց մարդուն անդաստանի եւ այգու հետ համեմատելու մասին. Ի՞նչ է նշանակում. «անզգամ մարդը նման է անդաստանի եւ այգու» (Առ 24.30):

Պատասխան. Շատ պատճառներով առակով մարդուն համեմատում է անդաստանի եւ այգու հետ: Նախ, ինչպէս անդաստանում եւ այգում ինչ որ սերմանեն, այն էլ կաճի, այսպէս ներընդունակ է մարդու բնութիւնը, որովհետեւ բարի սերմերի հետ միասին որոնն էլ ենք կրում մեր մէջ, եւ աճեցնում գործով, ըստ Տիրոջ առակի. բարի սերմ սերմանեցի, իսկ որոնը թշնամի մարդ արեց (Մատթ 13.27): Երկրորդ, բարի բոյսերի հետ միասին փուշն ու մոլխոտը բուսնելով խեղդում են նրան, ինչպէս ասում է առակը. «Եթէ թողնես նրան, խոպան կդառնա արտը, մոլխոտ կբուսնի եւ կլքուի» (Առ 24.31), առաջին, որովհետեւ արեւի ջերմութիւնը խափանում են, եւ երկրորդ, որովհետեւ երկրի հիւթը քաշում են: Նմանապէս բարի տունն է Քրիստոսից տրուած հաւատը եւ սերմը՝ աստուածային օրէնքը, իսկ չարի բոյսերը՝ թերահաւատութիւնը, յուսահատութիւնը եւ զանազան մեղքերի գործերը, որ աճում են մեր մէջ եւ արգելում աստուածային շնորհների ծագումը, ըստ այնմ. «ձեր մեղքերն են պատնէշ դարձել ձեր եւ Աստծու միջեւ» (Ես 59.2): Իսկ Սուրբ Հոգու կենդանարար հիւթերը, որ ջրի օրինակով է ասում, նուազում են մեր մէջ, ըստ այնմ. «Իմաստութեան Սուրբ Հոգին փախչում է նենգութիւնից» (Իմաստ 1.5), իսկ Պօղոսը ասում է. «շնչաւոր մարդը չի ընդունում Աստծու Հոգուց տրուածները, որովհետեւ այդ յիմարութիւն է իր համար» (Ա Կոր 2.14): Երրորդ, եթէ օրըստօրէ քաղեն աւելորդները, այն ժամանակ արդիւնաւոր պտուղ կտան երեսնապատիկ, վաթսուանապատիկ եւ հարիւրապատիկ: Նոյնպէս եթէ մենք զղջմամբ եւ խոստովանութեամբ դեն նետենք մեր մեղքերը, մեր մէջ կաճեն բարեգործութեան պտուղները, ինչպէս ասում է. «յետոյ կասես, թէ ես զղջացի եւ ընտրեցի խրատը», (Առ 24.32), եւ շատ յետոյ, այսինքն ովքեր մահամերձ վիճակում են զղջում, երջանիկ են, ասում է այստեղ մեկնիչը: Չորրորդ, նրանք, որ նոյնիսկ յետոյ չեն զղջում, այդպիսներին ասում է. «նրա ցանկապատի քարերը կփորուեն» (Առ 24.31), այսինքն հաւատի ցանկապատը կքնդուի, ինչպէս անպիտան այգու ցանկապատը: Այդպիսներին յիմար է անուանում Պօղոսը գաղատացիների թղթում. «ո՛վ յիմարներ, սկսեցիք հոգով եւ վերջացնում եք մարմնով» (Գաղ 3.3): Հինգերորդ, անուանում է անդաստան եւ այգի, որովհետեւ մէկը տալիս է կերակուր կենդանարար, իսկ միւսը՝ գինին ուրախարար, որոնք գործնական եւ տեսական առաքինութիւններն են՝ որով զարդարում են կատարեալները, իսկ անզգամն ու պակասամիտ մարդը չունեն Աստծու կենդանի խօսքը՝ որպէս հոգու կերակուր, ըստ Տիրոջ, եւ ոչ էլ Սուրբ Հոգու իմաստութիւնը՝ որպէս խառնուած գինի, ըստ Սողոմոնի: Այդպիսիների համար ասում է եբրայեցիների թղթում. «հողը, որը խմում է անձրեւը, եւ օգտակար արդիւնքներ տալիս, օրհնութիւն կստանայ, իսկ որ փուշ ու տատասկ է տալիս, անպիտան է, եւ արժանի անէծքի, եւ նրա վախճանը այրուելն է» (Եբր. 6.18): Օրհնութիւն, որի մասին ասում է առակը. «պատուիր Տիրոջը քո արդար վաստակից, որպէսզի լցուեն քո շտեմարանները, եւ հնձանները աւելի յորդ գինի բխեն» (Առ. 3.9): Իսկ անէծք, որի մասին ասում է Եսային. «Այգի ունէր իմ սիրելին, եւ փուշ բերեց, արդ ի՞նչ անեն. կքանդեմ նրա ցանկապատը եւ այլն» (Ես. 5.1): Եօթներորդ, ինչպէս որ անադատանում զանազան բոյսերը տարբեր ձեւերով են կտրում, որովհետեւ նախ, որոնն ու փուշն են հաւաքում այրելու համար, ըստ Տիրոջ առակի. «հնձողներին կասեմ. որոնը կապեցէք այրելու համար, իսկ ցորենը ժողովեցէք շտեմարաններում» (Մատթ. 13.30), նոյնպէս այգու մասին էլ ասում է Տէրը. «Իմ Հայրը մշակ է, որովհետեւ պտղաբեր ճյուղերը մաքրում է, իսկ անպտուղները կտրում եւ կրակի մէջ այրում, կհաւաքեն, ասում է, եւ կրակի մէջ կզգեն եւ կայրուի» (Յովհ. 15.1), նմանապէս են միեւնոյն տեղում բնակուող մարդիկ. ոմանք այլազգի եւ այլակրօն, եւ ոմանք էլ մեր մէջ, բայց անհաւատութիւնից ցամաքած, եւ զլխից, այսինքն Քրիստոսից բաժանուած, ինչպէս հերձուածողների խմբերը, որոնք յաւիտենական կրակի վառելափայտ են, որովհետեւ «խաբուեցին արզանդից եւ սուտ խօսեցին» (Սաղմ 57.4): Իսկ ուրիշներ՝ ուղղափառ հաւատով Քրիստոսին հնազանդուածները կպտղաբերեն ըստ այնմ. «դուք առատ պտուղ կբերէք եւ կլինէք իմ աշակերտները» (Յովհ 15.5), որ եւ Տէրը կանխապէս նշեց, ասելով. «Եթէ երկու հոգի լինեն դաշտում, մէկը կվերցուի, եւ միւսը կթողնուի» (Ղուկ 17.35): Ութերորդ, անդաստանից միեւնոյն բոյսի մի մասը տրում է այրուելու, ինչպէս յարդը, իսկ միւսը՝ հաւաքում է շտեմարաններում, ինչպէս ցորենը, ըստ Յովհաննէսի. «որի հեծանոցը, այսինքն արդար դատաստանը, իր ձեռքում է, կհավաքի ցորենը եւ յարդը կայրի անշէջ հրով»

(Մատթ 3.12): Նոյնպէս եւ այգու միեւնոյն ողկոյզը ճնլելով մաքուր գինին տրուում է մարդկանց ճաշակման համար, իսկ կնճիռն ու մրուրը՝ կերակուր խոզերին, նմանապէս Տիրոջ տան մէջ եւ Աստծու գաւթում տնկուած միեւնոյն քրիստոնէայ ազգից, որ ծնուած ենք նոյն տեղում եւ նոյնով սնուած, ոմանք լինում են ցորեն եւ արքայական բաժակ, իսկ ոմանք՝ կերակուր գիջասէր սատանային՝ մատնուելու կրակի տանջանքներին, որ պատրաստուած է սատանայի եւ նրա հրեշտակների համար: Այս բանը ասում էր կանխապէս. «Եթէ երկուսով մի երկանքի վրայ աղան, եւ եթէ երկուսը մէկ մահիճի մէջ լինեն, մէկը կվերցուի, իսկ միւսը կթողնուի» (Ղուկ 17.34): Իններորդ, ինչպէս այգին մի անգամ է տնկուում, իսկ անդաստանը ամէն տարի սերմանում է, նոյնպէս էլ հաւատը մի անգամ է տնկուում մարդու մէջ աւագանի ծնունդով եւ անխախտ է մնում, քանի որ մի անգամ թաղուեցինք Քրիստոսի հետ մկրտութեամբ ի մահ, եւ դա այլեւս չի կրկնուում, իսկ էտելն ու փորելը այն է, որ ամէն ժամ խոստովանում ենք նոյն դաւանութիւնը բերանով: Իսկ օրէնքի գործերի մէջ պէտք է հանապազ չարչարուել եւ օրըստօրէ նորոգուել, քանի որ ամէն տարին ամէն օրն է նշանակուում, ինչպէս ասում է. «օրը տարուայ փոխարէն լինի ձեզ համար» (Եզե 4.6): Որի համար Պողոսն ասում է. «յետեւում մնացածները մոռացած՝ ձգտում են դէպի իմ առջեւում եղածները», եւ դարձեալ. «ես չեմ համարում, թէ հասել եմ, այլ ուշադիր վագում եմ Քրիստոսի կոչման նպատակակէտին» (Փիլ 3.13): Տասներորդ, մարգարէն ասում է. «հովիտները առատ ցորեն պիտի բերեն» (Սաղ 64.14)՝ խոնարհ լինելու պատճառով եւ ամէն կողմից ջուր հաւաքելու շնորհիւ, որ նշանակուում է մարդկանց միջից խոնարհները, քանի որ «ով խոնարհեցնում է իր անձը, կբարձրանայ» (Մատթ 23.12): Իսկ լեռնացած ամբարտաւանների մասին Տէրը նշում է, ասելով. «ասացէք այս լեռանը, ելիր եւ ծովը ընկիր» (Մատթ 21.21), եւ առակի մէջ ասում է. «Տէրը հակառակ է ամբարտաւաններին եւ շնորհ է տալիս խոնարհներին» (Առ 3.34): Նոյն այգին որոշ տեղերում արքայութիւն է նշանակուում ըստ այնմ. «մի մարդ այգի տնկեց եւ տուեց մշակներին, եւ երբ արդիւնքը չտուեցին, ասում է. կտամ այգին ուրիշ մշակների, որոնք կտան պտուղը ժամանակին եւ աւելացրեց. նոյնպէս արքայութիւնը կվերցուի ձեզանից եւ կտրուի ուրիշ ազգի, որը կտայ պտուղը» (Մատթ 21.41): Եւ ուրիշ տեղում ասում է. «հրաման կտամ ամպերին, որ չանձրեւեն իմ այգու վրա» (Ես 5.6), որ անխնամ թողնելն է նշանակուում: Այսքանն այս մասին:

Նախատինք վատագիներին, որոնք ծոյլ են մարմնով եւ հոգով:

Նախ, Պողոսն ասում է. «ով չի գործում, թող չուտի էլ» (Բ Թես 3.10), իսկ առակում ասում է. «ով անգործութեամբ ձեռքերը թաքցնում է ծոցում, նա իր ձեռքը նոյնիսկ իր բերանն էլ չի տանի» (Առ 19.24): Անգործն այն է, որ տկարութեան պատճառ չունի: Երկրորդ, զրկուում է երանութիւնից, որ ասում է. «քո ձեռքերի վաստակը կուտես, երանի քեզ» (Սաղմ 127.2): Երրորդ, առակի մէջ ասում է. «ծոյլին սպանում են ցանկութիւնները, որովհետեւ նրա ձեռքերը յօժար չեն որեւէ բան անելու» (Առ 21.25): Դարձեալ ասում է. «բոլոր ծոյլերը կարօտութեան մէջ են, իսկ ժրաջան մարդկանց ձեռքերը դարմանում են» (Առ 13.4), եւ դարձեալ ասում է. «ծոյլերը հարստութիւնից կարօտութեան են հասնում, իսկ ժրաջան մարդիկ հաստատուում են հարստութեամբ» (Առ 11.16): Չորրորդ, ասում է. «ծոյլին կործանում է երկիւղը, իսկ կնաբարոյ անձինք պիտի քաղցի մատնուեն» (Առ 18.8): Հինգերորդ, ասում է. «ծոյլի ճանապարհը ծածկուած է փշերով, բայց հարթ ու բաց է ջանասէրի ճամփան» (Առ 15.19): Վեցերորդ, առակի մէջ ասում է. «Ով մշակուում է իր հողը, պիտի կշտանայ հացով, իսկ ով դատարկ բաների յետեւից է գնում, նա պակասամիտ է» (Առ 12.11): Եօթներորդ, ասում է. «Մրջինի մօտ գնա, ով ծոյլ, նախանձիր նրա գործերին, կամ մեղուի մօտ գնա եւ սովորիր թէ ինչպէս գործուեայ է, որի համար նրա վաստակը մատուցում են հարուստներին եւ աղքատներին» (Առ 6.6): Ութերորդ. «ծոյլը պատճառ է բռնում եւ ասում. ճամփին առիժ կայ, այսինքն կեանքի ընթացքին, եւ փողոցների անկիւններում սպանողներ» (Առ 22.13): Իններորդ, ասում է. «ծոյլը թէւեւ նախատուում է, բայց չի ամաչում, ինչպէս մէկը, որ ցորեն է փոխ առնում ամռանը» (Առ 20.4): Տասներորդ. «մինչեւ ե՞րբ պիտի գամուած մնաս, ով ծոյլ, կամ ե՞րբ պիտի զարթնես քնից» (Առ 6.9): Եւ թէպէտ ըստ մարմնի ծոյլերի մէջ է տեսնուում այս բանը, որ ասում է, աղքատ են մնում, իսկ ժրաջան մարդկանց ձեռքերը հարստացնում են, սակայն այս բանը նաեւ հոգեւոր պէտք է հասկանալ. ով ծոյլ եւ դանդաղ կտտ առաքինութեան մէջ, մինչեւ ե՞րբ պիտի գամուած մնաս մեղքերիդ փշերի մէջ առանց շարժուելու, կամ ե՞րբ պիտի զարթնես քնից. մեղքերի քնի մասին է խօսում, որը դէպի մահ է տանում, որի համար Դաւիթը աղօթում է. «լոյս տուր, Տէ՛ր, իմ աչքերին, որ երբեք մահուան քուն չմտնեմ» (Սաղմ 12.4): Փոքր ինչ ննջես, այսինքն ասես, մեծ ունեցուածք ունեմ, մի փոքր մնամ աշխարհի փշերի մէջ, եւ կուտակեմ, մինչեւ որդիս մեծանայ եւ ժառանգի, եւ չգիտես, ով անմիտ, թէ այս գիշեր հոգիդ քեզանից պիտի պահանջեն (Ղուկ 12.20): Մի փոքր ձեռքդ դնես կրօնիդ, այսինքն ասես, տկար եմ մարմնով, թող պարապ մնամ, մինչեւ առողջանամ, ինչպէս ծոյլ ծառան է ասում. իմ Տէրը ուշանում է. եւ յանկարծակի կգայ եւ կկտրի նրան մէջտեղից (Մատթ 24.48): «Որից յետոյ որպէս կարապետ կգայ քո

աղքատութիւնը», այսինքն բարի գործերից քո աղքատութիւնը քեզ համար կարապետ եւ գուշակ կլինի դժոխքի տանջանքների: Եւ քո կարօտութիւնը այսինքն ինչպէս յիմար կոյսերինը, որոնք կարօտ եղան իւրի: «Կհասնի որպէս սուրհանդակ», այսինքն, օրհասական մահը կորսայ իբրեւ չար ճանապարհորդ եւ բաց չի թողնի (Առ 6.11), այլ նոյն տեղում կսպանի ըստ ժողովրդի. «Վիայտը որ կողմ որ ընկնի, այդտեղ էլ կմնայ» (Ժող 11.3), այսինքն մեռած մարմինը, թէ ընկնի դէպի հիւսիս, այսինքն Աստծու անգթութեան կողմը, թէ՛ դէպի հարաւ, այսինքն Աստծու սիրոյ ջերմութեան կողմը: «Քանի որ այս է ընդունելի ժամանակը եւ փրկութեան օրը» ասում է Պօղոսը, որից յետոյ ասում է. «Իւրաքանչիւրը իր մարմնով կընդունի իր գործածների հատուցումը, թէ բարի եւ թէ չար» (Բ Կոր 5.10):

Տգրուկի եւ նրա դուստրերի մասին: Մովսէսը սատանայի անունը բնաւ չյիշատակեց իր ժամանակի պատճառով, իսկ Դաւիթը նրան առիծ է անուանում յափշտակութեան պատճառով, շուն՝ շողոքորթութեան, չարախօս իշխաններ, հալածող թշնամի, իժ եւ քարք՝ նենգութեան պատճառով, իսկ Սողոմոնը տգրուկ է անուանում ասելով. «տգրուկը երեք դուստրեր ուներ սիրելի, եւ երեքով նրան ջազեցրեցին, իսկ չորրորդը չկշտացավ, որ ասեր շատ է» (Առ 30.15): Եւ դա բազում պատճառներ ունի: Նախ, ինչպէս որ տգրուկը արիւնն է ծծում, որը կենդանութեան հիւթն է, նոյնպէս եւ սատանան խոհեմութեան, ցասման եւ ցանկութեան կենդանական խորհուրդն է ծծում եւ քաշում մարդուց, որի մասին Քրիստոս ասում է. «սատանան սկզբից եւեթ մարդասպան է» (Յովի 8.44): Երկրորդ, տգրուկը կեղտոտ արիւնն է ծծում, ինչպէս ասում ենք, նոյնպէս եւ սատանայի կեարկուրը մեղքերի աղտն է, որի համար էլ խոզի օրինակով է ներկայացնում անառակի առակի մէջ ասելով. «ուզում էր փորը լցնել եղջիրներից, որ խոզերն էին ուտում» (Ղուկ 15.16): Երրորդ, անյագ է տգրուկը, ինչպէս այստեղ է ասում. «երեքով ջազեցրեցին նրան», նոյնպէս եւ սատանան անյագ է չար գործերի մէջ: Չորրորդ, տգրուկը գէջ տեղերում է լինում, եւ սատանան հանգստանում է գիջային ցանկութիւնների մէջ, ինչպէս ասում է Յօբը. Բեհեմովթը գիջային տեղերում է ննջում (Յօբ 40.16): Հինգերորդ, սողուն է տգրուկը, սատանան էլ սողալով եւ թաքուն է մտնում մարդու խորհուրդների մէջ, որի մասին ասում է. «չեմ կարող իմանալ օծի հետքը վէմի վրայ» (Առ 30.19): Վեցերորդ, տգրուկը երկու բերան ունի, նոյնպէս եւ սատանան երկու տեսակ նենգաւոր խօսք ունի, որովհետեւ նախքան մեղանչելը Աստծու մասին ասում է, որ նա քաղցր, բարերար ու երկայնամիտ է, եւ գցում է մեղքերի մէջ, իսկ մեղք գործելուց յետոյ միտքն է ձգում արդարութիւնն ու պատիժը եւ դրանով յուսահատութեամբ կործանում: Որի մասին ասում է Դաւիթը. «նրա բերանի խօսքերը անօրէնութիւն եւ նենգութիւն են» (Սաղմ 35.4): Եօթներորդ, տգրուկը չի հեռանում մարմնից, մինչեւ որովայնը չլցնի արեամբ, նոյնպէս եւ սատանան, երբ բռնի որեւէ մէկին մեղքերի մէջ, բաց չի թողնի, մինչեւ մեղքը լրիվ կատարել տայ եւ ստիպի ամէն ինչում մեղանչել: Ութերորդ, տգրուկը սկզբում դիւրին է մօտենում, բայց վերջում կսկծացող ցաւեր է տալիս, սատանան էլ մեղքի սկզբում իրեն քաղցրաբարոյ է ցոյց տալիս, բայց յետոյ դառնացնում է խղճմտանքով, պատկառանքով եւ օրենքի երկիւղով, ինչպէս ասում է Սողոմոնը. «պոռնիկ կոջ շուրթերից մեղր է կաթում, բայց յետոյ լեղուց աւելի դառն է լինում» (Առ 5.3): Իններորդ, տգրուկը գիշերակերպ է եւ մուգ, նմանապէս սատանան խաւար է կոչում ըստ այնմ. «խաւարը նրան չճանաչեց» (Յովի 1.5), եւ թէ «փրկեց մեզ խաւարի իշխանութիւնից» (Կող 1.13): Որի համար այստեղ մեղքերի եւ անգիտութեան խաւարով նսեմացնում է մեղաւորների մտքերը, ինչպէս ասում է Տէրը. «ով չարիք է գործում, ատում է լոյսը եւ չի գալիս լոյսի մօտ» (Յովի 3.20), եւ վերջում սատանայի հետ կտանջուի արտաքին խաւարի մէջ եւ այլեւս չի փրկուի նրանից: Տասներորդ, տգրուկը մարմնի առողջ մասին չի կարող մօտենալ, նոյնպէս եւ սատանան չի կարող մոտենալ հոգով կատարեալ առողջին, ըստ Տիրոջ. «գալիս է այս աշխարհի իշխանը եւ իրենից ոչինչ չունի իմ վրայ» (Յովի 14.30): Այսպէս եւ բոլոր ընտրեալներին, ինչպէս ասում է Դաւիթը. «երբ չարերը մօտեցան ինձ, իմ մարմինն ուտելու, իմ նեղիչներն ու թշնամիները տկարացան եւ ընկան» (Սաղմ 26.2): Եւ դարձեալ. «քո կողքից հազարներ կընկնեն եւ այլն» (Սաղմ 90.7), որովհետեւ Տիրոջ հրեշտակների բանակները շրջապատում են իր երկիւղածներին, եւ պահում նրանց: Իսկ երեք դուստրերն են դժոխքը, որը գերեզմանի բանտն է, կանանց սէրը եւ տարտարոսը, որը մեղաւորների տանջանքն է: Դուստրեր է կոչում եւ ոչ որդիներ. նրանց վատթարութիւնը իգական անուամբ է ցոյց տալիս, քանզի կրօն են եւ ոչ տուող: Սրանք երեքը չեն յազնում, իսկ չորրորդը ակնյայտորեն ինքը տգրուկն է, որը չբաւարարուեց, որ ասեր շատ է: Եւ կանանց սէրն է ասում, որ յիշեցնի, թէ մահը եւ տանջանքը նա առթեց, ինչպէս ասում է առաքեալը. «մարդը չխաբուեց, այլ կինը» (Ա Տիմ 2.14), որ երբ Տէրը հարցրեց, ասաց. «Այս կինը, որ տուեցիր ինձ, նա տուեց ինձ ծառի պտղից եւ ես կերայ» (Ծննդ 3.12): Որի համար Աստուած նրան մահուան դատապարտեց. «Հող էիր եւ հող էլ կդառնաս» (Ծննդ 3. 19): Եւ մեղքերի ցանկութեան նոյն փուլը կատարելով՝ տարուեց դէպի տարտարոսի տանջանքները:

«Երկիրը չի յագենում ջրով» (Առ 30.16): Ջուր երբեմն Սուրբ Հոգուն է անուանում, եւ երբեմն՝ չար հոգուն: Բարի Հոգու մասին ասում է Տէրը. «նրա որովայնից կենդանի ջրի գետեր կհոսեն» (Յովի 7.38), եւ Դաւիթը. «գետերի հոսանքը ուրախացնում է Աստծու քաղաքը» (Սաղմ 45.4): Իսկ չարի մասին Դաւիթը ասում է. «Գնացի եւ դէպի ծովի խորքերը» (Սաղմ 68.3), եւ դարձեալ. «կլանեց ինձ ջրերի բազմութիւնը» (Սաղմ 17.17): Երկիր՝ միտքն է անուանում, որը երբ ընդունում է Հոգու ոռոգումը, պտղաբերում է զանազան անուշահոտ ծաղիկներով եւ առաքինութեան պտուղներով: Իսկ երբ ընդունում է չարի ազդումը՝ աճեցնում է մեղքերի եւ մարմնական ցանկութիւնների փշերը, ինչպէս ասաց առակը. «անզգամ մարդը նման է անդաստանի, եթէ թողնես կծածկուի մոլախոտներով եւ կլքուի» (Առ 24.31): Եւ չի յագենում, որովհետեւ միտքը բանական է եւ խօսքով է կերակրում, թէ՛ բարի եւ թէ՛ չար:

«Եւ ջուրն ու հուրը երբեք չեն ասում. շատ է» (Առ 30.16): Ջուր կոչեցինք ոռոգումը, իսկ հուրը ջերմ ցանկութեան բորբոքումն է անուանում, որ ունենք հանդէպ բարուն կամ չարին: Հանդէպ բարուն, ինչպէս մաղթում էր Դաւիթը. «Հոգուդ ոռոգումը մի՛ հանիր ինձանից, այլ տուր ինձ փրկութեան ցնծութիւնը եւ քո տիրական Հոգով հաստատիր ինձ» (Սաղմ 50.13): Իսկ վատթարի մասին ասում է. «Սիրտս կրակուեց փորիս մէջ եւ խորհուրդներիս մէջ հուր բորբոքուեց» (Սաղմ 38.4): Եւ որովհետեւ չեն ասում՝ շատ է, ըստ մարգարէի. «բացեցի իմ բերանը եւ առայ Հոգին, քո պատուիրաններին փափագեց իմ անձը» (Սաղմ 118.131): Այսքան այս մասին ասուեց երկրորդ մասի վերաբերեալ:

ԵՐՐՈՐԴ մաս

Իսկ երրորդ մասը այսպէս է դասաւորուած, որ սովորելով տեսականն ու գործնականը, մարդը տիրի իր վրայ եւ թագաւորի: Նաեւ այս երեք մասերը խրատ են մեր երեք հասակների համար: Եւ տես, որ երկրորդի վերջը մուտքն է երրորդ մասի, որ թագաւորների մասին է խօսում եւ ըստ մտքի: Առաջին մասը նայում է Աստծու նախախնամութեանը խրատով, միջինը՝ ստեղծմանը, Հայր լինելով եւ վերջինը՝ որ գերազանց է եւ գատորոշուած եղեալներիցս: Եւ դարձեալ. առաջինը Հօր մասին է, եւ միջինը՝ Որդու, որ ծնեց մեզ եւ վերջինը՝ Հոգու, որը Սուրբ Երրորդութեան փառքն ու լրումն է: Պէտք է գիտենալ, որ թագաւորի փառքը երեք բանից է, այսինքն աթոռից, զգեստներից եւ շրջապատող սպասաւորներից, ինչպէս որ արեգակի փառքը տեղից է, լոյսից եւ շրջապատող աստղերից: Նոյապէս եւ Աստծու փառքը փառաբանում է բնութիւնից, գերազանցութիւնից եւ արարածներից: Եւ նոյն կերպ էլ տարբերում են. թագաւորը էութեամբ բաղդատուած եւ փառքով աճեցած, իսկ արեգակը փառքով բաղդատուած եւ գոյութեամբ աճեցած: Իսկ Աստուած հակառակ այս երկուսի գերազանց է բնութեամբ եւ փառքով: Իսկ փառքը բնութեամբ կամ անձի շուրջանակի մեծարանքն ու պատիւն է: Եւ Աստծու փառքը ծածկուած է մեր բնութիւնից. ինչպէս ասում է. «Աստծու փառքը ծածկում է նրա խօսքերը» (Առ. 25.2): Որքա՞ն առաւել է Աստծու բնութիւնը եւ գոյացութիւնը, որ եղական միտքը ձգտում է մինչեւ անեղի փառքը եւ ոչ այն կողմ, եւ դա անմատոյց լոյսն է՝ խաւարով շրջապատուած եւ վարագոյրով ծածկուած, քանզի ո՞վ կպատմի Աստծու փառքի մեծավայելչութիւնը, թող խօսի մարգարէի հետ. նրա որպիսութիւնը ծածկում է մարդկանց խօսքն ու իմացումը:

Իսկ իմաստութեան գովութիւնն է ոսկի խնձորի եւ սարդիոն քարի համեմատութեամբ:

Հարց. Ի՞նչ է նշանակում. Պատշաճ ասուած իմաստուն խօսքերը նման են սարդիոնով շարուած ոսկի խնձորի» (Առ 25.11):

Պատասխան. Բազում պատճառներով է իմաստուն խօսքերը համեմատում ոսկու եւ պատուական քարերի հետ: Նախ, որ նրանք իրենց գեղեցկութեամբ զուարճացնում են աչքը, իսկ իմաստուն խօսքերը՝ միտքը, ըստ Պօղոսի. «ձեր խօսքերը որպէս թէ աղով համեմուած թող լինեն, որպէսզի շնորհք տան խողներին» (Կող 4.6): Երկրորդ, ինչպէս որ նրանցից պատուական գինդեր են պատրաստում ականջների համար, այնպէս պատուական է իմաստուն խօսքը նրանց համար, ովքեր ականջ են դնում, ըստ այնմ. «թափանցի առակների եւ խորին ասոյթների մէջ, իմաստունների ճառերի եւ նրանց առակների մէջ» (Առ 1.6), որոնց լսելով իմաստունը աւելի իմաստուն կլինի: Եւ Տէրն ասում է. «ձեզ են ասում, որ լսում էք. ով լսելու ականջ ունի, թող լսի» (Մատթ 11.15): Երրորդ, ովքեր գնում են դրանք, շահում են, ինչպէս վաճառողը, նոյն կերպ ունկնդիրը իրեն է սեփականում խօսքը, ինչպէս ասողը, ինչպէս ասում է առակը. «իմաստութիւն լսէք եւ աւելի իմաստուն կլինէք»: Չորրորդ, դրանք արհամարհելի են կոյրերի համար, նոյնպէս իմաստուն խօսքերը, որոնց չեն լսում, մարգարիտ են՝ խոզերի առաջ նետուած: Իսկ Պօղոսն ասում է. «շնչաւոր մարդը չի ընդունում Աստծու Հոգուց տրուածները, որովհետեւ դա յիմարութիւն է նրա համար» (Ա Կոր 2.14): Հինգերորդ, սարդիոն քարը քահանայապետերի դատաստանի տախտակի վրայ է գտնուում (Ելք 28.17), նոյնպէս էլ իմաստուն խօսքը դատաստան է անում ուղութեամբ,

ինչպէս Սողոմոնը՝ պոռնիկ կանանց (Գ թագ 3. 27) եւ Ղանիէլը՝ Շուշանի ծերերին (Ղան 13.62): Վեցերորդ, անապական է նրանց բնութիւնը, նոյնպէս էլ իմաստուն խօսքերը անջնջելի են, ինչպէս ասում է իմաստունը. «լուսաւոր եւ անթառամ է իմաստութիւնը» (Իմաստ 6.13): Եօթներորդ, շատերից քչերը ունեն դրանցից, նաեւ մարդկանցից քչերն են իմաստութիւն գտնում, ինչպէս ասում է Ժողովորդը. «հազարից մի մարդ միայն գտայ» (Ժող 7.28), որի համար երանի է տալիս նրան. «երանի այն մարդուն, որ իմաստութիւն կգտնի, եւ այն մահկանացուին, որ հանձար կստանայ» (Առ 3.13): Ութերորդ, ոսկին ու սարդիոնը մէկը միւսին աւելի գեղեցիկ են ցոյց տալիս, այդպէս էլ իմաստուն խօսքը հաճելի է ուղիղ գործով եւ գործերը՝ իմաստութեամբ, որի համար Քրիստոս սքանչելիքներ էր գործում եւ այդ նշաններից յետոյ քարոզութեամբ հաստատում էր արարծները ըստ այնմ. «Յիսուս գործում էր եւ քարոզում» (Գործք 1.1): Իններորդ, ոսկին եւ սարդիոնը վարպետների աշխատանքով է պատրաստուում, այդպէս էլ իմաստութիւնը չարչարանքով է ստացուում, ինչպէս ասում է Ժողովորդը. «ամէն բան ջանքով է լինում», իսկ փիլիոսփան սահմանում է. «իմաստութիւնը գիտութիւն է էակաների մասին, որոնք էականեր են»:

Տասներորդ, ոսկին ու թանկարժեք քարերը թաքնուած են երկրի սրտում սկզբից (Ծննդ 2.12), եւ ժամանակ առ ժամանակ ոմանք գտնում են, այդպէս էլ իմաստութեան գանձերը պահուած են Աստծու մէջ ըստ առաքեալի (Կող 2.3), եւ յայտնում է, երբ որ կամենում է, ըստ այնմ. «գոհանում են քեզանից, Հայր, որ այս բաները ծածկեցիր իմաստուններից եւ տղաներին յայտնեցիր» (Մատթ 11.25):

Այսքան այս մասին:

Հարց այն մասին, թէ ինչպէս է իմաստութիւնը համեմատուում մեղրի հետ. Ի՞նչ է նշանակում. «լաւ է շատ մեղր ուտելը» (Առ 25.27)

Պատասխան. Գիտութիւնները տարբեր են լինում, ինչպէս որ մեղրը. կան, որ վնասակար են, եւ կան, որ օգտակար են: Սուրբ եւ ուղղափառ խօսքերը օգտակար մեղրով են այլաբանուում, ըստ այնմ. «քաղցր են քո խօսքերն իմ քիմքին, քան մեղրն իմ բերանին» (Սաղմ 118.103): Իսկ հերձուածողների խօսքերը այլաբանուում են վնասակար մեղրով: Եւ դա այդպէս է բազում պատճառներով: Նախ, ինչպէս այդ մեղրը համով քաղցր է, բայց չարչարուում է մարմինը եւ խելագարեցնում, նմանապէս հերձուածողների խօսքերը, ինչպէս ասում է առաքեալը. «քաղցրախօսութեամբ եւ կեղծ գովասանքներով հրապուրում են անմեղների սրտերը» (Հռ 16.18), եւ առակը. «պոռնիկ կնոջ շուրթերից մեղր է ծորում, բայց յետոյ դառնանում է, քան լեղին» (Առ 5.3): Այս մտքով Ղաւիթն էլ է ասում. «ոչխարի հանդերձներով են, բայց ներսից յափշտակող գայլեր են» (Մատթ 7.15): Երկրորդ, պէտք է մեղրի համը առնել եւ նոր միայն ընտրել, եւ մեղր շատ ուտելը լաւ չէ, ասում է: Նմանապէս, հերձուածողների խօսքերին մտքով աշակերտելը լաւ չէ, այլ այնքան միայն ընթերցել, որ տարբերել ուղղափառն ու նրանցը, եւ ընդդէմ լուծում տալ, ըստ այնմ. «անզգամին նրա անզգամութեան արժանի պատասխան տուր» (Առ 26.5): Երրորդ, ինչպէս որ վայրի մեղուն ընտանի մեղուի նման է կառուցում բջիջները, եւ ծաղիկներից հաւաքում նրա մեղրը, նոյնպէս հերձուածողը խօսքը յարմարեցնում է ուղղափառների նման՝ վկայութիւնները հաւաքելով Սուրբ Գրքից, եւ ճշմարտի կերպարանքն են ընդունում, ինչպէս ասում է առաքեալը. «Կերպարանուում են աշխարհի կերպարանքով» (Հռ 12.2): Չորրորդ, մեղրի մէջ աղ չի խառնուում, նմանապէս հերձուածողների խօսքը աղ չունի, այսինքն Հոգու շնորհներ, ըստ այն խօսքի, որ ճշմարիտների մասին է ասում. «Ձեր բոլոր խօսքերը որպէս թէ աղով համեմուած լինեն, որպէսզի շնորհ տան լսողներին» (Կող 4.6): Եւ իսկապէս, որովհետեւ «շնչաւոր մարդը չի ընդունում Աստծու Հոգուց տրուածները» (Ա Կոր 2.14), եւ «Սուրբ Հոգին փախչում է նենգութիւնից» ասում է Սողոմոնը (Իմաստ 1.5): Հինգերորդ, մեղրը եւ նրանից ստացուածները չէր մտնում տաճար որպէս պատարագ, նոյնպէս էլ հերձուածողական խօսքը չափտի մտնի եկեղեցի, թէ՛ երգ եւ կան այլ բան, որովհետեւ չար ծառը չար պտուղ է տալիս» ասում է Տէրը (Մատթ 7.8): Այսքանով հերձուածող խօսքերը համեմատուում են մեղրի հետ:

Իսկ սուրբ խօսքը մեղրի հետ համեմատուում է այսպէս. նախ, մեղրը մանանայ է երկնքից (Ելք 16.31), եւ աստուածաշունչ խօսքերը՝ Սուրբ Հոգուց, ըստ Պետրոսի, որ ասում է. «ոչ թէ ըստ մարդկանց կամքի տրուեցին մարգարէութիւնները, այլ Սուրբ Հոգուց մղուած խօսեցին Աստծու մարդիկ» (Բ Պետ 1.21): Երկրորդ, մեղուն զանազան ծաղիկներից մաքուրն է հաւաքում, իսկ Ղաւիթը ասում է. «Տիրոջ խօսքերը սուրբ խօսքեր են, ինչպէս ընտիր եւ փորձուած արծաթ՝ եօթնապատիկ մաքրուած եւ գտուած հողից» (Սաղ 11.7), եւ եկեղեցու վարդապետները նրանցից են հաւաքում իմաստութիւնը: Երրորդ, բոլոր համերից ամենաքաղցրը մեղրի համն է, նոյն կերպ սուրբ խօսքերի իմաստութիւնը Ղաւիթը համեմատում է մեղրի հետ, ասելով. «քաղցր է նա՛ մեղրից ու խորիսխից աւելի» (Սաղմ 18.11): Իսկ Պալտոնը գրում է թէ՛ ողորոս երկրաչափին. «ո՛վ թէ՛ ողորոս, իմաստութեան նման բարի պարգեւ աստուածներից երբեւէ ոչ տրուել է, ոչ էլ կտրուի»: Չորրորդ, բուժում է վերքերն ու ցաւերը, ինչպէս ասում է առակը. «մեծամեծները

եւ տնանկները բժշկուելու համար են օգտագործում» (Առ 6.8), այդպէս էլ իմաստուն խօսքերը բժշկութիւն են հոգու եւ մարմնի համար, ինչպէս ասում է առակը. «մարդիկ կան, որ իրենց խօսքով խոցում են թրի պէս, բայց իմաստունների լեզուները բուժում են» (Առ 12.18): Եւ դարձեալ ասում է. «բուժող լեզուն կեանքի ծառ է» (Առ 15.4): Հինգերորդ, մեղրը գոյնի որակներով տարբեր է լինում, իսկ համի որակով՝ միատեսակ, նմանապէս էլ սուրբ խօսքերը թէւ շարադասութեամբ զանազան կարգաւորութիւն են ունենում, սակայն բոլորը միեւնոյն դիտաւորութիւնն ունեն՝ մեզ ուսուցանելու եւ ուղիղ կերպով խրատելու, ըստ առաքեալի. «Աստծու շնչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու եւ արդարութեան մէջ խրատելու համար» (Բ Տիմ 3.16): Այսքան համեմատութիւն սուրբ խօսքերի եւ մեղրի միջեւ, որովհետեւ վարդապետները պէտք է նմանուեն մեղրին: Նաեւ մենք պէտք է նմանուենք մեղրին բազում հանգամանքներով: Նախ, մեղուն անդու ժրաջանութեամբ է հաւաքում մեղրը, որի համար առակը ասում է. «մեղրի մօտ գնա, տես, թէ ինչպէս գործունեայ է եւ այլն» (Առ 6.8), նմանապէս իմաստութիւնը աշխատանքով է քննուում, ինչպէս ասում է Տէրը. «Քննեցէք Գրքերը եւ տեսէք» (Յովի 5.39), եւ Դաւիթը. «Լեզուս նման է արագագիր դպրի գրչի, որի համար էլ սրտիցս քո բարի պատգամներն են բխում» (Սաղմ 44.2): Երկրորդ, մեղուն օրըստօրէ կաթիլ առ կաթիլ հաւաքելով է լցնում բջիջները, նոյն կերպ էլ մենք պարտաւոր ենք աճել իմաստութեան եւ սուրբ գործերի մէջ, ինչպէս ասում է Պետրոսը. «աճեցէք Տիրոջ շնորհքով եւ գիտութեամբ» (Բ Պետ 3.18): Երրորդ, ինչպէս որ մեղուն լուսաւոր նիւթից է ամբարում մեղրը, այնպէս էլ իմաստութիւնը հանգչում եւ հաւաքուում է մաքուր խորհուրդներում, ինչպէս ասում է առակը. «Ես՝ իմաստութիւնս, բնակուեցի խորհուրդներում» (Առ 8.12), Չորրորդ, մեղուն իմաստութեամբ է գործում խաւար տեղերում, նախ բնակութիւնը պատերի վրայ հաստատելով եւ յետոյ մեղրը հաւաքելով, այսպէս էլ մեզ համար պատշաճ է գործնական առաքինութիւնը հաստատել եւ յետոյ ընդունել տեսականը, որովհետեւ գործնականը ընդունարան առիթ է տեսականի համար, ասում է փիլիսոփան¹⁰: Հինգերորդ, ծնողասէր են եւ առաջնորդին են յետեւում, ուր էլ որ գնայ, եւ նրան են հարում եւ նրա համար մեռնում, նմանապէս մենք էլ պէտք է մեր ծնողին՝ Քրիստոսին սիրենք, առնենք խաչը եւ մեր թագաւորի հետքերով ընթանանք եւ նրա համար մեռնենք հանապազ, եւ չբաժանուենք նրանից, ըստ Պօղոսի. «ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց եւ այլն» (Հռ 8.35): Վեցերորդ, իր տքնութեամբ իր արդիւնքից շատ է ամբարում, որպէսզի մարդկանց էլ տայ, այդպէս էլ մենք պարտաւոր ենք մեր հոգեւոր եւ մարմնաւոր արդիւնքից բաժին հանել կարօտեալներին, ինչպէս հաւատարիմ եւ իմաստուն տնտեսը, որին Տէրը կարգեց իր գերդաստանի վրայ՝ իր ժամին կերակուր տալու նրանց. «Երանի այն ծառային, որին, գալով, կգտնի այդպէս արած եւ այլն» (Մատթ 24.45): Եօթներորդ, խայթոցով պատերազմում է թշնամու դէմ, մենք էլ պարտաւոր ենք թշնամու՝ սատանայի դէմ պատերազմել, ինչպէս ասում է Պօղոսը. «մեր պատերազմը մարմնի եւ արեան հետ չէ, այլ իշխանութիւնների եւ չար ոգիների հետ» (Եփ 6.12), որի համար առէք հաւատի վահանը եւ յոյսի սաղաւարտը եւ Հոգու սուսերը, այսինքն խօսքը աղօթքով, ինչպէս խրատում է առաքեալը: Այդպէս է ասում նաեւ Դաւիթը. «նրա ճշմարտութիւնը որպէս գէնք քո շուրջ կլինի, դու չես վախենայ գիշերուայ զարհուրանքից եւ այլն» (Սաղմ 90. 5): Ութերորդ, ինչպէս որ մեղուն ոչ թէ սերմից է ձագ ծնում, այլ իր աշխատանքի արդիւնքում¹¹, այդպէս էլ վարդապետները պէտք է Աստծու խօսքի հոգեւոր զաւակներ անենան եւ նրանցով ուրախանան, ինչպէս որ մայրն է որդիներով բերկրում, ըստ Դաւթի (Սաղմ 112.9): Իսկ Յովհաննէսը գրում է կաթողիկէ թղթում. «Իմ ուրախութիւնն այն է, երբ լսում եմ, թէ իմ որդիները ճշմարտութեամբ են ընթանում» (Գ Յովի 1.4): Իններորդ, երկնաթռիչ է մեղուն, նոյնպէս եւ մենք պէտք է երկնաթռիչ լինենք՝ «վերինը խորհելով, ուր Քրիստոս նստած է Աստծու աջ կողմում», ինչպէս ասում է առաքեալը (Կող 3.2): Եւ դարձեալ ասում է. «մեր առաքինութիւնը երկնքում է» (Փիլ 3.20): Տասներորդ, մեղուն բնութեամբ անարիւն է, որը մենք պէտք է ստանանք կամքով, այսինքն պահքով եւ ծոնով, որովհետեւ նմանապէս, ցամաք հոգին իմաստուն է եւ առաքինի, ասում է փիլիսոփան, եւ վայրաքարշ մի՛ եղէք խոնաւ եւ ջերմ խառնուածքի առաւելութիւնից: Որովհետեւ մարգարէն ասում է. «Գիրացաւ, մեծացաւ, լայնացաւ Յակոբը, եւ թողեց իր Տէր Աստծուն» (Բ Օր 32.5), եւ թէ. իմ հոգին դրանց մէջ չի մնայ, որովհետեւ դրանք մարմին են» (Ծննդ 6.3): Դրա համար էլ Տէրը խրատում է. «զգույշ եղէք ձեր անձերի համար, զուցէ՛ ձեր սրտերը ծանրանան գեխութեամբ եւ հարբեցողութեամբ եւ յանկարծակի հասնի ձեր վրայ այն օրը, աղօթեցէք, որպէսզի կարողանանք զերծ մնալ այդ ամէնից եւ արժանի լինէք կանգնելու մարդու Որդու առաջ» (Ղուկ. 21.34): Այսքան այս մասին:

Հարց այն մասին, որ մարդկանց դէմքերը իրար նման չեն. ինչո՞ւ բոլոր մարդիկ նման դէմք չունեն, ինչպէս ասում է առակը. «Ինչպէս մարդկանց դէմքերը նման չեն իրար, այնպէս էլ նման չեն նրանց սրտերը» (Առ 27.19):

Պատասխան. Աստուած այս անձառ իմաստը նոյնպէս տնօրինեց, որովհետեւ շատ վնաս կլինէր, եթէ մարդիկ դէմքով տարբեր չլինէին: Նախ, ոչ ոք չէր ճանաչի իր հօրը կամ եղբորը, այլ ես քեզ հայր կճանաչեի, իսկ դու օտար մէկին՝ եղբայր, որից մեծ շփոթութիւն կառաջանար: Երկրորդ, հարազատ որդին չէր սեփականի հօր ժառանգութիւնը, այլ օտարը կհարստանար, իսկ իր որդին կտառապէր չքաւորութեամբ: Երրորդ, չէին ճանաչի անդրանիկ որդուն եւ կրտսերին եւ նրանց վիճակի փոփոխութիւն կլինէր, ինչպէս Յակոբը առաւ Եսաւի անդրանիկութիւնը, եւ Եփրեմը՝ Մանասէինը: Թէպէտ սրանք Աստուած տեսութեամբ եղան, իսկ մյուսները խաբկանքից կլինէին: Չորրորդ, մարդը չէր ճանաչի իր կնոջը, ոչ էլ կինը իր ամուսնուն կտարբերէր ազգակիցներից, եւ կլինէր անօրէն խառնակութիւն, ինչպէս Յուդայի եւ իր հարսի դէպքում, որովհետեւ չճանաչեց Թամարին (Ծննդ 38.15), ոչ էլ Ղովտը իր դուստրերին (Ծննդ 19.33): Հինգերորդ, եթէ մէկը գողանար կամ սպանէր, անմեղին կադատապարտէին, որը կատարեալ անօրէնութիւն կլինէր, կամ էլ պարտքը ոչ պարտապանից կպահանջէին, ինչպէս հիմա անիրաւները մէկ ուրիշի գրաւն են վերցնում: Վեցերորդ, ոչ պատուարժանները կմեծարուէին, ոչ էլ անպատիւներն ու անարգները կարհամարուէին, այլ սրանց հակառակը կլինէր, քանի որ չէին ճանաչի տիրոջն ու ծառային, ազատին ու անազատին, ինչպէս ասում են Շամիրամի մասին, երբ պատերազմում սպանուեց Արան եւ նրա նման մէկին մեծարեց, եւ ասացին, թէ աստուածները յարութիւն տուեցին: Եօթներորդ, չէին կարողանայ խոտանել եւ տարբերել մարդկանցից բարին ու չարը, սուրբը եւ անսուրբը, այլ կմիախառնէին անմեղին պղծի հետ եւ նրանց հոգիները խեղդամահ կանէին, որից զգուշացնում է առակը. «մի բնակուիր անզգամ մարդու հետ, որպէսզի չսովորես նրա ճանապարհները եւ քո հոգին խեղդամահ չանես» (Առ 22.25), իսկ Դաւիթ մարգարէն. «սուրբի հետ սուրբ ես լինում, ընտիր մարդու հետ՝ ընտիր եւ այլն»: Ութերորդ, չէր երեւայ բարեկամն ու թշնամին, սիրելին ու ատելին, եւ բազում սպանութիւններ եւ ատերածութիւններ կլինէին, որովհետեւ չէին զգուշանայ միմեանցից, ինչպէս Դատաւորների գրքում է ասում, երբ Գեղեոնը հնչեցրեց փողը եւ այլազգիները միմեանց սրի քաշեցին զիշերով: Իններորդ, նաեւ հոգեւոր հարցերում. փոքրերը մեծերի անունը իրենց վրայ կվերցնէին, ինչպէս Սիմոն կախարդը իր մասին ասում էր, թէ Քրիստոսն է, մինչեւ որ հանդիմանուեց Պետրոսից (Գործք 8.20), եւ սուտ առաքեալները ճշմարիտների կերպարանքով էին ցուցադրում իրենց, որովհետեւ չունէին նրանց տիպարը: Տասներորդ, բանական մարդը անբան կենդանուց էլ տգէտ կլինէր, որովհետեւ ամէն կենդանի ի բնէ ճանաչում է իրեններին եւ օտարներին, ըստ այնմ. արդար արագիլը միայն իր ծնողներին է կերակրում¹², եւ իր զուգակցից մենացած տատրակը ուրիշի հետ չի զուգաւորում, եւ չորքոտանիները իրենց ծնունդներին են միայն կերակրում եւ խնամում: Այսքան այս մասին:

Հարց առաքինի կնոջ գովութեան մասին. ինչո՞ւ է ասում. «առաքինի կին թէ գտնուի, այդպիսին թանկ է բոլոր գոհարներից» (Առ 31.10)

Պատասխան. Որովհետեւ իր ամուսինը պայծառ քարերը նրան զարդարելու համար է բերում, եւ նման կինը թանկ է բազում պատճառներով, որ այստեղ թւում է մէկ առ մէկ: Նախ, ասում է, «գործակից է լինում ամուսնուն բարիքների եւ ոչ թէ չարիքների մէջ» (Առ 31.12), այսինքն խրատում է նրան աղօթել Աստուծուն, ողորմել աղքատներին, ունենալ սէր բարեկամների հանդէպ, խաղաղութիւն դրացիների հետ: Երկրորդ, «ամուսնու սիրտը վստահ է նրա հանդէպ» (Առ 31.11) երկու բանի շնորհիվ. այսինքն նրա սրբութեան եւ տնարարութեան շնորհիվ: Երրորդ, կարգաւորում է նաժիշտներին՝ ամենքին իր գործին դնելով, ինչպէս ասում է. «Ուտքի է ելնում արշալոյսին, տնեցիներին կերակուր է տալիս եւ գործի է դնում նաժիշտներին» (Առ 31.15): Չորրորդ, ոչ միայն ուրիշներին է գործ տալիս, այլեւ ինքն է աշխատում եւ գործում ձեռքերով. մանում է կամ ոստայնում, ինչպէս ասում է. «նա թելերը մխրճում է գործի մէջ եւ ճաշակում է աշխատանքի քաղցր հաճոյքը» (Առ 31.17): Հինգերորդ, իր առաւել ժրութեան շնորհիւ ոչ միայն ցերեկն է գործում, այլեւ գիշերը, ինչպէս ասում է. «ողջ գիշերն էլ չի հանգչում նրա ճրագը» (Առ 31.18), այլ լոյս է տալիս անդադար: Վեցերորդ, հեռուից էլ է հաւաքում հարստութիւն, ինչպէս ասում է. «բուրդ եւ կտաւ ձեռք բերելով՝ իր ձեռքով պիտանի հանդերձներ է պատրաստում եւ վաճառում, եւ լինում շահութաբեր նաւի նման» (Առ 31.13): Եօթներորդ, արիաբար նաեւ տղամարդու գործ է կատարում, այսինքն շինելով եւ հողը մշակելով, ինչպէս ասում է. «Իր մէջքին պինդ օգտի կապած» (Առ 31.17), որովհետեւ գօտին արիութիւն է նշանակում: «Թէ գեղեցիկ հանդ է տեսնում, ասում է, գնում է այն, եւ իր ձեռքի վաստակով մշակում է հողը» (Առ 31.16): Ութերորդ, հագուստ է պատրաստում իր եւ ամուսնու եւ ողջ ընտանիքի համար եւ կարիք չեն զգում հագուստ գտնելու, ինչպէս ասում է. «նա բեռեզ եւ ծիրանի է գործել ամուսնու համար եւ իր համար՝ ծածկոցներ եւ իր հետ եղողները կրկնակի հագուստներ են հագել» (Առ 31.21): Այստեղ պէտք է գիտենալ, որ կնոջը հատուկ գործը մանելն ու ներկելն է, դրա համար էլ ասում է. բուրդ եւ կտաւ գտնելով՝ հագուստներ պատրաստեց, եւ բեռեզ եւ ծիրանի է ասում, որ գոյների տարբեր որակներ է նշանակում: Իններորդ, պարզերես է անում իր

ամուսնուն, ինչպէս ասում է. նրա ամուսինը յայտնի մարդ է դրսում, երբ նստում է ժողովրդի եւ ծերերի մէջ, երկու պատճառով. առաջին, հագուստների պայծառութեան, բեհեզի՝ որը սպիտակն է, եւ ծիրանին, որը թագաւորական է, եւ երկրորդ, կնոջ սրբութեան պատճառով, որ ամուսնու պարծանքն է, ինչպէս ուրիշ տեղերում ասում է. «Առաքինի կինը իր ամուսնու պարծանքն է» (Առ 12.4): Տասներորդ, համակամ է իր ամուսնուն եւ միախորհուրդ, ինչպէս ասում է. «մարդու ճանապարհները իր երեսի առաջ են եւ ոչ չարերի նման, որ երկմիտ են միմեանց նկատմամբ» (Առ 31.31), եւ «ինքն իր մէջ բաժանուած տունը աւերում է» (Մարկ 3. 25), իսկ սրանք կեանքի ճանապարհով միաբան են ընթանում ամէն գործի մէջ, որի համար յաջողութիւն են ունենում յաւիտեանս յաւիտենից: Այսքանը գովութիւն է մարմնաւորի մասին:

Հոգեւոր բաներում էլ պատուական է առաքինի կինը բազում պատճառներով: Նախ, այդպիսի կինը ողորմած է աղքատների հանդէպ, կերակուր է տալիս քաղցածներին եւ հագուստ՝ մերկերին, ինչպէս առակն է ասում. «նրա ձեռքը բաց է աղքատների համար եւ նա բաժին է տալիս խեղճերին» (Առ 31.20): Երկրորդ, տարածամ աղօթում է եւ նոյն գործի մէջ տքնում, ինչպէս ասում է առակը.

«դատարկապորտութեամբ հաց չկերաւ» (Առ 31.27): Ղատարկապորտութեան հացը նախ, այն է, որ ուրիշների հացն է ուտում, երկրորդ, այն է, որ շատ է ուտում կամ անընդհատ է ուտում եւ անգործ մնում, երրորդ, այն է, որ առանց աղօթքի է ուտում: Իսկ սա իր վաստակն է ուտում եւ նախ ուրիշներին է կերակրում, նաեւ հանապազ աղօթում, ինչպէս ասում է. «Ձեռքը միշտ իր օգտին մեկնած» (Առ 31.19), այսինքն աղօթքի մէջ բարձրացրած: Երրորդ, իմաստուն է եւ չափաւոր խօսքի մէջ, ինչպէս ասում է.

«չափով է իմաստութեամբ է բացում իր բերանը եւ սահման է դնում իր լեզուին» (Առ 31.26), քանի որ կանանց սեռը խիստ շատախօս եւ շաղակրատ է, որի պատճառով Պօղոսը սաստում է կորնթացիներին.

«կանայք թող լուռ մնան» (Ա Կոր 14.34): Իսկ սա գիտէ խօսքով մեղանչելու մասին, դրա համար էլ չափաւոր է խօսքում, քանի որ «ով խօսքով չի մեղանչում, նա կատարեալ մարդ է» ասում է Յակոբոսը (Յակ 3.2), եւ Տէրը. «ամէն դատարկ խօսքի համար հաշիվ պիտի տաք, ասում է, դատաստանի օրը» (Մատթ 12.36): Չորրորդ, ասում է. «Պարկեշտ են նրա տան ճանապարհները, այսինքն չարերն ու անբարոնները ատելի են նրան եւ նրան ընկերակից չեն, այլ պարկեշտներն ու բարիները, որ նման են իրեն. նրանց է սիրում եւ նրանց հետ նստում:

Հինգերորդ, իր որդիներին ու իր ընտանիքին խրատում է սուրբ եւ օրինապահ լինել, ամէն ինչով գեղեցիկ, ինչպէս ինքը, որի համար ասում է. «իր բերանը բացում է հանճարով եւ օրէնսդրութեամբ» (Առ 31.26): Վեցերորդ, նրա բարութեան համար Աստուած խնամում է նրա զաւակներին եւ նրա տունը, ինչպէս ասում է. «Իր ողորմածութիւնները ոտքի են կանգնեցնում իր որդիներին եւ մեծացնում» (Առ 31.28), որի համար երեք մանուկները հայրերի առաքինութիւններն էին յիշում, որ ունէին առ Աստուած, ասելով. «հանուն Աբրահամի եւ Իսահակի եւ քո սուրբ Իսրայելի ողորմիր մեզ» (Ղան 3.35): Իսկ Սողոմոնին Աստուած ասում է. «Եթէ չլինէր իմ ծառայ Ղաւիթը, քո թագաւորութիւնը կպատառէի քո օրերում» (Գ Թագ 11.11): Եօթներորդ, այդպիսի կնոջը գովում է նրա ամուսինը ասելով.

«Շատ դուստրեր հարստութիւն ձեռք բերեցին, շատերն էլ առաքինութիւն գործեցին, բայց դու գերազանցեցիր նրանց եւ անցար բոլորից» (Առ 31.29), այսինքն նրանք որոշ առաքինութիւններ ունէին եւ որոշներ՝ ոչ, որովհետեւ եթէ առաքինի էին, տնարար չէին, իսկ տնարարները ծուլանում են առաքինութեան հարցերում: Իսկ դու հոգեւորն ու մարմնաւորը կատարելապէս ունես. տնարարութեւնը, ինչպէս ասացինք, նաեւ աղքատասիրութիւնն ու համեստութիւնը եւ մնացած բոլորը: Ութերորդ, ասում է.

«Քո մէջ կանացի կեղծ բարեհաճութիւն չկայ, եւ ոչ էլ սին գեղեցկութիւն» (Առ 31.30): Կեղծ բարեհաճութիւն եւ սին գեղեցկութիւն է ասում երկու պատճառով. նախ, որովհետեւ հանկարծակի է նրա վրա փչում մահուան քամին եւ այլեւս չի գտնուի նրա տեղը, ասում է Ղաւիթը (Սաղմ 36.10), եւ երկրորդ, ինչպէս սուտ խօսքը պաճուճագարդ է երեսում, բայց անպտուղ է, նոյնպէս էլ կինը, որ միայն երեսն է զարդարում վրայից, եւ ինքը գարշելի է եւ ստախօս, եւ սատանայի թակարդ է այդպիսի կինը՝ մարդկանց դէպի կորուստ տանող: Նրանց չեն գովում մարդիկ եւ չի օրհնում Աստուած, այլ, ինչպէս ասում է,

բարեպաշտ եւ իմաստուն կինը կօրհնուի, այսինքն Աստուած եւ մարդկանցից, ինչպէս ասացինք (Առ 31.30): Իններորդ, «նա գովում է Աստուծոց երկիւղ կողմերին» (Առ 31.31), այսինքն ոչ միայն ինքն է բարեպաշտ եւ երկիւղած, այլ իր նմաններին է գովում եւ բարեբանում, մինչդեռ նախանձոտներն ու չարասիրտները ծածկում են ուրիշների գովութիւնը եւ չարախօսում նրանց: Տասներորդ, ասում է.

«պատիւ տուեք նրա շուրթերի պտղից եւ թող գովաբանուի նրա ամուսինը դռների մէջ» (Առ 31.31), այսինքն դուք էլ, երկիւղածներ, որ նրա շուրթերից գովասանք ընդունեցիք, փոխարէնը գովեցէք նրան, որովհետեւ գովելի են գեղեցիկները¹³, ասում է իմաստասէրը. նրա հետ եւ իր ամուսնուն, որ նրա գլուխն է, գովեցէք թագաւորների դռների մէջ եւ քաղաքների հրապարակներում: Այսքանը բարեպաշտ կնոջ գովութեան մասին:

Չար եւ վատ եւ անարգ կանանց պարսաւանքի մասին

Շատ խօսքերով էլ պարսաւանք է տալիս չար եւ վատ եւ մոլի կանանց: Նախ, «մի նայիր չար կնոջը, քանի որ մեղր է կաթում նրա շուրթերից, բայց վերջում աւելի դառն է լինում, քան լեղին» (Առ 5.3), այսինքն կնոջ քաղցրապատիր խօսքը հեշտութեամբ է տանում դէպի չար գործը եւ գործից յետոյ մարդը շուտ կամ ուշ կչարչարուի եւ կդառնանայ խղճմտանքից եւ մարմնի զագրութիւնից, ինչպէս Ամոնին պատահեց (Բ Թագ 13.15): Երկրորդ, ասում է. «Երկսայրի սուր է սպանող» (Առ 5.4), այսինքն չար կինը մարմինը այստեղ է սպանում, իսկ հոգին՝ հանդերձեալ կեանքում, ըստ այնմ. «Հեռու մնա նրանից, քանի որ քո կեանքը կմատնես օտարներին» (Առ 5.9), այսինքն մանկան սէրը քեզ կկապի իր հետ, եւ դրանով կտանի քո ունեցուածքը: Զորրորդ, ասում է. «Մի՛ գնա օտարի կնոջ մօտ, որ քոնը չէ» (Առ 5.20), քանի որ նրանք որսում են դէպի կորուստ կամ դէպի մահ՝ դատաւորներից, կամ դէպի յաւիտենական տանջանքը: Հինգերորդ, ասում է. «պահիր քեզ ամուսնացած կնոջից» (Առ 6.24), որով կմատնուես Աստծու դատաստանին եւ նրա ամուսնու սրին եւ դատաւորների պատժին: Վեցերորդ, «պոռնիկ կնոջ գինը մի նկանակ հացի չափ է», ասում է, քանի որ դիւրին է պոռնիկների կապանքը: Եօթներորդ, ասում է. «չար կինը որսում է պատուական մարդկանց հոգին» (Առ 6.26): Ութերորդ, ասում է. «Կինը ընդառաջ է գալիս պոռնկական կերպարանքով եւ մոլորացնում նրան, եւ նա գնում է կնոջ յետեւից, ինչպէս արջառը՝ սպանադնոց, կամ շունը՝ դէպի տուն» (Առ 7.10): Իններորդ, ասում է. «չատերին դիպաստ է արել, եւ անթիւ են կնոջից սպանուածները» (Առ 7.26): Տասներորդ, ասում է. «դժոխքի ուղիներն են նրա տունը, որոնք տանում են դէպի մահուան շտեմարանները» (Առ 7.27), որովհետեւ ինչպէս ճանապարհը դէպի քաղաք է տանում, պոռնիկ կինն էլ՝ դէպի դժոխք եւ յաւիտենական մահ: Տասնմէկերորդ, ասում է. «Անզգամ եւ յանդուգն կինը հացի կարօտ կլինի» (Առ 9.13): Տասներկուերորդ, ասում է. «նստում է իր տան դռները եւ ասում անմիտ անցորդներին. ով ձեր մէջ առաւել անմիտ է, թող գայ ինձ մօտ» (Առ 9.15): Տասներեքերորդ, «պակասամիտներին ասում է. թաքցրած հացը համով է ուտուում եւ քաղցր է խմում գողացուած ջուրը» (Առ 9.17): Տասնչորսերորդ, ասում է. «երկրածինները պիտի կորչեն նրա մօտ» (Առ 9.18): Տասնհինգերորդ, ամուսնացած չար անբարոյ կանանց մասին ասում է. «անարգութեան աթոռ է այն կինը, որ ասում է իրաւունքը» (Առ 11.16), որովհետեւ շատախօսում է միշտ եւ անկարգ եւ անարգ աթոռ է իր անհանգիստ ամուսնու համար: Տասնվեցերորդ, «Ինչպէս ոսկէ գինդը խոզի դնչին, նոյնպէս էլ գեղեցկութիւնն է չարաբարոյ կնոջ համար» (Առ 11.22), նախ, որովհետեւ մեղքերի աղբի մէջ է թաւալում, երկրորդ, որովհետեւ գեղեցկութիւնը անպատշաճ է այդպիսի կնոջը, երրորդ, բարքով ատելին այդ գեղեցկութեամբ սիրելի չի լինի: Տասնօթներորդ, ասում է. «Ինչպէս որդը վնասակար է փայտին» (Առ 25.20), նոյնպէս չարագործ կինը կորստեան է մատնում ամուսնուն: Տասնութերորդ, ասում է. «Իմաստուն կանայք շինում են իրենց տունը, իսկ անզգամները իրենց ձեռքով են կործանում դրանք» (Առ 14.1): Տասնիններորդ, ասում է. «ով շնաբարոյ կին ունի, անմիտ է եւ լկտիութեան պատճառով է բոզանոց գնում» (Առ 18.22): Քսաներորդ, շուն կինը լուացւում է եւ ասում. անօրէնութիւն չեմ գործել: Քսանմէկերորդ. «քո հարստութիւնը մի՛ տուր կանանց եւ ոչ էլ քո միտքն ու կեանքը՝ յետին խորհուրդների» (Առ 31.3): Քսաներկուերորդ, «ինչպէս կաթիլը մարդուն հանում է իր տանից այնպէս էլ անզգամ կինն է իր տանից հանում ամուսնուն» (Առ 27.15)

Այսքանը առակաց գրքի մասին: Վերջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին՝ առակների եւ օրինակների մասին: Որ գրքերի չափը չորսն է լինում:

Երկրորդ՝ իմաստութեան եւ հանճարի մասին, խօսքի դարձուածքները ընդունելու մասին:

Հանճարեղը առաջնորդութիւն ստանայ: Ուսման օգուտի մասին՝ տասը զլխով:

Երրորդ՝ երկիւղի մասին: Որդեակ, խրատ լսիր: Իմաստութիւնը գովաբանում է ճանապարհների վրայ: Սրբիկի նման է մահը, եւ այն, որ ձեր սատակման օրը ձեզ չեմ լսի, եւ Դաւիթը ասում է. ինձ կկանչես եւ կլսեմ քեզ: Տնտեսի մասին: Ձղջման մասին այստեղ կայ:

Զորրորդ՝ որդեակ է անուանում: Ովքեր թողնում են ճանապարհները եւ մանկութեան ուսումը:

Չեն ապրելու իրենց կեանքի տարիները: Ողորմութիւն եւ հաւատք: Պատուի Տիրոջը քո ինչքից: Եւ իմաստութեան մասին:

Հինգերորդ՝ Աստուած իմաստութեամբ դրեց հիմքերը: Մի յապաղիր օգնել աղքատին:

Անբարիչների կերակուրները: Պահիր քո սիրտը: Աջ եւ ձախ խոտորումը: Ձղջալու չորս պատճառները: Ջուր խմիր քո ամանից: Ինչու՞ է պոռնկութիւնը խոտելի:

Վեցերորդ՝ երաշխաւորներ եւ սուտ վկաներ: Պոռնկական դեմք: Սիրում եմ նրանց, որ սիրում են:
Հարստութեան մասին տասը գլխով: Տէրը ինձ ստացաւ իր ճանապարհների սկզբում:

Եօթներորդ՝ Իմաստութեան տունը: Մորթուած անասունների եւ սեղանի մասին: Ծառաների
միջոցով կանչելու մասին տասը գլխով:

Ութերորդ՝ Հարստութեան շահն ու վնասը: Աղքատութեան եւ հոգեւոր հարստութեան մասին: Ով
ողորմում է, փոխ է տալիս Աստծուն տասը տասը գլխով:

Իններորդ՝ Գինու եւ հարբեցողութեան մասին տասը տասը գլխով: Մեծ եւ փոքր կշիռքի մասին
տասը գլխով: Համբերութեան մասին տասը գլխով:

Տասներորդ՝ Թագաւորների եւ պատերազմի մասին: Ենթակաների մասին: Թէ մեղաւորների երեք
դասեր կան: Ճանապարհորդների մասին տասը գլխով:

Տասնմէկերորդ՝ Անդաստան եւ այգի է մարդը տասը գլխով: Վատոգիների նախատինք, ովքեր
ծոյլ են տասը գլխով:

Տասներկուերորդ՝ Տգրուկը եւ նրա դուստրերը տասը գլխով: Այստեղ կանգ է առնում Առակների
գրքի երրորդ փոխը եւ կայ գովութիւն իմաստութեան տասը գլխով: Իմաստութիւնը մեղր է եւ
վարդապետներ տասը տասը գլխով:

Տասներեքերորդ՝ Դեմքերի չնմանուելու մասին տասը գլխով: Առաքինի կինը տասը տասը գլխով:
Վատ կանանց մասին քսաներկու վկայութեամբ: